

ISSN 1829-2003

ԿԱՆՈՉՔ



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՄՔՏԱՐԱԳԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԳՐԱՍ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

DUTY OF SOUL

N 8

2013



Սարգիս Իսրայելյան
ԷՋԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԻՑ



էջ 1

Արմեն Տեր-Ստեփանյան
ՎԻՍԱԳՐԵՐԸ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՋԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Յամի երթնչարիտերորդի ջառաններ
որդի ութերորդի թուաբեր ութնչայոց՝
աարտեցար յեկն ութն երջան ի կնչաչ
տակին յովբայ յայ լայլ յալ ժամանակ և
տեղի ջանազան գրչաբ ի գառառիս կիղի
կեցոց հոռոյ յանառի կիղի և կաբար ճրկո
կեցեալ ի դառնագոյն ժամանակ յորում
յոյժ զգոյ մը յանառի կեաց: որքառգտեք
ի սմանե զերան տառոս և զաբխատեալս
ամա յիշեցրիտր և դուքին յիշիք բարիապ
հեղոյն յաբտեան:

էջ 16

Սամվել Կարադեյան
ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԵՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ



էջ 45



N 8

2013

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Editor-in-chief
SAMVEL KARAPETIAN

ԽՄԲԱԳՐԱՎԱԶՄ
ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

խմբագիր Editor
EMMA ABRAHAMIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

խմբագիր-սրբագրիչ
Proof-reader (Armenian text)
HASMİK HOVHANNISSIAN

ԳԱՅԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Թարգմանիչ Translator
GAYANE MOVSISSIAN

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՁԱՅԻՆ ՋԵՎԱԿՈՐՈՂ
Designer
ARMEN GEVORGIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03U089223

ՏՐՎԱԾ 13.10.2010

Certificate No. 03U089223
Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿԱՄՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Responsible for this issue
SAMVEL KARAPETIAN

ՏՊԱԳՐՎԵԼ Է
«ԲՅՈՒՐԱԿՆ» ՀՐԱՏԱՐԱՎԳՁԱՏԱՆԸ

Printed by
BYURAKN Publishing House

ՏՊԱՔԱՆԱԿԸ՝ 1000

Number of copies: 1000

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24Գ

Baghramian 24g, Yerevan, RA

<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>

✉ raayer@sci.am

☎ 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
© Research on Armenian Architecture

ԷՋԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԻՑ

Սարգիս Իսրայելյան

Սկզբը՝ «Վարձք» № 6-ում

Թիֆլիսում

Նիժում մեր պաշտոնավարության վերջին տարին է: Ես Թիֆլիսում և՛ պաշտոնավարում եմ, և՛ բուժվում: Ուսումնական տարին վերջանալուց հետո Մարոն երեխաների հետ ճանապարհվում է դեպի Թիֆլիս: Նիժից մինչև Լյաքի երկաթուղու կայարան 46 վերստ է: Ճանապարհն անցնում է մի քանի գետերով, որոնցից ամենամեծը Թյուրգանն է: Գարնան վերջն է, սարերի ձյունհալոցից գետերը վարարել, ափերից դուրս են եկել: Մի երիտասարդ կին երկու փոքրիկներով կառքով անցնում է Թյուրգանով: Թե ինչպես է լինում, գետի մեջտեղում կառքը ծովում է, և տղաս՝ Ռաֆիկը, ընկնում է գետը: Երևակայում եք մոր վիճակը. գրկած երեխայի՞ն փրկի, թե՞ խեղդվողի հետևից ընկնի: Մարոյի լացն ու ճիչը լսելով՝ գետի ափին՝ բրնձի դաշտերում աշխատող գյուղացիները վազում և փրկում են Ռաֆիկին:

Երբ Մարոն երեխաներով եկավ Թիֆլիս, մենք ստիպված եղանք բնակարան վարձել և բնակություն հաստատել Թիֆլիսում: Ի՞նչ անել, իմ աշխատավարձը քիչ է ապրուստի «մինիմումի» համար: Մինչև ուսումնական տարվա սկիզբը դեռ երեք ամիս ունենք: Նրանից հետո էլ անհայտ է: Որոշում ենք ամառանոց գնալու մասին չմտածել, մնալ Թիֆլիսում: Պետք է եկամտի մոր աղբյուր փնտրել: Եվ դա գտնվեց՝ մասնավոր դասեր: Մարոն ուներ չորս աշակերտ, որոնց պատրաստում է գիմնազիա ընդունվելու համար: Ցարական կառավարության օրոք առաջին պատրաստական բաժանմունք ընդունվելու համար պետք է լավ իմանան ոչ միայն ռուսաց լեզուն, այլև գրել, կարդալ և թվաբանության չորս գործողությունը մինչև 100-ը:

Իսկ մեր Ռաֆիկին դպրոց տալն ինձ համար պրոբլեմ էր դարձել: Նիժում նա արդեն 6-7 տարեկան էր: Այնտեղ մենք բնակվում էինք դպրոցական շենքում: Ռաֆիկը միշտ մոր հետ դասարաններում էր լինում: Նա սենյակում չէր մնում, իսկ եթե խաղի հետևից ընկած ուշանում էր մոր հետ դասարան մտնել, մոտենում էր դասարանների դռներին և ականջ դնում: Որ դասարանում մոր ձայնն էր լսում, վստահությամբ մտնում էր և նստում առաջին նստարանին: Երեխաները դպրոցում ոտանավոր էին սովորում, երգեր երգում, բայց Ռաֆիկն այդ

չորս-հինգ տարվա ընթացքում ոչ մի ոտանավոր չսովորեց ոչ ռուսերեն, ոչ հայերեն, ոչ էլ երգ: Այդ ինձ համար կատարյալ ողբերգություն էր դարձել: Ի՞նչ պիտի անեմ ես, եթե Ռաֆիկը լինի բթամիտ:

–Երկրորդ Ղարիբջանյան Արտաշեսն է լինելու մեր տղան, Մարո՛ ջան, ի՞նչ պիտի անենք:

–Այ մարդ, ի՞նչ ես այդքան հուսահատվել,– ասում էր կյանքի նկատմամբ այդքան լավատես, հավատով լի իմ լավ Մարոն, իմ աննման Մարոն,– դեռ երեխա է, կբացվի, մի տես ի՞նչ տղա պիտի լինի, մատով պիտի ցույց տան իմ բալիկին:

Թեև Մարոն ինձ հուսադրում էր, նույնիսկ նախատում, բայց իմ ուղեղից դուրս չէր գալիս Ավանի Ղարիբջանյան Արտաշեսը:

Եկավ օգոստոսի 25-ը, Մարոյի չորս աշակերտներն էլ ընդունվեցին Թիֆլիսի արական երրորդ գիմնազիա:

–Կարող ես շնորհավորել, Սերգո՛ ջան, Ռաֆիկն ընդունվեց գիմնազիա,– ասում է Մարոն:

–Չէ՛, չէ մի, դու ասացիր, ես էլ հավատացի:

–Անկեղծ եմ ասում, Սերգո՛ ջան, հանաք չեմ անում, Ռաֆիկն արդեն գիմնազիայի աշակերտ է:

–Չեմ հավատում, ախր ինչպե՞ս:

–Այ այսպես,– պատմում է Մարոն,– երբ ես պարապում էի աշակերտների հետ, Ռաֆիկն էլ էր մասնակցում: Սկզբում ես ուշադրություն չէի դարձնում, որովհետև յոթ տարին նոր էր լրանում, բայց նա շարունակ ներկա էր լինում պարապմունքներին, իսկ հաճախ էլ ուղղում էր աշակերտների սխալ պատասխանները: Հետզհետե ես նրան էլ մասնակից դարձրի մեր պարապմունքներին: Լավ գիտեր թե՛ ռուսերեն և թե՛ թվաբանություն: Կարո՞ղ ես երևակայել, նա քննությունը բոլորից հաջող տվեց:

Իմ ուրախությանը չափ ու սահման չկար: Ուրեմն Մարոն ճիշտ էր:

Ռաֆիկը ռուսական գիմնազիայում քիչ սովորեց: 1917 թվականի Փետրվարյան հեղափոխության օրերին Թիֆլիսի արական երրորդ գիմնազիան ազգայնացվեց և դարձավ հայկական, քանի որ աշակերտության 90 տոկոսը հայ էր: Նա հայկական դպրոցում լավ էր սովորում: Մի երկու տարուց հետո արդեն հայերեն ոտանավորներ էր գրում: Հայոց լեզվի ուսուցիչը բանաստեղծ Վահան Միրաքյանն էր՝ «Լավարի որսը» գրքի հեղինակը: Երբ նա, թողթը ձեռքին, ժպտալով ներս էր մտնում ուսուցչանոց, ընկերները կռահում էին. «Հը՞, Ռաֆիկն էլի ոտանավո՞ր է գրել»:

Եվ Վահան Միրաքյանը ուսուցչանոցում կարողում էր տղայիս գրած նոր ոտանավորը՝ «Չղջիկ» վերնագրով:

Յերեկն եկավ,
Գիշերն եկավ,
Ու այսպես էր նա անում,
Ամբողջ գիշեր խաղ անում:

Ափսոսում ենք, որ նրա գրած գողտրիկ և շատ ախորժալուր բազմաթիվ ոտանավորներից և ոչ մեկը չի մնացել: Սրանից էլ հիշում են առաջին և վերջին երկու տողերը:

Վահան Միրաքյանը մեծ հույսեր էր կապում Ռաֆիկի հետ, բայց դրանք չարդարացան: Նա ճարտարապետ դարձավ: Այս գործում գուցե ես էլ որոշ չափով իմ մեղքն ունեմ: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Ռաֆիկն ուսումը շարունակելու համար մտել էր Թիֆլիսի գեղարվեստական ակադեմիա: Մի տարի սովորելուց հետո ակադեմիան իր ուսանողներին էքսկուրսիա է ուղարկում Լենինգրադ, որոնց թվում էր և Ռաֆիկը: Նա, տեսնելով Լենինգրադի ճարտարապետական ինստիտուտի ուսանողների աշխատանքները, որոշում է սովորել այդտեղ և հեռագրում է ինձ՝ ուղարկել Գեղարվեստական ակադեմիայում գտնվող փաստաթղթերը: Ես ուղարկում եմ անմիջապես, որով և որոշվում ու վճռվում է նրա հետագա աշխատանքի ասպարեզը:

Ռաֆիկն ազգայնացված, բայց այժմ համար 72 դպրոցում շարունակում է իր գրած ոտանավորներով ուրախացնել ուսուցիչ Վահան Միրաքյանին:

Թիֆլիսի հայ մտավորականությունը պատրաստվում էր տոնելու Աթաբեկ Խնկոյանի գրական գործունեության 35 ամյակը: Վահան Միրաքյանը Ռաֆիկի՝ Խնկոյանին նվիրված ոտանավորներից մեկը ներկայացնում է հորեյանական հանձնաժողովին: Որոշվում է գրական բաժինը բաց անել այդ ոտանավորով, ընդ որում, այն պիտի արտասանի ինքը՝ հեղինակը: Մարոյի ուրախությանը չափ չկար: Նա հատուկ այդ օրվա համար նոր շոր է կարում Ռաֆիկի համար: Երեխային հանձնում ենք Ստեփան Լիսիցյանին: Մենք դահլիճում ենք: Ահա պիտի սկսվի գեղարվեստական բաժինը: Ստեփան Լիսիցյանը մեզ ձեռքերով հասկացնում է, թե ո՞ր է Ռաֆիկը: Պատասխանում ենք, որ բեմում է: Դեմ Ռաֆիկ, դեմ Ռաֆիկ, Ռաֆիկ չկա: Մենք անհանգստանում ենք, Մարոն արցունքները հազիվ է պահում: Ռաֆիկը ո՛չ բեմում է, ո՛չ մեզ մոտ: Ո՞ր պիտի լինի: Ծիշում ասած, ես էլ եմ անհանգստ, բայց վրդովմունքս զսպում եմ. չեմ ուզում ցույց տալ Մարոյին:

Գեղարվեստական բաժինը բացված է: Ռաֆիկը չկա: Երևակայո՞ւմ եք մեր վիճակը: Ստեփան Լիսիցյանը չզիտեմ ինչ նպատակով (Ռաֆիկին փնտրելու՞, թե՞ մի այլ պատճառով) անցնում է կուլիսներով և ի՞նչ տեսնի. Ռաֆիկն այնտեղ է:

–Այ տղա, էդ ո՞ր ես, մեռանք քեզ ման գալով: Դե՛, արի՛, արի՛:

Ռաֆիկը բեմում է: Նա հազիվ է երևում, կարմրած, փքված, պատրաստ հոնգուր-հոնգուր լաց լինելու:

«Ահա եկավ Խնկո պապը,

Շալակն առած առակների մեծ պարկը...»,- արտասանում է սահուն, արտահայտչական շեշտով:

Ոտանավորը վերջացավ: Դահլիճը ծափահարում է: Ռաֆիկը շփոթվել է, չզիտի ինչ անի: Լավ է, Աթաբեկը գրկում, համբուրում է, «ասրես» ասում և ճանապարհ դնում: Ես նրան տարա Մարոյի մոտ: Նա նետվեց մոր գիրկը:

1917 թվականն է: Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխություն: Միտինգներ, միտինգներ ու միտինգներ: Առաջ են եկել հազար ու մի տեսակ գույնի, հազար ու մի տեսակ կազմակերպություններ, միություններ:

Մայիսի սկզբներին տեղի ունեցավ Հայ ուսուցչական համագումարը, որին մասնակցում էին հարյուրից ավելի պատգամավոր ուսուցիչներ, ինչպես նաև մի շարք անվանի մանկավարժներ՝ Իսահակ Հարությունյան, Ստեփան Լիսիցյան, Հովհաննես Տեր-Միրաքյան, Արամայիս Երզնկյան, Սարգիս Խանոյան, Սարգիս Աբովյան, Սիրական Տիգրանյան, Տիգրան Մուշեղյան և այլք: Օրակարգում դրված էին շատ հարցեր, այդ թվում՝

- 1) Ուսուցչական միության կազմակերպում.
- 2) Զինվորագրությունից ուսուցիչների ազատում.
- 3) Օտարախոս դպրոցներ.
- 4) Չրի և պարտադիր ուսում.
- 5) Դպրոցների ազգայնացման խնդիրներ և այլն:

Մասնակցելով համագումարին իբրև պատգամավոր՝ միևնույն ժամանակ ես ռեպորտաժներ եմ գրում «Հորիզոն» թերթին (այդ ժամանակ «Սուրհանդակ» թերթը գոյություն չուներ այլևս): Դրանցից ինձ մոտ մնացել է միայն մեկը (1917 թ. № 99, մայիսի 14): Խոսում եմ համագումարի մասնակիցների, օրակարգի և այլ հարցերի մասին: Այդ օրերին զուգընթաց համագումարներ էին տեղի ունենում Երևանում, Կարսում և Ալեքսանդրապոլում: Ես գրում եմ նաև այդ մասին: Թիֆլիսի համագումարի պատգամավոր Ս. Խոնդակյանը գտնում է, որ այդ քաղաքներում գումարված հայ ուսուցիչների ժողովներն իրավասու չեն կարող լինել համայն ուսուցիչների անունից որոշումներ ընդունելու:

Ցավոք սրտի, համագումարի նիստերի աշխատանքների մասին ոչինչ չեմ կարող ասել, ինչպես վերևում ասացի, ձեռքիս տակ չունենալով ոչ մի նյութ: Իսկ հիշողությունս ինձ դավաճանում է: Միայն այսքանը կարող եմ ասել, որ մինչև Հայ ուսուցչական համագումարն իր նիստերում օրակարգի հարցերն էր քննարկում, Անդրկովկասյան հա-

տուկ կոմիտեն (ՕՅԿ), որի ձեռքն էր անցել երկրի կառավարության ղեկը, կանոններ էր մշակում տեղում վարչական մարմիններ ստեղծելու համար: Կազմվել էր հատուկ հանձնաժողով, որին մասնակցում էր և Արամայիս Երզնկյանը: Վարչական մարմիններ ընտրելու համար 3-5 հոգուց բաղկացած խմբեր էին կազմվում: Նույնպես գավառի համար Արամայիս Երզնկյանը տվել էր իմ թեկնածությունը, քանի որ ես երկար տարիներ պաշտոնավարել եմ այդ գավառում:

Հունիսի սկզբին արդեն տեղում էր չորս հոգուց բաղկացած մեր խումբը՝ երկու հայ և երկու ադրբեջանցի (ես, Մելիսակ Ջարգարյանը, Ալիևը և Հաջիևը): Մենք պետք է շրջեինք հայկական և ադրբեջանական գյուղերով և տեղում ղեկավարեինք վարչական մարմինների ընտրությունները: Նույնպես գավառը բաժանեցինք չորս մասի:

Ինձ բաժին ընկած շրջանը վերջանում էր Կախավանով, որտեղ Մեղաբաշ և Կախբաշ գյուղերում պետք է անցկացնեի ընտրություններ:

Կախավանի իմ հին բարեկամները շատ ուրախացան, հոգաբարձության նախագահ Մանասե Մուրադյանի գլխավորությամբ ընդունելություն կազմակերպեցին:

Ովքե՞ր են ընտրվում գյուղը ղեկավարելու համար: Նույն հարուստները, նույն կուլակները: «Այս ի՞նչ ենք անում մենք, մտածում եմ ես: Ի՞նչ կարող եմ անել, ազատ ընտրություններ են»:

Ընտրությունը դարձյալ հին ձևով է: Գաղտնի քվեարկություն անցկացնել չէինք կարող, որովհետև ընտրողների 95 տոկոսն անգրագետ է: Մնում է ժողովախորհուրդի գեները: Ու ես այս ցավալի խնդրի մասին գրում եմ Թիֆլիսում լույս տեսնող «Հորիզոն» թերթում: Իմ թղթակցությունների (տե՛ս «Հորիզոն», 1917 թ., № 129, 133, 136, 142, 152, 155) վերնագրերն էին՝ «Հայ գյուղերում», «Թուրք գյուղերում» (այժմյան ադրբեջանցիները հնում կոչվում էին թուրքեր):

Անդրկովկասյան երեք հանրապետությունների միությունը երկար չտևեց: Կազմվեցին առանձին-առանձին անկախ հանրապետություններ: Վրաստանի Հանրապետության կառավարությունը գլխավորում էր Մենշևիկյան կուսակցությունը, Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը՝ մուսավաթականները, իսկ Հայաստանինը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը: Այս երեք կուսակցությունների հարաբերությունների մեջ տիրում էր անհաշտություն: Այն ավելի սուր բնույթ էր կրում Մենշևիկյան և Դաշնակցական կուսակցությունների մեջ և գնալով վերածվում էր պատերազմի:

Թիֆլիսի հայ ազգաբնակչությունը սոսկալի ապրումների մեջ էր, թեև արտաքուստ թվում էր, թե հասարակական կարգը չի խանգարվել: Նույն դպրոցների ազգայնացման գործն արագ կերպով

առաջ էր ընթանում, բայց բույե առ բույե նորանոր աղետներ ու հալածանքներ էին սպասվում: Մենշևիկյան կառավարությունը միայն ընդունակ եղավ դարերով կողք կողքի հաշտ ապրող, իրար օգնող, բարեկամ հայ և վրացի երկու եղբայր ժողովուրդներին հանել իրար դեմ: Թիֆլիսում ձերբակալություններին վերջ չկա: Հայ ես, այդքանն էլ բավական է, որ ձերբակալվես: Ո՞վ ես, ի՞նչ ես, ոչ ոք չէր հարցնում: Խաղաղ ժողովուրդի, անմեղ մարդկանց քարավաններ են, որ «պատերազմում վերցրած գերիների» անվան տակ Քուրայիս են ուղարկվում²¹: Քաղաքը ցնծության մեջ է: «Եթե այսքան գերիներ են մերոնք վերցրել, մտածում էին Քուրայիսում, ապա էլ ո՞վ է կոմուն, երկի մերոնք արդեն Երևանի մոտ են պատերազմում, Էսօր-Էգուց կվերցնեն»:

Մինչդեռ մենշևիկյան կանոնավոր գործը օրերով մեկուսի կոմուն էր Շուլավերի դեմ և չէր կարողանում ներս խուժել գյուղ:

Ձերբակալությունները չեն դադարում, ոչ ոք, ոչ մի հայ, ով ուզում է լինի, երաշխավորված չէ բանտարկությունից: Սրա պերճախոս վկան այն փաստաթուղթն է, որ Ժողովանիան՝ Վրաստանի մենշևիկյան կառավարության գլուխը, իր ստորագրությամբ մի տեղեկանք էր ուղարկել հասարակական գործիչ, Պետական դումայի անդամ, Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարներից մեկին՝ Արշակ Չուրաբյանին, և նշել, որ նա ազատ է ձերբակալությունից: Իսկ ինչպե՞ս վարվեց Չուրաբյանը: Նա հետ ուղարկեց այդ քստմունքի փաստաթուղթը՝ ասելով. «Որտեղ իմ ժողովուրդը, այնտեղ էլ ես»: Չեք կարող պատկերացնել, ընթերցող, թե ինչպիսի գոհունակությամբ ու հպարտությամբ էր կարդում հայ ժողովուրդը մամուլում Արշակ Չուրաբյանի բաց նամակը Ժողովանիային այս նույն խոսքերով՝ «Որտեղ իմ ժողովուրդը, այնտեղ ես»:

Հազիվ էր Թիֆլիսում բնակվող հայ ժողովուրդը շունչ քաշել, երբ մահաբեր գուժկանի պես ամենուրեք լսվում էին՝ տաճիկները գալի՜ս են...: Տաճիկները գալի՜ս են...: Ալեքսանդրապոլը տաճիկները վերցրե՛լ են...: Տաճիկները Ղարաբախիսայու՜մ են..., տաճիկները գալի՜ս են...

Այդ լուրերը յուրաքանչյուր հայ սարսափով էր լսում: Խուճապ էր..., ի՛նչ խուճապ...: Թիֆլիսում մի հայ չկար, որ փախչելու մասին չմտածեր, մանավանդ նրանք, ում միջոցները ներում էին: Փախչող փախչողի ետևից: Ով ինչով կարող է: Քանի որ վերադառնալու ոչ մի հույս չկա, ով ինչ ունի, վաճառում է... եթե միայն վաճառել կարելի է ասել: Ապրանքի գինը որոշողը վաճառողը չէ, այլ գնողը: Կախված էր գնողի խղճից: Բավական է ասել, որ հազար ռուբլի

21 Հայերին ոչնչացնելու նպատակով Քուրայիսիում և Բակուրիանիում մենշևիկյան կառավարության նախաձեռնությամբ ստեղծված համակենտրոնացման ճամբարների մասին մանրամասն տե՛ս **Чалхушян Г.**, Красная книга, Ростов на Дону, 1921 (ծմբ. խմբ.):

արժեցող դաշնամուրը վաճառվում էր 100 ռուբլուց ոչ ավելի: Մահվան ճիրաններից ազատվելու համար Թիֆլիսի հայ ժողովուրդը, առաջին հերթին՝ ունևոր դասակարգը, պատրաստ էր ամեն ինչ զոհաբերելու: Խուճապահարմների մի ծայրը Թիֆլիսում է, իսկ մյուս ծայրը՝ Վլադիկավկազ քաղաքի մատույցներում:

Ի՞նչ խոսք, այս իրադրությունը քայքայող ազդեցություն էր ունենում Թիֆլիսի հայկական դպրոցների վրա: Ի՞նչ ուսում, ի՞նչ պարապմունք, երբ կենաց ու մահու խնդիր է դրված... Չէ՞ որ ուսուցչի ընտանիքն էլ է Դարյալի լեռնանցքի ճանապարհը բռնել:

Սարդարապատի ճակատամարտի և հայերի հաղթանակի մասին լուրերը Թիֆլիսում բերնեբերան են անցնում: Տաճկական զորքը Երևանը չի կարողացել գրավել և Սարդարապատում լավ ջարդ է կերել: Հաշտության լուրեր են գալիս Սարիղամիշից, Կարսի շրջանից: Թիֆլիսում բռնազավթման լուրը վշտով ու սրտի խոր ցավով էին ընդունում հայերը, մանավանդ կարսեցիները, որոնք առանց արտասուքի չէին խոսում այդ մասին: Նրանք չէին հաշտվում այդ մտքի հետ: Բայց այն էլ գիտեին, որ Կարսը Բաթումի գոհը դարձավ, Բաթումի փրկանքը: Բայց ի՞նչ կարող էին անել:

Հայաստանում սովետական իշխանություն է: Տաճկական զորքը հետ է քաշվում: Տաճիկները թողել են Դարաքիլիսան, Ալեքսանդրապոլը: Թիֆլիսում մնացած հայերը, որ հնարավորություն չեն ունեցել կամ չեն ցանկացել փախչել, ազատ շունչ են քաշում:

– Ինչ լավ է, որ չփախանք, – ասում են նրանք:

Բայց այս հանգստությունը երկար չի տևում: Թիֆլիսը կրակին դրած կաթսայի պես եռում է: Փողոցներում զինվորական շարքերին վերջ չկա: Մենշևիկյան կառավարական մեքենաներն են անվերջ սրընթաց երթևեկում: Գիշեր-ցերեկ քաղաքը եռուզեռի մեջ է: Ցերեկը բացվեց թե չէ, մարդիկ, այստեղ-այնտեղ խմբված, լուրեր են պատմում իրար, հարցնում, նորություններ ասում:

– Օրթաճալայում զինված բոլշևիկներ կան:

– 11-րդ Կարմիր բանակը Լեգրանի և Օրջոնիկիձեի առաջնորդությամբ Փոլլի են հասել:

– Լոռվա բոլշևիկները հասել են Գողի²²:

– Սողանլուխի երկաթուղային կամուրջը պայթեցրել են, որ բոլշևիկների ջոկատները Լոռուց չկարողանան Թիֆլիս մտնել:

– Ժորդանիան Բաթումով փախել է Կ. Պոլիս, արտաքին գործերի մինիստրը բանակցություններ է վարում Վրաստանը դե յուրե ճանաչելու համար: Բանկերում ոսկի չի թողել, տարել է հետը:

– Ուսմաշվիլին այս գիշեր է փախել, իսկ Չխենկելին Ժորդանիայի հետ է գնացել:

– Ուսմաշվիլու հետ փախել է նաև Ծերեթելին:

1921 թվականի մարտի 25-ին Կարմիր բանակը Նավթլուդի, իսկ Լոռվա բոլշևիկները Կոջորի կողմից մտան Թիֆլիս:

Վրաստանում սովետական իշխանություն է: Փողոցներում բարձրախոսներ են դրված: Պետական բոլոր հիմնարկները սովետական են: Լույս են տեսնում սովետական թերթեր՝ հայերեն «Կարմիր աստղ», վրացերեն «Կոմունիստ», ռուսերեն “Заря Востока”: Ահա այս «Կարմիր աստղին» էլ, որի խմբագիրն էր Սուրեն Երզնկյանը, ես սկսեցի թղթակցել: Իմ առաջին թղթակցությունը հետևյալ երգիծանքն էր.

Ծուղրուդու

- Ծուղրուդո՛ւ, սանամներ,
- Էն Ժորդանիան ո՞ւր գնաց:
- Սև ծովն ի վեր կուլ գնաց:
- Ի՞նչ կար կտուց:
- Ոսկի, արծաթ:
- Ո՞ւմ էր տանում:
- Գեզեչկորում:
- Ո՞ւր էր նստած:
- Կոստանդ-Պոլիս:
- Ի՞նչ էր անում:
- Վրաստանի «Ռե յուրեն» էր նա եփում:
- Ո՞վ էր բերել:
- Էն Ժորդանիան:
- Ո՞վ էր հարել:
- Չխենկելին:
- Ո՞վ էր օգնել:
- Ծերեթելին:
- Ո՞ւր էր դրել:
- Էն բաց Լոռին:
- Ո՞վ էր տարել:
- Էն բոլշևիկ:
- Այ բոլշևիկ,
- Ջան բոլշևիկ:
- Լենին պագի
- Քո թշիկ:

Փոխվում է աշխատանքիս բնույթը

Վրաստանում սովետական իշխանության հաստատման օրից մի ամիս չանցած՝ ինձ հրավիրեցին աշխատելու Լուսավորության ժողովրդական կոմիսարիատում և գլխավորելու Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնություն կազմող ժողովուրդների՝ հայերի, ռուսների, ադրբեջանցիների մեջ անգրագության և կիսագրագիտության վերացման աշխատանքները: Այդ առաջարկությունն ուրախությամբ ընդունեցի, որովհետև ժողովրդին պիտանի լինելու մեկ այլ՝ ավելի շնորհակալ գործ ինձ համար չէի պատկերացնում: Կարծես թե այդ գործը դիտավորյալ ստեղծել են ինձ համար: Չէ՞ որ դեռ մինչև ուսուցիչ լինելը շատ էի սիրում և հասակա-

22 Ներկայիս Թերթի-Ճղարոյի շրջանի Կողա գյուղն է (ծնթ. խմբ.):

վորների հետ ինքնակամ պարապում էի, գրել-կարդալ սովորեցնում: Իսկ այժմ իմ սիրած գործն ինձ է հանձնարարվում պետության կողմից: Ուրեմն զարմանալի չէ, որ ուրախությամբ եմ ընդունում այդ: Բայց երբ անցա գործի, ինձ համար մի անսպասելի նորություն հայտնվեց: Լուսժողկոմատի քաղուս-գլխավոր վարչության աշխատանքները չեն սահմանափակվում անգրագետներին և կիսագրագետներին գրագետ դարձնելով: Դրանց մեջ էին մտնում նաև քաղուսվարչության աշխատանքի մյուս բնագավառները՝ գրադարան, խրճիթ-ընթերցարան, պրոֆգրագիտություն, քաղգրագիտություն:

Լավ, ասենք անգրագիտության և կիսագրագիտության վերացման աշխատանքների բնագավառն իմ մասնագիտությունն է: Իսկ ինչպե՞ս պիտի կազմակերպեմ և ղեկավարեմ մյուս աշխատանքները: Ոչինչ, իմ սիրած գործին զուգընթաց կաշխատեմ ուսումնասիրել դրանք:

Փոխվեց իմ աշխատանքի բնույթը: Ծխական դպրոցի ուսուցիչը դարձավ քաղուսվարչության աշխատող: Ինձ անսահման ոգևորում էր այն, որ ես անգրագետներին պետք է գրագետ դարձնեմ, նրանց հնարավորություն տամ գիրք կարդալու, ուրիշի գրավոր արտահայտած մտքերը հասկանալու, ըմբռնելու և վերջապես ես պետք է անգրագետ մարդկանց «կույր աչքերը» բաց անեմ աշխարհը տեսնելու և հասկանալու համար: Այդ օրվանից ես չգիտեի, թե ինչ է հոգնելը, ինչ է հանգիստը: Մի ոտքս Լենինյան, մյուսը՝ Կոմիսարների անվան շրջանում էր: Մի տեղ անգրագիտության վերացման դպրոց էի կազմակերպում գործարանում, մյուսում ստուգում էի անգրագետների հաճախումը, երբորդ վայրում օգնում էի ուսուցչին, որ աշխատանքը ճիշտ հունի մեջ դնի:

Ահա պրոֆսիտությունների տունը. մտնում եմ մի պրոֆսիտություն, գովում կամ դժգոհում եմ դպրոցի լավ ու վատ աշխատանքներից: Անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնող դասատուների համար, որ կուլտբանակայիներ էին կոչվում, սեմինար պարապմունքներ եմ նշանակում, խրախուսում, նկատած թերություններն ասում, դասախոսություններ կազմակերպում մանկավարժական թեմաներով: Աչքիս ոչինչ չի երևում՝ բացի անգրագիտության ու կիսագրագիտության վերացման դպրոցներից և այնտեղ տարվող աշխատանքից: Մոռացել եմ տուն-տեղ, երեխա, ընտանիք, այնպես եմ տարվել դրանցով:

Անգրագիտության և կիսագրագիտության վերացման ասպարեզը նման էր խոպան հողի: Ես լծվել էի այդ հողի մշակման աշխատանքներին: Ոգևորված էի և իմ ոգևորությամբ վարակում էի այդ ասպարեզում աշխատող շրջանային ժողկրթբաժինների հրահանգիչներին ու աշխատողներին:

Գործին մեծ չափով կարող է նպաստել համապատասխան դասագրքերի և գրեմական պիտույք-

ների առկայությունը: «Դեպի լույս». այդպես էր կոչվում հայերեն այն դասագիրքը, որ կազմել էր հայտնի մանկավարժ Հովհաննես Տեր-Սիրաքյանը: Ինձ հանձնարարված էր հետևել դասագրքի տպագրությանը և ժամանակին լույս ընծայել: Այն կազմված էր ամերիկյան մեթոդով, որի սկզբունքը ոչ թե առանձին տառ-հնչյունի ուսուցումն է, այլ ամբողջ բառի, նախադասության, որն իր մեջ պարունակում է բազմաթիվ տառ-հնչյուններ: Այս մեթոդով կազմված դասագիրքը գուցե ընդունելի է անգլերենում, բայց ոչ հայերենում: Այն ոչ միայն անհանդուրժելի է հասակավոր անգրագետին գրագիտության ուսման, այլև մանուկների համար: Անգլերենը բոլորովին ուրիշ է: Բառը գրվում է մեկ, արտասանվում մեկ այլ ձևով: Այսպես, օրինակ, անգլերեն գրում են fought, իսկ կարդում ֆոթ, որը նշանակում է կռվել և այլն:

«Դեպի լույս» դասագրքի առաջին դասն է՝ «Մենք ազատ ենք»: Սրանով էլ պետք է սկսի անգրագետ հասակավորն իր անգրագիտության վերացումը:

Հայտնի է, որ հասակավորի հոգեբանությունը, անցնելով իր զարգացման շրջանը, կանգ է առնում և սահմանափակվում իրեն շրջապատող այն գործիքներով, որով աշխատում է, այն առարկաներով, որոնց հետ ինքը գործ ունի: Այսպես, օրինակ, դերձակի մոտով անցնելիս նա ուշադրություն է դարձնում ձեր հագուստին, կոշկակարի մոտով անցնելիս նրա ուշադրությունը գրավում է ձեր կոշիկները: Չեմ մոռանում մի դեպք: Իմ բարեկամ հյուանի հետ մենք մի օր մտանք Թիֆլիսի երաժշտական մի մեծ խանութ, որտեղ ցուցադրված էին երաժշտական բազմատեսակ գործիքներ: Խանութի մի փոքրիկ մասը գրասենյակի համար տախտակե փեղկերով նոր էր բաժանված ընդհանուր մասից: Փեղկերը դեռ ապակիներ չունեին:

–Մի սրան նայե՛ք, ի՞նչ անճոռնի ու անշնորհք փեղկեր են, կարծես կացնով են տաշված,– ասաց իմ բարեկամ հյուանը և եզրափակեց,–ամեն մարդ էլ կասի, թե ես վարպետ եմ:

Իմ ծանոթ հյուանին չհետաքրքրեցին երաժշտական բազմաթիվ գործիքները: Նրան հետաքրքիր էր այն, ինչով նա աշխատում էր ամեն օր, և ինչով սահմանափակվել էր նրա հոգեբանությունը:

Ահա այսպիսի հոգեբանության տեր մարդկանց հետ մենք պետք է գործ ունենանք, վերացնենք նրանց անգրագիտությունը: Իսկ այդ գործը կապված է դասագրքի, գրչի, տետրի, նստարանի, գրատախտակի հետ, որոնք միանգամայն խորթ են հասակավորի հոգեբանությանը: Եթե սրան էլ ավելացնենք ամերիկյան մեթոդով կազմված դասագրքի՝ «Մենք ազատ ենք» առաջին դասը, այն ժամանակ ավելի պարզ կդառնան այն դժվարությունները, որոնց դեմ պետք է պայքարի կուլտբանակայինը: Հասակավոր անգրագետը չգիտի նույնիսկ տառի մասնիկները գրել, ուր մնաց թե կարողանա

տասնմեկ տառը միանգամից գրել: Անգրագիտության վերացման գործի ծախսողունն անխուսափելի է, մանավանդ ոչ հմուտ կուլտրանակալիների համար: Ժամանակին այդ դասագիրքը սուր քննադատության ենթարկվեց մանկավարժ Ստեփան Լիսիցյանի կողմից, բայց ի՞նչ կարող էինք անել, երբ ասպարեզում ուրիշ դասագիրք չկար: Ծիշտ է, յուրաքանչյուր էջի տեքստի տակ խոսվում էր ու հրահանգվում այդ դասագրքով անցնելու մեթոդի մասին, բայց ի՞նչ օգուտ կարող է տալ այդ հրահանգը գործին անծանոթ պիոներին, կոմերիտականին, դպրոցի բարձր դասարանի աշակերտին, մտավոր կուլտրանակալիներին: Այս էր պատճառը, որ անգրագիտության և կիսագրագիտության վերացման աշխատանքների հետ զուգընթաց մենք մեծ ուշադրություն էինք դարձնում կուլտրանակալիների դասավանդման մեթոդների ուսուցման և դրանց որակը բարձրացնելու վրա:

Բացի սեմինար պարապմունքներից և մեթոդկարիներտների աշխատանքներից, որոնք կատարվում էին Թիֆլիսի հինգ շրջաններում, մենք պարբերաբար համաքաղաքային մասշտաբով կազմակերպում էինք դասախոսություններ մանկավարժական և մեթոդական թեմաներով: Հրավիրում էինք անվանի մանկավարժների, որոնք իրենց դասախոսությունները կարդում էին բոլորի համար մատչելի ռուսաց լեզվով: Մասնակցել են մաս Կրաստանի լուսավորության ժողովրդական կոմիսար Մարիա Օրախելաշվիլին, որը զոհ դարձավ անհատի պաշտամունքին, քաղլուս գլխավոր վարչության պետ Գեորգի Խչապուրիձեն (այժմ Կրաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ) և այլն:

Այսօրվա պես հիշում եմ. այդ դասախոսություններից մեկի ժամանակ ելույթ ունեցավ ճերմակահեր և սպիտակ փառահեղ մորուքով նախկին ուսուցիչ և հին բուլշևիկ Նեստոր Յերցեվաձեն: Նա բացատրում էր «педагог» բառի իմաստը և խրախուսում կուլտրանակալիներին ճիգուջանք չխնայել՝ ի կատար ածելու Լենինի՝ «Սովորել, սովորել, սովորել» հանրահայտ պատգամը: Դահլիճի հանդիսականներից շատերն ինձ հարցրին, թե այդ ընկերը նախկին քահանա հո չի՞ եղել: Ես այդ մասին հայտնեցի Յերցեվաձենին: Նա երկրորդ անգամ ձայն խնդրեց և ասաց. «Այո՛, ես քահանա եմ, բայց ոչ Քրիստոսի պատգամները քարոզող, այլ Մարքս-Էնգելսի գաղափարների համար պայքարող և դրանք քարոզող «քահանա»: Դահլիճի կուլտրանակալիները բոլոր ծափահարեցին Նեստորին:

Համաքաղաքային կուլտրանակալիների այդ հավաքույթներում հաճախ էի ելույթ ունենում զեկուցումներով: Ահա թեմաներից մի քանիսը.

1) Մեթոդական աշխատանքները հասակավորների գրագիտական դպրոցներում:

2) Մայրենի լեզվի տեղն ու դերը հասակավորների դպրոցում:

3) Գրագիտության ուսուցման մեթոդի հոգեբանական հիմունքները:

4) Գրավոր աշխատանքները հասակավորների դպրոցում և այլն:

Լիկկայաններ (այսպես էին կոչվում սկզբնական շրջանում անգրագիտության ու կիսագրագիտության վերացման խմբակները) ստեղծելու համար մենք տեղում ժողովներ էինք հրավիրում, իրազեկում անգրագիտության և կիսագրագիտության վերացման մասին, ցուցակներ կազմում և ըստ դրանց՝ խմբակներ ստեղծում, դասատու նշանակում: Հիշում եմ այսպիսի մի դեպք: Թիֆլիսի Օրթաճալայում գտնվող նախկին Ադիլխանովի կաշվի գործարանում ենք, որտեղ բանվորների 90 տոկոսը հայ է: Մեր այցն այդ գործարան զուգադիպել էր Կրաստանի գեղագույն սովետի նախագահ Ֆիլիպ Մախարաձեի՝ գործարանում ժողով հրավիրելու օրվա հետ: Իր ելույթում նա անգրագետին համեմատում էր կույր մարդու հետ, հորդորում էր շատ կարճ ժամանակում վերացնել անգրագիտությունը: Հայ բանվորները պնդում էին. «Մենք ուզում ենք մեր անգրագիտությունը վերացնել ռուսաց լեզվով»: Հազիվ համոզեցինք նրանց, որ իրենց անգրագիտությունը վերացնեն մայրենի լեզվով:

Նման մի դեպք էլ հիշում եմ Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի բացման ժամանակ, երբ Հայաստանից եկած մի շարք ընկերներ ցանկություն հայտնեցին սովորել ռուսական բաժնում: Ալեքսանդր Մյասնիկյանը, իհարկե, բարկացավ և թույլ չտվեց՝ ասելով, որ Ռուսաստանը ձեր կարիքը չի զգում, դուք պետք է աշխատեք Հայաստանում և հայերի մեջ...

Չարմանալի ժողովուրդ ենք մենք՝ հայերս, ամեն բոլոր պատրաստ ենք ձեռք քաշելու այն բոլորից, ինչը հայկական է: Նայե՛ք մեր երեխաների անուններին, ամեն ինչ կա այնտեղ, բացի հայկականից:

Հիշում եմ, Հայրենական պատերազմի տարիներն էին: Թիֆլիսի դպրոցներում գիշերային հերթապահություն էր նշանակված: Մի օր լուսավորության մինիստրի տեղակալ Դավիդ Չավախաշվիլին առաջարկեց ինձ այցելել դպրոցներ և միասին ստուգել գիշերային հերթապահությունը: Ահա մենք Թիֆլիսի վրացական № 18 միջնակարգ դպրոցում ենք: Ուսուցչանոցում հեռախոսի մոտ նստած է ուսուցիչներից մեկը: Ուրեմն ամեն ինչ կարգին է: Մինիստրի տեղակալը մոտեցավ ուսուցչանոցում դրված մի պահարանի: Ապակու հետևից կախված է ավարտական դասարանի աշակերտների անվանացուցակը: Նա կարդում է:

–Ընկե՛ր Սերգո,– ասաց ինձ,– ապա նայեցե՛ք, բոլոր աշակերտներն ունեն վրացական պատմական անուններ, լավ է, չէ՞:

–Իհարկե լավ է, այն էլ շատ լավ:

Բայց ես ամաչեցի... որովհետև մեր հայ երեխաների ամուսնները՝ Ջոն, Ջուլիետա, մինչև անգամ Քարտուղար, Կլադես, միայն թե հայկական չլինեն:

Պրոֆանությունների խորհրդում, ինչպես նաև դրանց առանձին կոմիտեներում բազմաթիվ հայ տղաներ էին աշխատում, որոնց հետ ես մոտ հարաբերությունների մեջ էի:

Առևտրի և պետական հիմնարկների պրոֆանության նախագահն էր հին բոլշևիկ Մինաս Մելիքյանը, իսկ կուլտրաթմնի վարիչը՝ Անտոնյանը, սննդի և համի պրոֆանության նախագահը՝ Ազնավուրյանը, կուլտրաթմնի վարիչը՝ Վահագն Մելիքսեթյանը: Քիմիական արդյունաբերության պրոֆանության նախագահն էր Խորեն Ավետիսյանը, տեքստիլ արդյունաբերության պրոֆանության նախագահը՝ Լևոն Բաբաջանյանը և այլք:

Պրոֆանությունների խորհրդի կուլտրաթմնի վարիչն էր Գևորգ Կուրուլովը, որը հետագայում դարձավ խորհրդի նախագահ, ապա Վրաստանի կոմկուսի կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար, վերջում էլ անհատի պաշտամունքի գոհ դարձավ: Խորհրդի անդամներից էր Լևոն Էլբեկյանը:

Սովետական պրոֆանությունների ընդհանուր թիվն այդ ժամանակ հասնում էր 23-ի (22-ը՝ միայն Վրաստանում): Պակասում էր թղթի արդյունաբերության միավորումը: Ահա այդ 22 պրոֆանությունների հետ էր կապված աշխատանքիս մեծ մասը:

Սովետական իշխանության սկզբնական շրջանում Վրաստանում շատ դժվար էր անգրագիտության և կիսագրագիտության վերացման գործը: Ութամյա աշխատանքից հետո բանվորը կամ ծառայողը շտապում էր որևէ կողմնակի գործ և ապրուստի աղբյուր գտնելու, որովհետև պետական աշխատավարձը չէր բավարարում: Այս պատճառով անգրագետ և կիսագրագետ բանվորի կամ ծառայողի համար սահմանված էր վեցամյա աշխատանքային օր, որպեսզի այդ երկու ժամը նա լրացնի լիկկայանում՝ անգրագիտությունը կամ կիսագրագիտությունը վերացնելու: Բայց անգրագետը բռնում էր եկամտի նոր աղբյուր գտնելու ճամփան՝ փոխանակ քայլերն ուղղելու դեպի լիկկայան:

Պրոֆանության աշխատող

1922 թվականն էր: Վրաստանի պրոֆանությունների խորհրդի կուլտրաթմնն անգրագիտության և կիսագրագիտության բնագավառի աշխատողների համաքաղաքային կոնֆերանս էր հրավիրել, որտեղ հանդես եկավ պրոֆխորհրդի կուլտրաթմնի վարիչ Գևորգ Կուրուլովը: Նա խոսում էր այդ աշխատանքների լավ և վատ կողմերի, ինչպես նաև դրանք լավ հիմքերի վրա դնելու մասին: Այդ կոնֆերանսում ելույթ ունեցա և ես՝ խոսելով պրոֆանությունների լավ ու վատ աշխատանքներից:

Կոնֆերանսը վերջանալուց հետո Գևորգ Կուրուլովը, սննդի և համի պրոֆանության կուլտրաթմնի վարիչ Վահագն Մելիքսեթյանն ինձ հրավիրեցին աշխատելու պրոֆանությունների խորհրդի կուլտրաթմնում՝ որպես դպրոցական ենթաթմնի վարիչ: Ես համաձայն էի, քանի որ առանց այն էլ իմ աշխատանքը կապված է պրոֆանությունների հետ: Այստեղ արդեն ես կլինեմ անմիջական ղեկավարը, բոլոր կուլտրաթմններն ինձ կենթարկվեն: Բացի լիկկայաններից՝ պրոֆանություններն այն ժամանակ ունեին և շատ մանկապարտեզներ, հասակավորների դպրոցներ, պրոֆիսմբակներ, քաղխմբակներ, որոնց ես պետք է ղեկավարեմ: Աշխատանքս այստեղ նոր թափ է ստանում, նոր ուժ առնում: Այժմ ամբողջապես կապված եմ պրոֆանությունների հետ: Իմ կապը կուսակցական կազմակերպությունների հետ ավելի է սերտանում: Շատ հաճախ եմ լինում շրջկոմում, կենտկոմում: Այս հանգամանքն ինձ ստիպում է ոչ միայն ծանոթանալ, այլ խորն ուսումնասիրել պրոֆանության շարժումը՝ սկսած համաքաղաքային մինչև մեր օրերը, քաղաքագիտությունը, առաջին հերթին կուսակցության համագումարների պատմությունը: Այնուհետև սկսում եմ ծանոթանալ ակումբային, գրադարանային աշխատանքներին: Այդ ժամանակաշրջանում պրոֆանությունները մեծ կշիռ ունեին և բազմակողմանի աշխատանք էին կատարում: Պրոֆանության աշխատակիցը կոմիվում էր, կատարած լավ ու վատ աշխատանքի համար ընդհանուր ժողովում ստանում կոլեկտիվի գնահատականը: Ու ես կոմիվում էի այդ եռուգեռի մեջ՝ ձեռք բերելով տեսական ու գործնական գիտելիքներ, օր օրի վրա հարստացնելով իմ, այսպես ասած, մասնագիտությունն անգրագիտության և կիսագրագիտության աշխատանքներին զուգընթաց: Այժմ անձամբ վարում եմ պրոֆագրագիտական և քաղաքագիտական խմբակները: Ճիշտ է, ես խորացել եմ պրոֆանության աշխատանքների մեջ և տարվել դրանցով, բայց իմ առաջնահերթ աշխատանքը համարում եմ անգրագիտության և կիսագրագիտության վերացման գործը:

Այդ աշխատանքների ծանրության զգալի մասն իրենց ուսերին էին կրում կոմերիտմիության և պրոֆանության տեղական, ինչպես նաև պիոներական կազմակերպությունները:

Անգրագիտության և կիսագրագիտության աշխատանքներն այնպիսի ծավալ են ստացել, որ դժվար է ճարել մի հիմնարկ կամ ձեռնարկություն, որտեղ կազմակերպված չլինի անգրագիտության և կիսագրագիտության խմբակ: Իսկ արտադրական շատ և շատ ձեռնարկություններին կից հիմնվել էին գրագիտական առաջին աստիճանի դպրոցներ, որտեղ դասավանդում էին նաև այլ առարկաներ: Հետագայում այդ դպրոցներն այնքան զարգացան ու քաղաքացիական իրավունք ձեռք բերեցին, որ դրանց համար կազմվեցին ուսումնական ինքնու-

րույն ծրագրեր: Այդ դպրոցները բաղկացած էին երկու՝ անգրագետների և կիսագրագետների դասարաններից: Ավելորդ չեմ համարում այստեղ նշել ուսումնական այդ ծրագիրը.

	Անգրագետներ		Կիսագրագետներ	
	ժամ.	քանակը ընդ.	ժամ.	քանակը ընդ.
1. Մայրենի լ.	5	100	5	150
2. Թվար.	4	80	4	120
3. Քաղաքագիտ.	2	40	2	60
4. Աշխ. և բնագ.	2	40	2	60
5. Տեխ. և ագր.	2	40	2	60
Ընդ.	15	300	15	450

Այսպիսի դպրոցներ, ինչ խոսք, կազմակերպվում էին մեծ կոլեկտիվ ունեցող գործարաններին և հիմնարկներին կից:

Անգրագիտության և կիսագրագիտության վերացման աշխատանքները մեծ թափ էին ստացել և կանանց մեջ:

Թիֆլիսում անգրագիտության և կիսագրագիտության վերացումը տեղի էր ունենում միմիայն հետևյալ լեզուներով՝ վրացերեն, հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն, օսերեն, ասորերեն, քրդերեն:

Որոշ ժամանակից հետո տեղի են ունենում լիկկայանների ավարտական, ինչպես նաև առաջին աստիճանի դպրոցների քննությունները: Այս հանգամանքը բնականաբար առաջ է քաշում և այն, որ պետք է լիկկայանը վերջացրած և առաջին աստիճանի դպրոցավարտների համար կազմակերպել «բարձր տիպի» դպրոցներ: Դրանք շատ էին տարբերվում առաջին աստիճանի դպրոցներից: Նախ չկային անգրագետների դասարաններ, ապա լեզվի և թվաբանության ծրագրերն ավելի շատ էին: Մրա հետ միասին հասակավորների համար կազմակերպվում էին նաև այլ տիպի դպրոցներ միջնակարգ դպրոցի ծրագրերով: Դրանց թվին էին պատկանում բանվորական ֆակուլտետները (բանֆակ), բանվորական համալսարանները և միջնակարգ (գիշերային) դպրոցները:

1924 թվականին կառավարության որոշման համաձայն՝ պրոֆմիությունների իրավասության տակ գտնվող ուսումնական հաստատությունները, ինչպես նաև լիկկայաններն ու մանկապարտեզները հանձնվում են ժողովրդական լուսավորության օրգաններին: Դիշտ ժամանակին և տեղին որոշում, որի համաձայն՝ վերացվում է և պրոֆմիությունների խորհրդի կուլտբաժնի դպրոցական ենթաբաժինը: Իսկ ե՞ս: Պրոֆմիությունների խորհրդի նախագահ Բագրատ Մաչիձեն հարցրեց ինձ, թե ես որտեղ եմ ուզում աշխատել: Լուսժողկոմատ չէի ուզում վերադառնալ, որովհետև այնտեղ աշխատելու ընթացքում սաստիկ հիվանդացա դեղնացավով Ախալցխա գործուղման ժամանակ և ամբողջ չորս ամիս պառկած էի անկողնում: Խնդրեցի ինձ ուղարկել Թիֆլիսի քաղաքային ժողկրթբաժին:

Թիֆլիսի ժողկրթբաժնի աշխատող

Թիֆլիսի ժողկրթբաժնի վարիչ Կորնելի Ալեքսեևիչ Կացաբավան ինձ սիրալիք ընդունեց: Այդ ժամանակաշրջանում ժողկրթբաժինները կատարում էին նաև քաղուս-մասսայական աշխատանքներ: Նա ասաց, որ ես կլինեմ քաղուսբաժնի պետի տեղակալ և կվարեն այն աշխատանքը, ինչը կատարել եմ պրոֆմիությունների խորհրդում:

Նոր միջավայր: Եվ վերջապես ի՞նչ նշանակություն ունի, թե ես որտեղ եմ աշխատում: Ասպարեզը մնացել է նույնը: Դիշտ է, ես Թիֆլիսի քաղաքային ժողովրդական կրթության բաժնում եմ, բայց իմ կապը պրոֆմիությունների հետ չի խզվում: Շատերն ինձ են հանձնարարում ղեկավարել այս կամ այն տեղկոմին, ֆաբգործկոմին կից կազմակերպված քաղաքագիտության և պրոֆգրագիտության խմբակները: Պատմությունը կրկնվում է: Յերեկն իմ պարտականություններն են կատարում, իսկ երեկոները ղեկավարում պրոֆմիութենական խմբակները: Այնուամենայնիվ, հայկական լիկկայանների համար դասագրքեր ունենալու հարցը պտրբեմ էր դարձել: «Դեպի լույս» չարաբաստիկ դասագիրքը վաղուց սպառվել է: Մանկական, առաջին դասարանի դասագրքերը չեն բավարարում թե՛ քանակով և թե՛ բովանդակությամբ: Ժողկրթբաժնի ձեռնարկած միջոցները (մի քանի հայ ուսուցիչների հանձնարարել էին հասակավորների համար կազմել այբբենարան) հաջողությամբ չեն պսակվում: Ստիպված եղա իմ ուժերը փորձել: Ձեռք բերեցի շատ դասագրքեր՝ ռուսերեն, վրացերեն, հայերեն, ծանոթացա դրանց բովանդակությանը և կառուցվածքին: Ապա անգրագետների համար կազմեցի «Աշխատանք» անունով այբբենարան, որը լույս տեսավ 1925 թ. 10000 տպաքանակով: Այս դասագիրքը, իր թերություններով հանդերձ, ուներ նաև առավելություններ: Բովանդակությամբ համապատասխանում էր հասակավորի հոգեբանությանը և կազմված էր հնչյական մեթոդով: Դասագիրքը շուտ սպառվեց, այնպես որ հաջորդ տարի մենք ստիպված եղանք մի շարք բարեփոխումներով 5000 տպաքանակով լույս ընծայել երկրորդ անգամ:

Թիֆլիսի հայ իրականության մեջ միակ մարդն եմ, որ ծանրաբեռնված եմ քաղուս աշխատանքներով: Կուսակցական կադրերի խիստ կարիք է զգացվում, եղածներն էլ ավելի պատասխանատու աշխատանք են կատարում: Այդ պատճառով ոչ կուսակցական, բայց վստահելի աշխատողներն ավելի քան ծանրաբեռնված են մասսայական աշխատանքներով:

Ինչ-որ գործով ես պրոֆմիությունների խորհրդի կուլտբաժնում եմ՝ Գևորգ Կուրուլովի մոտ: Նա ինձ ծանոթացրեց Հայաստանից եկած երկու ընկերների՝ Պետյա Կուզնեցովի (Հայաստանի պրոֆմիությունների խորհրդի նախագահ) և Հովհաննես

Պետրոսյանի (պրոֆանիտությունների խորհրդի կուլտուրալ ժամանակ) հետ: Ջրույցի ժամանակ, երբ նրանք իմացան իմ մասին, ինձ հրավիրեցին Երևան՝ պրոֆանիտության աշխատավորների կուրսեր կազմակերպելու և ղեկավարելու համար:

–Չի լինի,– ասացի ես,– որովհետև ոչ ոք թույլ չի տա աշխատանքները թողնել և գալ Երևան՝ կուրսերում պարապելու:

–Իսկ ամառվա ամիսների^օ, արձակուրդների ժամանակ^օ,– ասաց Պետյա Կուզնեցովը:

–Թերևս այդ հնարավոր լինի:

1926 թվականի ամռանը ես արդեն Հայաստանում եմ: Բոլոր շրջաններից 44 պրոֆաշխատավորներ են հավաքվել, որոնցից 28-ը կուսակցական են: Կուրսերի պարապմունքները տեղի են ունենում Ծաղկաձորում: Բացի ինձանից՝ դասախոսում են Հայկ Ազատյանը և Խորեն Հովսեփյանը: Հաջողությամբ ավարտելով երկու ամիս տևած կուրսերը՝ ես հրավիրվեցի հաջորդ ամառվա ամիսներին ղեկավարելու քաղլուս աշխատողների կուրսերը: Այդ պարապմունքներն ավելի կարճ էին՝ մեկ ամիս և տեղի էին ունենում Երևանում: Այստեղ դասախոսում էին կոմպոզիտոր Մարտին Մազմանյանը, նկարչության դասատու Վաղարշակ Ղազարյանը (կոմպոզիտոր Դանիել Ղազարյանի եղբայրը):

Քաղլուս թեքման առարկաների դասատու աշխատանքային դպրոցում

Դեռևս 1924-25 ուսումնական տարում աշխատանքային դպրոցները կադրեր պատրաստելու նպատակով թեքումներ էին ընդունել՝ մանկավարժական, բժշկական, մեխանիկական, էլեկտրատեխնիկական և այլն: Թիֆլիսի հայկական № 70 միջնակարգ դպրոցը, որ տեղավորված էր նախկին 3-րդ իզակյան գիմնազիայի շենքում, իր լաբորատորիայով, կաքինետներով, հարուստ գրադարանով, ստացել էր քաղլուս թեքում: Ընդունելն ընդունել, բայց մասնագետ ուսուցիչ չեն գտնում, իսկ թեքման մեջ մտնում են երեք առարկաներ՝ 1. անգրագիտության և կիսագրագիտության վերացում, 2. ակումբային, 3. գրադարանային աշխատանքներ: Շատ որոնումներից հետո դպրոցի տնօրեն Աննա Տեր-Ղևոնդյանը (կոմպոզիտոր Անուշավան Տեր-Ղևոնդյանի քույրը) դիմում է ինձ՝ այդ առարկաները դասավանդելու համար: Ես, իհարկե, չեմ համաձայնվում, որովհետև դպրոցի պարապմունքները համընկնում են իմ աշխատանքի ժամերին: Մի քանի օր հետո ժողկրթբաժնի վարիչ Կորնելի Ալեքսեևիչ Կացարավան ինձ կանչեց:

–Մերզո՛ ջան, դու գիտես, որ № 70 թեքումով դպրոցի առարկաների դասավանդումը տապալվում է:

–Կորնելի Ալեքսեևիչ, ես ի՞նչ կարող եմ անել:

–Ես ուզում եմ, որ թեքումով առարկաները դու դասավանդես այդ դպրոցում:

–Աշխատանքի ժամերին ես ո՞նց կարող եմ գնալ: Եթե մասնագետ ուսուցիչ չեն գտնում, թող թեքումը փոխեն: Ո՞վ ասաց, որ № 70 դպրոցն անպայման քաղլուս թեքում պիտի ընդունի:

–Հնարավոր է, որ օրական երկու ժամ դու բացակայես աշխատանքից: Մի քիչ ուշ աշխատանքի կգաս առավոտյան:

Ես համաձայնվեցի, չէի ցանկանում մերժել այս բարի ու հեզահամբույր ծերունու խոսքը: Շատ լավն էր Կացարավան: Մենք միասին աշխատեցինք տասներեք տարի: Ես երբեք չտեսա նրան բարկացած, բարձր ձայնով խոսելիս: Հմուտ էր իր գործում և լավ գիտեր դպրոցը:

Ճիշտ է, ես համաձայնվել եմ, բայց ո՛չ ծրագիր կա, ո՛չ համապատասխան ձեռնարկ: Հայտնի չէ, թե ի՞նչ բովանդակություն պետք է ունենան այս 3 տարբեր առարկաները: Քաղլուս թեքում և վերջ, դե գնա ու ամբողջ երկու տարվա ընթացքում VIII և IX դասարաններում (այն ժամանակ միջնակարգ դպրոցն ինձամյա էր) հարյուր ժամ պարապի առանց որևէ օժանդակ ձեռնարկի: Ի՞նչ արած, հանձն ես առել, բարի եղիր և մտածել այդ մասին: Գիշերներն անքուն նստում եմ ու հազար ու մի աղբյուրներից կազմում ծրագրեր:

Այժմ, երբ պատրաստ եմ իմ կազմած ծրագրերը, ես վստահությամբ եմ մտնում դասարան: Հետաքրքիր են անցնում դասերը: Գործնական աշխատանքներն աշակերտները կատարում են դպրոցի գրադարանում, դպրոցին կից կազմակերպված անգրագետների և կիսագրագետների խմբակներում և պատի թերթի թողարկումով:

Անգրագիտության և կիսագրագիտության վերացման աշխատանքները նորանոր նվաճումներ են կատարում: Խմբակներում ընդգրկվում են քուրդ և աղբյուրների կանայք: Մրանց հետ զուգընթաց կազմակերպվում են նաև անգրագետ և կիսագրագետ անչափահաս երեխաների առաջին աստիճանի դպրոցներ: Մյուս կողմից բարձր կարգի դպրոցավարտների քանակն այնքան է խտացել, որ հրամայական պահանջ է դարձել նրանց համար կազմակերպելու միջնակարգ ծրագրով դպրոց: Դա կոչվեց հասակավորների միջնակարգ գիշերային, իսկ հետագայում՝ բաներիս դպրոց:

Հասակավորների միջնակարգ գիշերային դպրոցի տնօրեն

1928 թվականին Թիֆլիսում արդեն գոյություն ունեին հայկական բանֆակ և բանվորական համալսարան: Մրանց զուգընթաց բացվում է բանվորական առաջին միջնակարգ գիշերային դպրոցը հայկական, ռուսական, վրացական և աղբյուրական բաժիններով: Այն բաղկացած էր 30 դասարաններից, գտնվում էր 26 կոմիսարների շրջանի նախկին № 5 արական գիմնազիայի շենքում: Գիշերային դպրոցի կազմակերպչական աշխատանքներն ամ-

բողջապես ինձ են հանձնարարել: Երբ դրանք վերջացան, Կացարավան կանչեց ինձ և հայտնեց համատեղության կարգով այդ դպրոցի տնօրեն նշանակելու որոշման մասին:

–Ես ավելի հարմար մարդ չգիտեմ, բացի քեզանից,– ասաց նա,– հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն գիտես, շատ թե քիչ էլ՝ վրացերեն: Դու պետք է թողնես հետճաշյա քո բոլոր աշխատանքները: Այլ կերպ դժվար կլինի:

Չսպասելով իմ համաձայնությանը՝ կանչեց քարտուղարին և պատվիրեց հրամանա ձևակերպել որպես № 3 բանվորական միջնակարգ դպրոցի տնօրեն, աշխատավարձ վճարել 4-րդ կարգով և 25 տոկոս հավելյալ՝ բաժինների համար:

–Մուկը ծակը չէր մտնում, ցախավելն էլ պոչից կապեցին,– ասացի ես հայերեն:

–Ռոզոօր, ռոզոօր (ինչպե՞ս, ինչպե՞ս):

Ես բացատրեցի հայերեն առածի միտքը, նա ծիծաղեց.

–Ոչինչ, սիրելիս, գործն է պահանջում:

Այդ սովորական դպրոց չէր, այլ արտակարգ մի երևույթ: Դպրոցը երկսեռ է: Սովորում են ուսման ծարավ երիտասարդներ՝ 18-30 և բարձր տարիքի: Չորս բաժինների աշակերտների թիվը հասնում էր 800-ի: Իսկ ուսուցիչները 60 հոգի էին, քչերն ունեին բարձրագույն կրթություն: Ամենամեծ բաժինը հայկականն էր, իսկ ամենափոքրը՝ ադրբեջանականը: Մանկավարժական ժողովները միասին էին տեղի ունենում: Հասակավորների միջնակարգ գիշերային դպրոցի տնօրենի պաշտոնի ստանձնումն ինձ հարկադրեց հրաժարվել հետճաշյա բոլոր աշխատանքներից, որոնք կապված էին պրոֆմիությունների հետ: Չնայած աշխատանքի ծանրաբեռնվածությանը՝ ես շարունակում էի քաղժողկրթբաժնում աշխատել, դասավանդել № 70 դպրոցի թեքումով առարկաները: Սրանց ավելացավ նաև հասակավորների միջնակարգ գիշերային դպրոցի տնօրենի պաշտոնը:

Դասագիրք կազմող բրիգադները

1928 թվականին Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը երկու բրիգադ ստեղծեց հայոց լեզվի դասագրքեր կազմելու և Վրաստանում հրատարակելու համար: Առաջին բրիգադին հանձնարարված էր դասագիրք կազմել անգրագետների և կիսագրագետների, ինչպես նաև տարրական դպրոցների համար: Բրիգադավար նշանակվեց տողերիս հեղինակը: Երկրորդ բրիգադը պետք է կազմեր հայոց լեզվի և գրականության դասագրքեր միջնակարգ դպրոցի 5-10-րդ դասարանների համար: Բրիգադավար նշանակվեց բանֆակի գրականության դասատու և «Մարտակոչ» թերթի բաժնի վարիչ Հայկ Հովակիմյանը (Նորայր):

Երեք հոգուց (Ս. Իսրայելյան, Գ. Մեսյան և Կ. Աղաբաբյան) բաղկացած մեր բրիգադը կազմեց և

լույս ընծայեց չորս դասագիրք՝ նախկին իմ կազմած «Մեր ուղի» ալբերնարանը՝ բարեփոխված (այս դասագիրքը ունեցավ երեք հրատարակություն), «Հարվածային»՝ կիսագրագետների համար, որ ունեցավ երկու հրատարակություն, երկու «Մայրենի լեզու»՝ մասսայական դպրոցների երրորդ և չորրորդ դասարանների համար:

Նշեմ, որ ադրբեջանական դասագրքեր կազմելու համար ևս կար մի բրիգադ՝ բաղկացած երկու հոգուց (Հասանգադե և Ալիև): Հասանգադեն իմ մտերիմ բարեկամն էր: Նա մի օր եկավ և ասաց.

–Յուզա՛ջ Մերգո, ախր բան դուրս չի գալիս, չենք կարողանում գոնե այբբենարան կազմել:

–Ռ՛նց թե չեք կարողանում,– զարմացա ես:

–Ճիշտ, ճիշտ, ոչինչ չի ստացվում, եկել եմ խնդրեմ, որ դու մեզ օգնես:

–Լավ, կօգնեմ, միայն Հաջիգար քույրիկիս (կինն է) կասես, որ մի լավ փլավ եփի,– ասացի ես կատակով:

–Այ՛ջի, դու արի, փլավի բանը խեր է:

Իմ մասնակցությամբ այս բրիգադին ևս հաջողվեց կազմել անգրագիտության վերացման դասագիրք՝ «Լենին յուլու» (Լենինյան ուղի) անունով, որը լույս տեսավ 1932 թվականին և ունեցավ երկու հրատարակություն (կազմողներ՝ Ալիև, Իսրայելյան, Հասանգադե):

Թիֆլիսը համատարած գրագետ քաղաք

1932 թվականն է: Անգրագիտության և կիսագրագիտության վերացումը հասել է իր ավարտին: Այս մասին են փաստում դրանք վերացնելու օրավոր բարձր աճը, միջնակարգ դպրոցների ստեղծումը և այն, որ անգրագիտության և կիսագրագիտության վերացման աշխատանքները հասել են քուրդ և թուրք տնային տնտեսուհիներին:

Ահա քաղաքային ժողկրթբաժնում միտք է ծագում Թիֆլիսը հայտարարել համատարած գրագետ քաղաք:

Քաղժողկրթբաժնի վարիչ Կ. Կացարավան այս հարցով ելույթ է ունենում Թիֆլիսի քաղտվետում, սակայն նախագահ Բագրատ Մաչիձեն հակառակվում է՝ համարելով այն վաղաժամ: Հարցը տեղափոխվում է քաղկոմ, որտեղ որոշվում է նախ ստուգել անգրագիտության և կիսագրագիտության վերացման վիճակը քաղաքի բոլոր շրջաններում և հետո միայն որոշում ընդունել: Ստուգումները կատարվում են քաղկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ ընկ. Օբուլաձեի, քաղկրթբաժնի վարիչ ընկ. Կացարավայի և իմ մասնակցությամբ: Արդյունքները դրական են: 1932 թ. ապրիլի 20-ին Քաղաքային գործադիր կոմիտեն, լսելով ընկ. Կացարավայի զեկուցումը, որոշում է Թիֆլիսը հայտարարել համատարած գրագիտության քաղաք:

Այդ կապակցությամբ Թիֆլիսի քաղտվետը, պրոֆմիությունների խորհուրդը, անգրագիտության

և կիսազրագիտության վերացման կամավոր ընկերությունը միասին զեկուցումներ են ուղարկում Մոսկվա և Վրաստանի կառավարության առաջին քարտուղար ընկ. Մելաձեին, լուսժողկոմ Մարիա Օրախելաշվիլուն:

Թիֆլիսի քաղկրքբաժինն արծաթյա հատուկ կրծքանշաններ պատրաստել տվեց և պարգևատրեց առավել աչքի ընկնող կուլտրբանակայիններին և այլ աշխատողների, որոնց թվում էր նաև մի շատ պատկառելի ծերունի՝ մեր հռչակավոր կոմպոզիտոր Քրիստափոր Կարա-Մուրզայի եղբայրը:

Բացի այս բոլորից՝ շատ կուլտրբանակայիններ քաղկրքբաժնի կողմից պատվոգրեր և այլ տեսակի պարգևներ ստացան:

Թիֆլիսի մասին հայտարարությունն ավելի նշանավորելու համար որոշվեց հրատարակել պատկերազարդ մի բրոշյուր (ժուռնալ)՝ «Тифлис город сплошной грамотности» վերնագրով, որի համար ընտրվեց երեք հոգուց բաղկացած խմբագրական կոլեգիա (պրոֆ. Ծերեթելի, ժողկրքբաժնի քաղլուսբաժնի վարիչ Վ. Մայիլյան և տողերիս հեղինակը): Այն լույս տեսավ 1932 թ. մայիսին: Ինտերնացիոնալ բնույթ էր կրում: Նյութերը տրված էին վրացերենով, ռուսերենով, հայերենով, ադրբեջաներենով: Տպագրվել էին հինգ հոդվածներս, որոնցից մեկը՝ հայերեն:

«Թիֆլիսը համատարած գրագետ քաղաք» հայտարարության հետ միասին իմ աշխատանքները կարծես թեթևացան:

Վերջացավ նաև № 70 աշխատանքային դպրոցում թեքման առարկաների դասավանդումը: Հինգ տարվա ընթացքում տվեցի երկու շրջանավարտ: Նրանցից մեկը՝ Ջաբել Թևանյանը, սհա թե ինչ է գրում 1968 թ. «Ավանգարդ» թերթի № 9 (7428)-ում: Հոդվածի վերնագիրն է՝ «Էջեր իմ օրագրից»:

«Ապրիլ ամիսն է, մոտենում է ուստարվա վերջը: Այդ օրերին ընկ. Իսրայելյանը կարծես ավելի երիտասարդացել է, ավելի աշխուժացել:

Նա ոգևորված մեզ կոչ է անում «մեկնել դեպի խավար գյուղը, լծվել գյուղի լուսավորման և սոցիալիստական վերակառուցման գործին...: Այսպիսով ես ավարտեցի Թիֆլիսի № 70 աշխատանքային դպրոցը հույժ բավարար (զերագանց) գնահատականներով...»

Հուլիսի 28-ին Թիֆլիսի ղեկավարության միջնորդությամբ ես գործուղում ստացա Ախալքալակի գավառում աշխատելու համար...: Հուլիսի 30-ին՝ առավոտյան ժամը 8-ին, խրճիթավարները հավաքվել էին վերապատրաստման դասընթացներին:

Ուրախությանս չափ չկար, երբ իմացա, որ ընկ. Իսրայելյանն էլ այստեղ է: Դասն անցնում էր չափազանց հետաքրքիր: Ես առաջարկեցի հարցերին պատասխանում էի, որովհետև սովորել էի: Վեց ժամ պարապելուց հետո բոլորս գնացինք ճաշելու: Օգոստոսի 7-ին՝ ժամը 8-ին, սկսվեցին գործնական

աշխատանքները...: Երկար աշխատելուց գլուխս ցավում էր: ...սխավեցի, ընկ. Իսրայելյանը բարկացավ ոչ թե իմ, այլ մյուսների վրա, որովհետև բոլոր աշխատանքներն ինձ վրա էին գցել: Ապա դառնալով ինձ՝ ասաց. «Ոչինչ, չի սխավում նա, ով ոչինչ չի անում»:

Ապա Ջաբել Թևանյանը պատմում է, թե ինչպես Վաչե գյուղի խրճիթ-ընթերցարանի աշխատանքի ընթացքում, անլուր զրկանքներ ու տառապանքներ հաղթահարելով, իր լուսն է դրել գյուղի լուսավորության վսեմ գործին:

Թիֆլիսի ժողկրքբաժնում աշխատում էի քաղլուս գծով, և ընկեր Կացարվան ազգային որևէ դպրոց այցելելիս ինձ ևս տանում էր իր հետ: Այդ ժամանակաշրջանում Թիֆլիսում գոյություն ունեին հարյուրից ավելի դպրոցներ: Նրանք, ըստ համարների, բաժանվում էին հետևյալ կերպ.

- 1) Վրացական՝ № 1-39
- 2) Ռուսական՝ № 40-69
- 3) Հայկական՝ № 70-95
- 4) Ադրբեջանական՝ № 96-97
- 5) Կազանյան թաթարների դպրոց՝ № 98
- 6) Հունական՝ № 100
- 7) Գերմանական՝ № 99
- 8) Օսեթական՝ № 101:

1932 թվականից հետո բացվեց քրդական երկու և ասորական (№ 105) մեկ դպրոց: Վերջինիս տնօրենն էր Կարսի շրջանի նախկին տեսուչ Աբրահամ Միմոնովը:

1928 թվականից սկսած՝ չէր անցնում մի ամառ, որ ես մոբիլիզացիայի չենթարկվելի լուսժողկոմատի կողմից՝ Ախալքալակում կամ այլ շրջանում քաղլուս աշխատողների կուրսեր ղեկավարելու համար: 1929 թ. Ախալքալակում այդ աշխատանքների հետ միասին նաև դասախոսում էի ուսուցչական վերապատրաստման կուրսերում: Մի տարի էլ ոչ միայն ամռան, այլև ձմեռվա արձակուրդներին լուսժողկոմատն իր դպրոցական տեսուչ Սոնյա Մայիլյանի հետ ինձ գործուղեց Ախալքալակ՝ ստուգելու հայկական դպրոցները: Տպավորություններիս և ստուգումների արդյունքների մասին «Մարտակոչ» թերթում գետեղեցի «Հայկական դպրոցների վիճակը Ախալքալակի շրջանում» հոդվածը, որի համար խմբագրությունը հատկացրել էր ամբողջ մեկ էջ:

Այժմ բավական ազատ եմ: 1933 թվականից հետո Վրաստանում այլևս հայերեն դասագրքեր չեն հրատարակվում: Ազգային դպրոցները դրանք ստանում են համապատասխան հանրապետություններից:

Թեքման առարկաների դասավանդումը նույնպես չկա: Իմ ամբողջ ուշադրությունը ու փայփայանքի առարկան մնացել է հասակավորների գիշերային միջնակարգ դպրոցը: Վաթսուն ուսուցիչներից ոչ ոք ինձնից շուտ չի գալիս դպրոց և ինձնից ուշ չի գնում: Երկաթե կարգ ու կանոն է տիրում դպրո-

ցում: Դասամիջոց է: Աշակերտությունը բախում է: Պատուհանի առաջ կանգնած՝ նայում եմ դուրս: Ահա մի երիտասարդ քաշեց մի աղջկա մազերից, ուզում է քարշ տալ, աղջիկը ծվվում է: Պատուհանը ծեծում եմ և տղային ներս կանչում: Կանգնել է գլխիկոր, մեղավորի նման:

-Ինչո՞ւ ես քաշում աղջկա մազերից:

-Խաղում էինք:

-Լավ էիք խաղում, աղջկան ծվծվացնում ես, թե խաղո՞ւմ էինք: Եթե քո քրոջն այդպես քաշեն, դու ի՞նչ կանեիր: Ճիշտ ասա, ապտակ չէի՞ր տա:

-Կտայի,- ասում է տղան:

-Ուրեմն ես կարո՞ղ եմ քեզ ապտակել:

-Այո՛:

-Գնա՛, մյուս անգամ չտեսնեն՝ աղջիկների հետ այդպես վարվես:

Մի օր Երևանում մոտենում է ինձ ինչ-որ մեկը և ասում.

-Բարև ձեզ, ընկեր՝ Իսրայելյան: Ինձ չե՞ք ճանաչում, ձեր աշակերտն եմ եղել գիշերային հասակավորների դպրոցում: Գրիգորյան Արամն եմ:

-Շատ ուրախ եմ, չէի կասկածում, որ իմ աշակերտներից կլինեք:

-Ձեզ չեն մոռանում մեր տղաները Թիֆլիսում: Ես էլ չեմ մոռանում, մանավանդ մի դեպք: Դպրոցում մի դասից հետո ես եկա և Ձեզ խնդրեցի, որ թույլ տաք մնացած դասերից բացակայել: Դուք մերժեցիք, որ դասերից բացակայելը ուրիշների համար վատ օրինակ կլինի, չեմ կարող թույլ տալ: Ես ասացի, որ միևնույնն է, թույլ տաք, թույլ չտաք, ես գնալու եմ:

-Դե որ միևնույն է թույլ տամ, թույլ չտամ, դուք գնալու եք, էլ ինչո՞ւ ես եկել թույլտվություն խնդրելու, գնայիր,- ասացիք դուք:

-Հետո՞,- հարցնում եմ,- գնացի՞ր:

-Էլ ո՞նց գնայի: Չգնացի, մնացի մինչև դասերի վերջը:

Այդ տարիներին Թիֆլիսում վատ էր էլեկտրական լուսավորության խնդիրը: Մեկ էլ տեսար հոսանք չկա: Արի ու ժամերով սպասի: Եվ եթե անջատում էին, ամբողջ թաղն էին անջատում: Այս բանը ես վաղուց գիտեի և, որպեսզի պարապմունքները դպրոցում չխախտվեն, խնդրել էի էլեկտրիկին, որ մեր դպրոցի հոսանքն անջատի հարևաններից և միացնի փողոցի հոսանքին: Ահա ուսուցիչները գալիս են դպրոց, ամբողջ թաղը խարխափում է մթության մեջ: Ուրախանում են նրանք. «Այսօր պարապմունքներ չեն լինի, թաղում լույս չկա»: Եվ, ով զարմանք, թաղի խավարի մեջ դպրոցը միակ շենքն է, որ լույս ունի: Ու չէին իմանում գաղտնիքը՝ բացի վրացական բաժնի ֆիզիկայի դասատու Մադրաձեից, որը մինչև օրս էլ ինձ չի մոռացել (Թիֆլիսից Երևան եկող մեր ընդհանուր ծանոթ ուսուցիչների միջոցով միշտ ինձ բարև է ուղարկում):

Սահմանամերձ 5 շրջանների լուսավորման լիազոր

Քաղաքային ժողկրթբարձիմը 1935 թ. դեկտեմբերին Վրաստանի լուսավորման լիազորման մի գրություն է ստանում, որտեղ նշվում է, որ ընկ. Իսրայելյանը, համաձայն լուսավորման հրամանի, դեկտեմբերի 15-ից նշանակվում է սահմանամերձ 5՝ Ախալքալայի, Ախալքալայի, Բոգդանովկայի, Ասպինձայի և Աղիգենի շրջանների լուսավորման լիազոր մեկ տարի ժամանակով, 1300 ռուբլի աշխատավարձով: Ընկ. Կացաբավան կանչեց ինձ և գրությունը մեկնելով՝ ասաց.

-Կարդա՛:

Ես կարդացի:

-Հը, ի՞նչ կասես, ես համաձայն չեմ:

-Եթե դուք համաձայն չեք, Կորնելի Ալեքսեևիչ, ես էլ համաձայն չեմ:

-Ի՞նչ գործ ունես, Մերգո՞ ջան, չուրեմ ընկնես, ինչո՞ւ, այստեղ հեղինակություն չունե՞ս, թե՞ աշխատավարձդ է քիչ: Ահա 13 տարի է, ինչ միասին աշխատում ենք, դեռ մեր երեսը մուր չի քսվել, բաց ճակատով ենք ման գալիս: Ինձ քանի անգամ առաջարկել են լուսավորման պաշտոնը, բայց ես միշտ գերադասել եմ Թիֆլիսի լուսավորման քան լուսավորման ամպագոռոռ անունը: Ուրեմն ո՛չ դու ես համաձայն, ո՛չ ես: Գնա՛, նստի՛ր տեղդ և աշխատի՛ր:

Լուսավորման այս քայլն արել էր առանց Կացաբավային հարցնելու և իմ համաձայնությունը ստանալու:

Բայց լուսավորմանը ձեռք չի քաշում, շարունակ գնալով է: Իսկ ես խուսափողական պատասխաններ եմ տալիս: Բայց մինչև ե՞րբ կարելի է խուսափել: Երբեմն գնում էի և կտրուկ հրաժարվում: Ափսոսում եմ գիշերային հասակավորների դպրոցը: Մնացել էի երկու կրակի արանքում: Այնքան էին տարել-բերել, որ երբեմն ասում էի՝ գնամ, ինչ կլինի, կլինի: Բայց երբ հիշում էի Կորնելի Ալեքսեևիչի բարի, հոգատար, անմասն մարդու դեմքը, հետ էի կանգնում այդ քայլից: Եվ այս քաշքշուկը տևեց ամբողջ ամիսուկես:

Լուսավորման լիազոր

1936 թ. փետրվարի 5-ին ինձ կանչում են Լուսավորության ժողովրդական կոմիտեի Ժողովում Թաթարաշվիլու մոտ: Այնտեղ հայտնում են, որ ինձ հաշվապահությունն է կանչել: «Երևի իմ գործուղումների ավանսային հաշիվների մեջ թյուրիմացություն կա, ուզում են պարզել», - մտածում եմ ես և մտնում հաշվապահություն:

-Ի՞նչ է պատահել,- հարցնում եմ գլխավոր հաշվապահ Խորբեյլաձեին:

-Ինձ մոտ համեցեք, Մերգեյ Յակովլևիչ (ինձ այդպես էին անվանում լուսավորման տեղում), - ասում է գանձապահը:

Ես մոտենում եմ դրամարկդին: Գանձապահը հանում է ռճկացուցակը և խնդրում ստորագրել:

–Սա ի՞նչ է,– հարցնում եմ ես:

–Ձեր աշխատավարձն է՝ 1950 ռուբլի:

–Ա՛յ մարդ, ի՞նչ աշխատավարձ, ի՞նչ բան, ես դեռ աշխատանքի չեմ անցել:

Նայում եմ գլխավոր հաշվապահին:

–Ես չգիտեմ,– ասում է,– ինձ տվել են կոմիսարի հրամանը և պատվիրել մեկուկես ամսվա աշխատավարձ դուրս գրել: Խորհուրդ եմ տալիս ստորագրել, լավ չէ կոմիսարի հրամանին չենթարկվել:

Կարծես մի ներքին ձայն թելադրեց՝ ստորագրիր: Ես ստորագրեցի, փողը վերցրի և շտապեցի տուն:

–Սա ի՞նչ փող է, որտեղի՞ց է,– զարմացած հարցնում է կինս՝ Մարոն,– չէ՞ որ այլևս հայերեն դասագրքեր չեն հրատարակվում Վրաստանում, հոնորար չես ստանում, սա ի՞նչ հանելուկ է:

–«Բարեկենդանն» է բերել, որ յուր ու բրինձ առնենք, փլավ եփենք:

–Հանաքի ժամանակ չէ, ճիշտն ասա:

–Կաշառք է, կաշառք, ա՛յ կնիկ:

–Ճիշտն ասա, թե չէ այս բոպեխ կտանեն և կվառեն:

Պատմում եմ եղելությունը:

–Ապա ի՞նչ պատասխան պիտի տաս ընկեր Կացաբավային:

–Չգիտեմ,– ասում եմ ու երեսիս վրա պառկում թախտին:

Հետևյալ օրը, կուչ ու ձիգ անելով, մտնում եմ Կացաբավայի առանձնասենյակը և հանցանք գործած երեխայի պես կանգնում մոտը:

–Հ՞ը, ի՞նչ կա, տխուր ես:

Ես պատմում եմ եղելությունը:

–Դե ի՞նչ անենք, երբ վճռել ես գնալ, գնա՛, աստված քեզ հետ, հաջողություն եմ ցանկանում: Իսկ ասե՛լ ես, որ ժամկետը լրանալուց պիտի վերադառնաս քո պաշտոնին:

–Ինչպե՞ս չէ, Կորնելի Ալեքսեևիչ, ասել եմ և ստացել Գաբրիսոնիայի համաձայնությունը:

Կարծես մի ծանր բեռ ընկավ վրայիցս:

Երեկոյան հասակավորների դպրոցում իրարանցում է: Բոլորի խոսակցության նյութն իմ գնալն է: Առանձնասենյակիս մոտ սովորողներ են խռնվել՝ մնաք բարով ասելու: Ուսուցչական կոլեկտիվը, որոնց հետ ամբողջ ութ տարի համերաշխ ու ձեռք ձեռքի տված աշխատել եմ, ուզում է «բարի երթ» կազմակերպել: Ես համաձայն չեմ: Բայց, հակառակ իմ կամքի, «բարի երթը» կազմակերպվեց հայկական բաժնի ֆիզիկայի դասատու Սաֆարյանի քնակարանում:

Բոլոր աշխատանքներից ազատված եմ: Պատրաստություն եմ տեսնում մեկնելու պաշտոնավայրս:

1936 թ. փետրվարի 5-ին ժամանում եմ Ախալցխա: Պարտքս եմ համարում առաջին հերթին

ներկայանալ շրջկոմ, որի առաջին քարտուղարը աղբբեջանցի էր՝ Սուլթանով ազգանունով: Այդտեղ հանդիպում եմ զինկոմ Սերգեյ Չխեիձեին, որին ենթարկվում էին երեք՝ Ախալցխայի, Ասպինձայի և Ադիգենի շրջանները: Երբ ընկ. Սուլթանովը իմացավ իմ մասին, շատ ուրախացավ:

–Ինչ լավ է, դուք ինձ կօգնեք, որ իմ անգրագետ զինակոչիկները վերացնեն իրենց անգրագիտությունը,–ասաց նա:

–Մեծ ուրախությամբ, քանի որ այդ իմ հիմնական պարտականությունն է,– պատասխանեցի ես:

Չինկոմ Չխեիձեն շենքերից մեկում մի սենյակ հատկացրեց իմ գրասենյակի համար, իսկ երբ հետագայում ձի գնեցի, ձիս տեղավորեց իր ձիերի հետ: Ինձ մնում էր ձիապանին ամսական մի փոքր գումար վճարել ձիս խնամելու համար:

Առաջին հերթին հրավիրեցի լիազորության աշխատողների՝ հաշվապահ, երկու հրահանգիչ (մեկը հայ, մյուսը՝ թուրք), և մեկ տեխնաշխատող: Ապա սկսեցի շոշափել «թշնամուս», որի դեմ պիտի սուր պայքար մղեմ: Շրջանների ժողկրթաժվարների խորհրդակցության ժամանակ մենք որոշեցինք շաբաթվա ընթացքում հաշվառել բոլոր անգրագետներին և կիսագրագետներին: Կազմակերպեցի անգրագետ և կիսագրագետ զինակոչիկների համար կենտրոնական դպրոց, որտեղ ընդգրկվեց 120 հոգի: Ամեն մի զինակոչիկին նշանակեցի ամսական 30 ռուբլի թոշակ: Դպրոցն ապահովեցի որակյալ ուսուցիչներով, դասագրքերով և գրեմական պիտույքներով: Չինկոմ Չխեիձեն գոհ էր...

Սրանից հետո սկսեցի շրջաններում անցկացնել կոնֆերանսներ, որտեղ հանդես էի գալիս անգրագիտության վերացման թեմայով՝ կոչ անելով կարճ ժամկետում իրագործել Լենինի՝ «Սովորել, սովորել և սովորել» լոզունգը: Այս կոնֆերանսներում ելույթ էին ունենում շրջկոմի ագիտացիայի և պրոպագանդայի վարիչները, դպրոցի տնօրենները: Ինձ հետ էր միշտ և զինկոմ Չխեիձեն, որի ելույթները նույնպես նպաստում էին գործին: Պետք է ասեմ, որ շրջաններից երեքն աղբբեջանական էին: Ախալցխայի 72 գյուղերից 16-ը հայկական էին, Ադիգենի շրջանում վրացական ընդամենը մեկ գյուղ կար՝ Ուդե անունով, իսկ Ասպինձայի շրջանում՝ հայկական մեկ գյուղ՝ Տամալան: Այնպես որ անգրագետների և կիսագրագետների վերացման աշխատանքը հիմնականում թուրք ազգաբնակչության մեջ էր կատարվում:

Շրջանում մեծ թափ էր ստացել անգրագետների և կիսագրագետների խմբակների կազմակերպումը: Ժողկրթաժիմների կատարած աշխատանքը գնահատվում է: Տեսուչների ստուգումներն ի մի բերելով՝ նշանակում էի կոնֆերանսներ, որոնք գործին շատ էին նպաստում, որովհետև խոսվում էին լավ ու վատ աշխատանքների մասին: Իսկ ոչ ոք չէր ցանկանում, որ իր անունը վատերի շարքում լինի, քանի

որ կոնֆերանսում նստած էր լինում և շրջկոմի քարտուղարը:

Աշխատանքների այս եռուն ժամանակաշրջանում ադրբեջանական գյուղերից ահազանգեր էին գալիս: Անգրագետների խմբակը կազմված է, բայց գիրք չկա: Աշխատանքը տապալվում է: Ի՞նչ անել...: Վրաստանն այլևս ազգային դասագրքեր չի հրատարակում, Ադրբեջանի Հանրապետությունը դասագրքեր չի ուղարկում: Իսկ «Լենին յոլու» այբբենարանը սպառվել է: Աշխատանքը տապալվում է, իսկ օգնել ոչ որ չի կարող...

Ադիգենի շրջանի ժողկրթբաժնի եմ նշանակել Թիֆլիսի թուրքական № 96 միջն. դպրոցի տնօրեն Ռիզա Շահվելադովին, որի հետ շատ մտերիմ էի դեռևս Թիֆլիսում:

Ես ճանապարհվում եմ Ադիգեն Շահվելադովի մոտ:

– Ես այդ գործում անգոր եմ քեզ օգնելու, Մերգո՛ դայի (որպես հարգանք՝ ադրբեջանցիներն ինձ դայի են ասում):

– Գիտես ինչ, Ռիզա՛, արի միասին մի փոքրիկ այբբենարան կազմենք,– ասում եմ ես:

– Իսկ ո՞վ թույլ կտա,– ասում է Ռիզան,– ո՞վ կհրատարակի:

– Վեր կաց, գնանք շրջկոմի առաջին քարտուղար Ռատի խանի մոտ:

Ռատի խանը մեզ լսելուց հետո ասաց.

– Եթե գործը պահանջում է, և դուք կարող եք կազմել, կազմեք, մեր տպարանում կտպենք:

Տասը օր-գիշեր նստեցինք և երկուսով 48 էջանոց մի փոքրիկ այբբենարան կազմեցինք: Ռիզա Շահվելադովը բանաստեղծ էր: Տպարանն ամեն ինչ թողեց և սկսեց 2000 տպաքանակով շտապ տպել մեր գիրքը՝ «Այբբենարան» խորագրով:

Ես ուրախ եմ, ադրբեջանական խմբակներն ունեն դասագրքեր: Բայց իմ ուրախությունը կարճ տևեց: Հիմա էլ մի ուրիշ ցավ ու դարդ առաջ եկավ: Թուրք կանայք չեն հաճախում լիկկայաններ՝ պատճառ բռնելով, թե տղամարդ ուսուցչիներ են:

– Թուրքի կինը չի գնա տղամարդու մոտ սովորելու,– ասում են կանայք, ասում են նրանց ամուսինները:

Մնացել եմ շվարած: Հիմա ի՞նչ անեմ: Գնում եմ Ախալցխայի ադրբեջանական մանկավարժական տեխնիկումի տնօրեն Արիֆ Սադրխովի մոտ:

– Արիֆ ջան, ի՞նչ անեմ, թուրք ուսուցչուհիներ որտեղի՞ց ճարեն:

Արիֆը մտածում է: Տեխնիկումի շրջանավարտների մեջ կա 4 աղջիկ: Նրանք էլ մայիս-հունիսին կավարտեն տեխնիկումը:

– Կարո՞ղ ենք ուսուցչուհիների կուրսեր կազմակերպել,– հարցնում եմ ես:

– Այո՛, կարող ենք,– ասում է Արիֆը քիչ մտածելուց հետո:

Մեզ հաջողվեց կազմակերպել թուրք ուսուցչուհի պատրաստող երեք կուրսեր: Այս գործում օգնեցին

միջնակարգ դպրոցի տնօրենները: Ընդգրկվեց մոտ 100 թրքուհի: Դասախոս նշանակեցի տնօրենների՝ տարով ամսական 120 ռ. աշխատավարձ, իսկ կուրսերում սովորող կանանց՝ 70 ռուբլի թոշակ:

Ստուգումները, սակայն, ցույց տվեցին, որ անգրագետ կանայք կին ուսուցչուհիների մոտ էլ չեն հաճախում և վերջ: Ի՞նչ անել, գժվել կարելի է, երեխաներ չեն, որ ծնող կանչես կամ թե չէ գայրանաս: «Տե՛ր աստված, հիմա ի՞նչ անեմ: Գրքեր չկային, գրքերով ապահովեցի, ուսուցչուհի էին պահանջում, այդ ևս լրացրի, հիմա ի՞նչ են ուզում»,– մտածում եմ ես, բայց էլի ելք չեմ գտնում: Հիվանդագին վիճակում եմ, խելագարվել կարելի է: Էլ ի՞նչ կարող եմ անել, որ չեմ արել: Պատասխան չեմ գտնում:

Գիշերը մի միտք ծագեց գլխում: Առավոտյան ճանապարհվում եմ Թիֆլիս ու ներկայանում լուսժողկոմատ:

– 30 կարի մեքենա և 1500 մ չիթ կտաք, կվերադառնամ, չեք տա, չեմ վերադառնա,– խիստ և կտրուկ ասում եմ ես:

Ծիծաղում են վրաս.

– Մի մեքենա չենք կարողանում մեր ընտանիքների համար ճարել, սա 30 մեքենա է ուզում:

– Բայց ես հանաք չեմ անում և չեմ ասում, որ ծիծաղ առաջ բերեմ...

Եվ երկար խոսելուց և վիճելուց հետո հաջողվում է ձեռք բերել 15 կարի մեքենա և 1000 մ չիթ:

Բեռնավորված ժամանում եմ Ախալցխա: Խորհրդակցության եմ հրավիրում ադրբեջանական շրջանների ժողկրթբաժնիներին: Որոշում ենք շրջանների 15 խոշոր գյուղերում կազմակերպել կարուճակի 15 դպրոց և չիթը բաժանել դրանց: Հիմա էլ արի կարուճակ իմացող 15 թրքուհի ճարի: Հաջողվում է կարուճակ իմացող 4 թուրք և 11 հայ կնոջ հրավիրել ամսական 100 ռուբլի աշխատավարձով: Ես կարգ եմ սահմանում դպրոցն ընդունվելու համար. «Կարուճակի դպրոց կընդունվեն այն կանայք, ովքեր կվերացնեն իրենց անգրագիտությունը»:

Եվ սկսվում է կանանց հոսքը դեպի կարուճակի դպրոցին կից կազմակերպված լիկկայաններ ճիշտ այնպես, ինչպես ոչխարն է վագում դեպի աղը:

Վերջապես հոգիս հանգստացավ: Թուրք կանայք վերացնում են իրենց անգրագիտությունը: Եվ այս աշխատանքը ես շարունակում եմ մինչև 1937 թ. մայիս ամիսը: Ապա հրավիրում եմ վերջին կոնֆերանսը, որին մասնակցում են մոտ 75 հոգի: Ի նշանավորումն անգրագիտության վերացման աշխատանքների ավարտին՝ կոնֆերանսից հետո կազմակերպում եմ ընդունելություն Ախալցխայի ճաշարանի ընդարձակ դահլիճում, որից հետո մենք լուսանկարվում ենք:

1937 թվականի հունիս ամիսն է: Համարում եմ իմ առաքելությունն ավարտած և ընդարձակ զեկուցումով ու ֆինանսական հաշվետվությամբ ներկայանում լուսժողկոմատ: Չոռոշանամ ասել, որ 3 ամի-

սը մեկ հրավիրում են բանկի, գործկոմի հաշվապահներին, որոնք միշտ միասին ստուգում են ծախսերի փաստաթղթերը, ակտավորում և կարում: Լուսժողկոմատը ընդունում է 112 էջից բաղկացած իմ զեկուցումը և ֆինանսական հաշվետվությունը: Ինձ առաջարկում են մի տարի ևս մնալ Ախալցխայում և շարունակել աշխատանքը: Հրաժարվում եմ՝ պատճառաբանելով, որ այդ շրջաններում այլևս լուսավորության ժողկոմի օգնության կարիք չի զգացվում: Ես պետք է վերադառնամ քաղաքային ժողկրթբաժին: Բայց լուսժողկոմատում այլ կերպ են մտածում:

– Դու ոչ մի քաղժողկրթբաժին չես գնա, կմնաս մեզ մոտ՝ սպարատում աշխատելու:

Ես երկու օր ժամանակ եմ խնդրում մտածելու համար: Տանն եմ, լուսժողկոմատի առաջարկության մասին հայտնում եմ կնոջս:

– Ո՞ր ես գնում քաղժողկրթբաժին, ո՞վ է մնացել որ, բոլորին, բոլորին քշել, տարել են՝ և՛ Կացաբավային, և՛ դպրոցական վարչության պետ Իբրայիլի-ձեին, և՛ Գորգաձեին, իսկ բոլորից առաջ՝ քաղգործկոմի նախագահ Բագրատ Մաչիձեին: Լավ է, որ դու այստեղ չեիր, թե չէ դու էլ նրանց հետ կգնայիր: Համաձայնությունդ տուր և մնա լուսժողկոմատում:

Լուսժողկոմատի աշխատող

Այժմ ես լուսժողկոմատի քաղլուս գլխավոր վարչության աշխատող եմ ազգային փոքրամասնության գծով: Աշխատանքներ պետք է կատարեմ տասը շրջաններում՝ ոչ միայն սահմանամերձ, այլ նաև Բորչալուի, Ղարայազի, Ծալկայի, Լյուքսենբուրգի և Բաշկիչետի շրջաններում, սրանց ավելացրած նաև Աբխազիայի Հանրապետությունը և Հարավային Օսիայի ինքնավար մարզը: Ծանր է աշխատանքս, շատ ծանր է ղեկավարել 19 շրջան: Անընդհատ գործուղման մեջ եմ: Այսօր գործուղումից վերադարձել եմ: Դեռ չվերջացրած իմ զեկուցումը կատարած աշխատանքների, առաջարկությունների և միջոցառումների մասին՝ արդեն պատրաստ է հաջորդ գործուղման հրամանը: Այնքան էի

եղել այդ շրջաններում, որ Ախալքալակը համարում էին իմ երկրորդ հայրենիքը, իսկ Հարավային Օսիայում ինձ «խնամի» էին համարում (չէ՞ որ Արտաշես թագավորը Քոնի ափից առևանգել է Ալանաց թագավորի դուստր Սաթենիկին և ամուսնացել նրա հետ):

Չնայած այսքան գերբեռնվածությանը, այնուամենայնիվ, ինձ հաջողվում էր զբաղվել նաև գրական գործով: Այսպես, օրինակ, 1940 թվականին լույս տեսավ «Լեզվի և գրականության դասավանդումը հասակավորի դպրոցում» մեթոդական ձեռնարկը, իսկ «Գրական թերթում»՝ «Վազարու Աղայան» ակնարկը:

1943 թվականին լույս տեսան երկու բրոշյուրներս՝ «Քաղլուս հիմնարկների ամբողջ աշխատանքը ի սպաս դնել Հայրենական պատերազմին» և «Ֆաշիզմը մարդկության և կուլտուրայի ոխերին թշնամին է» վերնագրերով:

1945 թվականին Հայաստանի լուսժողկոմ Ար. Խաչիկյանի միջնորդությամբ ես փոխադրվում եմ Հայաստան, որտեղ գտնվում էին երեխաներս՝ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը և քիմիայի դասատու Լաուրա Իսրայելյանը:

Այժմ ես 90 տարեկան եմ, ֆիզիկական և մտավոր ուժերս թույլ են տալիս աշխատելու: 75 տարեկան հասակում անցնելով թոշակի՝ կազմել եմ.

1) Ղարաբաղի բարբառում գործածվող բառերի բացատրական բառարան (մոտ 10 հազար բառ):

2) Ղարաբաղի բարբառի առանձնահատկությունները (չորս մամուլ):

3) Թևակոր և փոխաբերական մտքով գործածվող դարձվածքները Ղարաբաղի բարբառում (մոտ 1000 դարձվածք):

4) Աֆորիզմներ, առածներ, առակներ, զրույցներ և այլն (15 մամուլ):

5) Ազգագրական նյութեր (10 մամուլ):

Այս բոլորն ընդունել են Հայաստանի գիտությունների ակադեմիայի համապատասխան ինստիտուտները՝ հրատարակելու համար:

Այժմ վերջացնում եմ այս հուշագրությունը:

ՎԻՍԱԳՐԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՉԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Արմեն Տեր-Ստեփանյան

Երկու խոսք

Տարիներ առաջ Մատենադարանի ձեռագրերից մեկի հիշատակարանների մեջ, որը պարունակում էր Ղևոնդ եպս. Փիրղալեմյանի «Նշխարք պատմութեան հայոց»-ը, հանդիպեցի մաս վիմագրերի: Սկսելով դրանից՝ ժամանակի ընթացքում վիմագրեր հավաքեցի մաս այլ ձեռագրերից: Երբ Սամվել Կարապետյանը կարևորեց այդ աշխատանքը և այն ներառեց ՀՃՈՒ հիմնադրամի ծրագրային աշխատանքների շարքում, սկսեցի արդեն ամբողջացնել հավաքածուն:

Սույն ժողովածուում տեղ են գտել միայն Մատենադարանի ձեռագրերի վիմագրերը: Շատ լավ կլիներ, որ հետագայում պատրաստվեր «Վիմագիր պատմություն հայոց» մի ժողովածու, ուր կհավաքվեին Հայաստանին ու հայերին վերաբերող բոլոր արձանագրությունները՝ սեպագիր, բևեռագիր, հունարեն, հայերեն և այլն: Նույն գրքում տեղ կգտնեն և՛ Արտաշես արքայի սահմանաքարերը, և՛ Արգիշտի քագավորի՝ Էրեբունու, և՛ Տրդատի՝ Գառնիի հիմնադրման արձանագրությունները, և՛ Տիգրան Մեծի՝ Տիգրանակերտի դռան պատգամը, որ մեջբերում է Մարկոս Ավրիլիոսը որդուն ուղղված թղթում. «Յամին հիմնադրութեան Հռոմայ 659, Լուկուլլոս... Սիրիդատայ դեմ պատերազմի գնացած ստեղծ, Տիգրանակերտ քաղքին արքունեացը պղնձի դրանը վրայ արձանագրութիւն մը գտաւ...»¹: Արձանագրության իմաստն այս էր. «Թեկացի քագատր չէ ան, որ մէկը միայն սիրելով՝ կեանքը վտանգի մէջ կը դնէ ու կեանքը չապահովեր զամենքը սիրելով: Խոհեմ քագատր չէ ան, որ մէկու մը ազահությունը լեցնելու համար՝ ուրիշները կը գրկէ: Յանդուզն քագատր է ան, որ մէկու մը խորհուրդին կը հետեւի շատերուն խորհուրդին դեմ: Վերջապէս անխելք քագատր է ան, որ մէկը սիրելուն համար՝ ամենուն ատելի կընէ զինքը»: Լուկուլլոս պատերազմէն բերած գանձը մէկ կողմը դրաւ, մեկ ալ կողմն ալ աս արձանագրութիւնը եւ ծերակուտին ըսաւ, որ երկուքին մէկը ընտրէ: Ծերակույտը մէկդի ձգեց գանձը ու արձանագիրը ընտրեց»²:

1 Ավրիլիոսը արձանագրությունը վերագրում է Ալեքսանդր Մակեդոնացուն, որ քիչ հավանական է: Հռոմի կայսրը սխալվել է կամ մեծամտաբար խելացի մտքերը միայն հույներին հասու համարելով, կամ այն պարզ պատճառով, որ արձանագրությունը եղել է հունարեն՝ չիմանալով, որ այդ շրջանում Հայաստանում բոլոր արձանագրություններն էլ գրվում էին այդ լեզվով:

2 Մարկոս Ավրիլիոս կայսեր իմաստասիրական եւ խրատական բողոքերը, Վենետիկ, 1868, էջ 329-330:

Շուրջ մեկուկես դար առաջ տասնյակ արձանագրություններ են լույս տեսել «Հայաստան», «Մասեաց աղանի» և այլ պարբերականներում, որոնք այսօր գիտնականներից քչերին են հասու: Այդ բոլոր արձանագրությունները՝ մի գրքում: Վատ չէր լինի, որ այդ գրքին իբրև հավելված կցվեին փայտի (օրինակ՝ եկեղեցիների կամ այլ շինությունների դռների), խեցեղենի վրայի, ինչպես մաս այլ՝ ոչ վիմագիր արձանագրությունները³:

Այժմ կրկին անդրադառնանք սույն աշխատությանը:

Բոլոր վիմագրերն այբբենական կարգով ներկայացված են ըստ վայրերի:

Վիմագրերի առաջին հավաքողներից մեկը եղել է Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանցը, որի նյութերը հայտնաբերել և իր «Ստորագրութիւնք»-ում օգտագործել է Հովհաննես եպս. Շահխաթունյանցը:

Ղևոնդ Փիրղալեմյանը վիմագրերը հիմնականում քաղել է բնագրերից: Սակայն երբեմն բերում է մաս Շահխաթունյանցից, Ալիշանից, Բժշկյանցից, «Հայաստան» և «Մասեաց աղանի» պարբերականներից: Մենք վերցրել ենք միայն այն վիմագրերը, որոնց հիմքը սպագրերը չեն: Այստեղ ավելորդ չենք համարում նշել, որ վիմագրերի հավաքողներից և մեզ հասցնողներից մեկն էլ եղել է Հակոբ արք. Թովուզյանը, որի ընդօրինակություններից մեծապես օգտվել է Փիրղալեմյանը: Վերջինիս հավաքած վիմագրերը № 4515, 6273, 6332 և 9027 ձեռագրերից են: Նույն վիմագիրը հանդիպում է ոչ միայն իր իսկ տարբեր ձեռագրերում, այլև երբեմն մույն ձեռագրում: Դրանք համեմատել ենք և նշել ուշագրավ տարբերությունները, քանի որ հնարավորություն չենք ունեցել պարզելու, թե ճշգրիտը որն է:

Փիրղալեմյանից բերում ենք մաս խաչերի, աջերի, մասնատուփերի և այլ առարկաների ոչ վիմագիր արձանագրությունները, քանի որ հայտնի չէ, թե դրանք առանձին ժողովածուով երբ կիրատարակվեն (ձեռագրերին պատկանող առարկաներինը չենք վերցրել, քանի որ դրանք հիշատակարաններ են):

3 Այդպիսի արձանագրությունների հանդիպում ենք մաս այնպիսի գրքերում, որտեղ դրանք հայկական չեն ներկայացված. տե՛ս, օրինակ, Миллер Ю, Художественная керамика Турции, Ленинград, 1972, стр. 31: Սակայն անգամ մնացած գրքերը մեզ հուշում են, թե որտեղ կարող ենք փնտրել հայկական խեցեղեն:

Մեր բոլոր ծանոթագրությունները բերված են [] փակագծերում: Մյուս բոլորը Փիրոլալենյանին են կամ ձեռագրերինը, նայած թե արձանագրությունը որտեղից է:

ԱԼԷՍՏԱՂ¹

«Ալենտաղի անուն գեղջ եկեղեցոյ նորոգութեան արձանագրի պատճեն».

Նորոգեցաւ ի հիմանց եկեղեցիս Սուրբ Նշանի արդեամբք ազգիս հայոց, ի պատրիարքութեան տեսն Ստեփաննոսի սրբազան արքեպիսկոպոսի, 18 յունիս 15²:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 378ա:

ԱԿԱՆՑ

«Ականուց եկեղ. նորոգութիւն».

Նորոգեցաւ տաճարս եւ շինեցաւ ժամատունս ձեռամբ Սոկացի Յոհաննէս վարդապետին, թվ. ՌՄԺԷ (1768)³:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 367բ:

ԱԿԹԱՍԱՐ

Ա «Աղթամարայ Անենափրկիչ եկեղեցոյ շինութեան արձանագրութիւն».

Ի հայրապետութեան տեսն Ստեփաննոսի շինեցաւ եկեղեցիս ծախիւք սրբասնեալ կրօնատրացն Սարգսի եւ Ստեփաննոսի՝ որդեաց Հռոմիայի (՞) յարդար վաստակոց իրեանց. կատարեցաւ յիշատակ հոգւոց իրեանց եւ ծնողացն եւ ազգականաց: Որք հանդիպիք, յիշեցէք ի Քրիստոս, թվ. ՉԽԲ [1293]⁴:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 388ա:

Բ «Ի մի խաչարձանէ».

Թվ. ՊԻԶ (1377) գպատուական կրանատորքն զՍտեփաննոս եւ զԹումայ եւ զԾնադս նոցա... յիշեցէք ի Քրիստոս⁵:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 332ա:

Գ «Ի մի պարբեւ խաչարձանէ».

Թվին ՊԿԳ (1414), (ես) հայոց կաթողիկոս տէր Չաքարիայ⁶, կարողութեամբն աստուծոյ եւ առաջնորդութեամբ նորին կանգնեցի զխաչս բարեխաւս առ աստուած հոգոյս իմոյ: Որք երկիր պագէք, յիշեցիք ի Քրիստոս Յիսուս⁷:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 334բ:

1 Ալենդաղը կոտանդնուպոլսամերձ գյուղերից էր:

2 «1873 մայիս 12 շաբաթ յԱլենտաղի»:

3 «66 սեպ. 17 յԱկանց»:

4 «1866 նոյեմ. 10 հինգշաբթի յԱղթամար»:

5 «1887 յուլիս 12 Վարդապետի կիրակի յԱղթամար»:

6 «Աղթամարայ»:

7 «1887 յուլիս 12, Աղթամար»: [Փիրղալենյանն արձանագրությունն ընդօրինակել է երկու անգամ: Հաջորդ՝ էջ 454բ-ի վերջում ունի՝ «ԶԳրիգոր կազմող (խաչիս) յիշեցէք ի Քրիստոս»]:

Դ «Աղթամարայ դարբասի դրան արձանագրութիւն».

Շնորհոք Քրիստոսի շինեցաւ գաւիթս ի թվ. ՌՄԺԲ (1763) ամին արդեամբ Թումայ կաթողիկոսին եւ ձեռամբ Սօրվեցի ութայ Նահապետին եւ ութայ Թումին. որք կարդայք, տուք զողորմիճ⁸:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 390բ:

Ե «Աղթամարայ Խաչատուր կաթողիկոսի մահարձան».

Խաչս տուրք բարեխոս է առ աստուած վասն փրկութեան Խաչատուր կաթողիկոսին, թվին ՌՄԿԳ (1814)⁹:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 3ա:

Զ «Աղթամարայ Յոհաննէս կաթողիկոսի խաչվեմ».

Խաչս բարեխոս է առ աստուած վասն փրկութեան Յոհաննէս կաթողիկոսին¹⁰, թվ. ՌՄՀԴ (1825)¹¹:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 339ա:

Է Մեռնատուն.

Ի հայրապետութեան տեսն Ստեփաննոսի շինեցաւ եկեղեցիս ծախիւք սրբասնեալ կրանատրացն Սարգսի եւ Ստեփաննոսի՝ որդեաց Հռոմիայի յարդար վաստակոց իրեանց: Կատարեցաւ յիշատակ հոգոյ իրեանց եւ ծնադացն եւ ազգակցացն: Որք հանդիպիք, յիշեցէք ի Քրիստոս:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6332, էջ 3ա:

Ը Մեռնատան դռան վրա.

ԶՀարիկ Կաղ յիշեցէք ի Քրիստոս:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6332, էջ 3ա:

Թ «Աղթամարայ Բ Խաչատուր կաթողիկոսի խաչվեմ».

Խաչս բարեխոս առ միածին, Սակս փրկութեան հայրապետին, Վեհափառ Խաչատրոյ սրբազանին, Որ փոխեցաւ առ տէր յերկին, Ի հազար եւ [երեք]¹² հարիւր հնգին (ՌՅԵ-1856), Հայոց մեծաց թուականին, Յունիս ամսոյ երտասանին¹³:

Հիմք. **Ղեւոնդ եպիս. Փիրղալենեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 3ա:

ԱՍԱՍԻԱ

Ա «Ամասիոյ Չարիսափան Սուրբ Աստուածածին եկեղ. նորոգութիւն».

8 «1866 նոյեմ. 10 յԱղթամար»:

9 «1866 նոյեմ. 10 հինգշաբթի, ի սուրբ արքուն Աղթամարայ»:

10 «Յոհաննէս կաթողիկոսն իր խաչվեմն ի կենդանութեան իրում կանգնեալ էր»:

11 «66 նոյ. 10 յԱղթամար»:

12 [Հավելումը մերն է: Բնագրի սկզբում գրված է 1856-ՌՅԵ: Առանց երեքի թվականը սխալ կլինի, ուստի և դա ավելացրել ենք՝ ճիշտ թվականը ստանալու նպատակով]:

13 «1866 նոյեմբեր 10 յԱղթամար»:

Ի բնականորեն աննասուրբ Երրորդության եկեղեցիս այս յանուն Սուրբ Աստուածածնայ ի հիմնանց նորոգեցաւ բազում ծախիւք արդեամբք համայն ժողովրդեան տրին, ի ՌՄԾԳ (1804) թուին¹⁴։

Հիւր. **Ղեւոնդ եպիս. Փիրղալեմեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 372ա։

Բ «Ամասիոյ Սուրբ Յակոբ եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւն».

*Նորոգեալ տաճարս լաւ քան զառաջին,
Յանուն Սժքնայ սուրբ հայրապետին,
Որք վաստակեցին ի շինման տրին,
Յերկնից դպրութեան անուանք գրեցին:
Յամի տեառն 1841 եւ հայոց ՌՄՂ¹⁵։*

Հիւր. **Ղեւոնդ եպիս. Փիրղալեմեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 6273, էջ 380ա։

ԱՄԻՆԻ ՎԱՆՔ

ՌԽԸ (1599) թվին վերստին նորոգեցաւ եկեղեցիս վերակացութեամբ Բարսեղ վարդապետին։

Հիւր. **Ղեւոնդ եպիս. Փիրղալեմեան**, Նշխարք ..., ՄՄ, ձեռ. 4515, էջ 351։

ԱՌՏԵՐ

«Առտեր կղզոյ եկեղեցոյ նորոգութիւն».

Ի **ՋԻԱ (1472) թուին, ի հայրապետութեան¹⁶ տեառն Ստեփաննոսի || շինեցաւ տաճարս Սուրբ Աստուածածնին ձեռամբ Ստեփաննոսին], || որ մականունն հա... ար...¹⁷։**

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 9աբ, 465ա։

ԱՄՐԱՅ

Այս է հանգիստ Վարդանայ քահանային, որ վախճանեաց զկեանս իւր եւ փոխեցաւ առ Քրիստոս։ Որք հանդիպիք այս գերեզմանի եւ երկիր պագանէք սուրբ խաչիս, յիշեցէք ի սուրբ աղօթս ձեր Վարդան սրբասնեալ քահանայս եւ զկենակից իւր... թուին **ՋԾԸ (1509)¹⁸։**

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 470ա։

ԱՐԱՔԿԻՐ

Ա «Արապկերու Սուրբ Աստուածածին եկեղ. նորոգութեան արձանագրութիւն».

*Կանգնեալ կառուցաւ այս եկեղեցի
Յանուն եւ ի փառս Սուրբ Աստուածածնի,
Հզօր հրամանաւ սուրբան Մահմուտին՝
Տիեզերասատ ահեղ արքային,
Եւ ջանիւք Պօլսոյ վեհ պատրիարզին,
Տեառն Կարապետ ըստնապետին,*

14 «1864 ղեկ. 16 չորեքշաբթի յԱմասիայ»։
15 «1864 ղեկ. 28 յԱմասիայ, յաւուրս Գեորգայ արհի եպիսկոպոսի՝ ղիտի տեղոյն, որ էր աշակերտ Յակոբայ պատրիարզին»։
16 «Աղթամարայ»։
17 «1866 ղեկտեմբեր 29 ի Վան, յԱռտեր կղզին»։ [էջ 465ա-ում՝ «Մաշեալ էին տաքս ի հնութենէ ժամանակին»]։
18 «1866 սեպ. 15 չորեքշաբթի յԱսրաֆ գիւղ»։

*Ընդ միջնորդութեան ամիրայից ազգին,
Յաւետ Պիշմիշեանց բարեսէր տոհմին,
Հոգաբարձութեամբ մեր ամիրային,
Մահտեսի Գասրար իշխանագնէին,
Արդեամբք եւ ծախիւք համայն մեր ազգին,
Որք ի յԱրապկեր սոյն այս քաղաքին,
Թուին հայոց ՌՄՉԲ (1833), սեպ. 3¹⁹։*

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 377բ։

Բ «Արապկեր քաղաքի հայոց եկեղեցոյ մերձ մշտահոս աղբեր արձանագրութիւն».

*Որք ի յաղբերէս ի ջրոյս զգալի,
Ընպէք առ ի գոլ ի բորբոք սրտի,
Յէին մաղթեցէք տրին պատճառի,
Ընու ի կենաց ջրոյն պարգեւի.
Արդ անուն սրբոյն տիրուհոյս յարգի,
Բերեալ հաստատեալ կանգնեալ կառուցի,
Հողով է ինձ վարձ, վարձ փոխարինին,
Չանուն ստանալ ընդ անցաւորի,
Հազար յոթ հարիւր երեսուն եւ իննի,
Յամի փրկութեան փրկելոց սեռի²⁰։*

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 379բ։

Գ «Վերոյիշեալ վիմի յաջ կուսէն».

*Վեմանկեան լրութեան շնորհաց միշտ էին,
Այս յարկ տիրական տաճար երկնային,
Խորհրդականօք սեմօք եօթնեկին,
Յօտէ զիւր որդիս յիւր փեսայն վերին։
Ի ձախ կուսէ.
Ի սմա հաստատի վեմ ահաւորին,
Սովաւ ընդունի գորս յիւր սահմանին,
Եւ որք հրամանին հպատակ լինին,
Խառնին յերկնային սուրբ հարսնարանին²¹։*

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 377բ-378ա։

Դ «Արապկերու եկեղեցոյ պարսպի դրան վերայի արձանագրի օրինակն է».

*Ես եմ դուռն ընդ իս, եթէ որ մտանիցէ, կեցցէ,
մտցէ եւ ելցէ եւ ճարակ գտցէ (Յօհան Ժ, համար 9)։*

«Տէրունական խօսքին ներքին հետեւեալն ես կայր».

*Ով հայք, նախանձորդ ճիշտ զփրկչին լուեալ
զայս քան իւրախոյս զին մարդն յանձանց ընկիցէք
միշտ, 1861 թուականի փրկչին սեպ. 16²²։*

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 384բ։

Ե «Արապկերի Սուրբ Թարգմանչաց դպրոցի յիշատակարանի պատճէն».

19 «1865 յունիս 24 յԱրապկեր։ Հեղինակ ոտանատրիս էր ըստ աւսից տեղացոց ի տէր հանգուցեալ Մաղմկեցի Յովսէփ պատուելին, որ է հեղինակ Քննութիւն խնդրոց անուն գրոց, որ ի լոյս ընծայեցաւ զկնի հանգստեան նորին ի Կ. Պօլսի քաղաքի»։
20 «1865 յունիս 24 յԱրապկեր քաղաք, յաւուրս առաջնորդութեան Գրիգոր արքեպիսկոպոսի Սինթանճեան Կ. Պօլսեցոյ»։
21 «65 անդ յԱրապկեր»։
22 «1865 յունիս 24 յԱրապկեր քաղաք։ Հեղինակ վերոյգրեալ երկտող չափականիս է հանգուցեալ Աւետիս վարժապետ Չուլպեան Արապկերցի»։

Սուրբ թարգմանիչք Հայկեան լեզուիս դրունք երկբացիկ,

Ձերդ իմաստից շող կաթեցէ յայս ուսման տուն,
Եւ քաջ հովուիս հոգւոց մերոց փոյթ գեղեցիկ,
Որ Մինքանձեան Բիւզանդացի դէտ Չուարթ անուն,
Եւ փոյթ ազգիս պայազատաց քաջատոհմիկ,
Եւ Եւկանեան աղա եղբարց տուրք թոթողուն,
Որք մահտեսի Կարապետեան ցեղ ուստանիկ,
Մեղոս, Յօհան յարգապատիւք մեր քաջագուն,
Կամ Յարութեան ուղեղն ազնիւ զարմին բնիկ,
Յարգին Յակոբ եւ Փիլիպպոս եղբարք նոցուն,
Հայրենասէր ոգւոց կացցեն ջինջ հայեցիկ,
Լոյս ձեր շնորհաց մնալով աստեն միշտ ար-
ծարծուն, 1862 յունվար 1²³։

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 385ա։

ԱՐԱՐՔ

Ա «Արարուց եկեղ. տաճարի արձանագրի պատճեն է».

Շնորհօք բարեբարին եւ կարողութեամբ սուրբ
հոգւոյն շինեցաւ տաճարս Սուրբ Աստուածածնի
հրամանաւ տեսա՞ն Փիլիպպոսի կաթողիկոսին,
ձեռամբ Կիրակոս վարդապետի Աւանցոյ, ի թուա-
կանիս հայոց ՌՂԵ (1646) ամին, ի վայելումն գի-
ղաքաղաք Արարուց, զոր տէր աստուած բարի վա-
յելումն տացէ. աւագերէց տէր Աւետիսին, երիցփո-
խան Մարգարին, ըռէ Ախշիբէկին, տանուտէրաց
տոցին մեծին եւ փոքրին, աշխատողաց եւ մէյմար
Տիրատուրին, առհասարակ ամենեցուն առցեն
վարձս ի Զրիստոս²⁴։

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 360ա։

Բ «Արարուց եկեղ. դարպասի շինութեան յիշատ.».

Դարպասի նորոգումն (եղև) ՌՄԿԲ (1813)
թուին, յաւորս Տէվրիշ փաշային եւ իշխանապետին
Ղարասաֆարեան Յակոբ աղային, ձեռամբ ծերու-
նագարդ տէր Ներսէսին, տէր Մարգարին, տէր Կա-
րապետին, տէր Յովհաննէսին, տէր Եղիազարին եւ
իշխանաց Պօղոս աղային եւ ընկերակից նորին Մի-
մէօնին, որ Ոսպնէպատեան ասի²⁵։

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 273ա։

Գ «Արարուց եկեղեցւոյ խաչկալի արձանագրի պատճեն,
յաջ դրան ներքեւի գիրն է».

Կերտեալ խաչկալս յոյժ զանազան,
Սուրբ տաճարիս Աստուածածնեան,
Որ է պատիւ տէրունական,
Եղև արդեամբ աստի համայն,
ՌՄՁԷ թուականի մեր հայկազեան (1838):

23 «1865 յունիս 24 յԱրապկեր քաղաք, ի տեսչութեան նոյն վի-
ճակին Գրիգոր արքեպիսկոպոսի Մինքանձեան: Հեղինակ թէ
սոյն եւ թէ 169 թիւ [նախորդ] չափականաց է Աւետիս Չուլա-
լեան արժանայիշատակ պատուելին, աշակերտ հոչակելոյն
Յովսէփայ Սաղմկեցւոյ մատենագիր վարժապետին հայոց»:

24 «1865 ի Վան, յԱրարք եկեղ.: Չսոյն վերոյիշեալ արձանա-
գրութեան վեմն յետ վերստին նորոգմանն Արարք եկեղեց-
ւոյն, որ եղև յամի 1884, ի հիւսուածս պատից գործածելով
անհետ արարին»:

25 «68 սեպ. 5 ի Թօփուզեան աշխ.»:

«Ձախակողմ կուսի գիրն է».

Արդ յիշեցէք հարք պատուական,
Աշխատաւոր տրա շինման,
Մահտեսի Մարտիրոս նուաստական,
Տէրն մեր Զրիստոս փրկիչ մարդկան, ||
Յիշեցէ՛ զձեզ յիւր զայստեան:

«Ի վերայ դրանց խաչկալանց աջն Աստուածածին, յորում
գրի».

Մի երկնչիր Մարիամ, զի գտեր զշնորհս աստուծոյ:
«Ձախ Գարբիէլ հրեշտակապետին, յոր գրի».

Պօղոս աղայի որդի Աբրահամ եւ Ավկէ, Մարգսի
որդի Միմն. երկուք միատեղ բազում աշխատանս
կրեցին, որ խաչկալս շինեցաւ: Վարձս իրեանց ի
Զրիստոս ընկալցին²⁶։

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 392բ։

Դ «Արձանագրութիւն նորոգութեան Վանայ Արարուց եկե-
ղեցւոյ».

Ի փառս միոյն աստուծոյ վերականուցաւ Արա-
րուց սուրբ եկեղեցիս եւ շրջապատ պարսպաւ ըն-
դարձակեցաւ անխոնջ ջանիւք Լիւն անապատի վա-
նահայր եւ առաջնորդական տեղապահ տէր Պօղոս
արքեպիսկոպոսի Մելիքեանց եւ արդեամբք ժո-
ղովրդեան, 1884²⁷։

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 514բ։

ԱՐԾԿԷԻ ՍՈՒՐԲ ՍԶԱՆՉԵԼԱԳՈՐԾ ՎԱՆՔ

Ա «Սքանչելագործայ բակի աղբեր վերայի արձանագրի
պատճեն».

Չքերող բարեհամ աղբերս եւ զշինող կամարիս
գտեր Վարդան կրօնատրն եւ զժնողս յիւր յիշեցէք ի
Զրիստոս, թվին ՌԼ Գ (1584)²⁸։

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 9բ-360ա, 488ա։

«Վերոյիշեալ վիմի յաջ կուսէն».

Վէմանկեան լրութեան շնորհաց միշտ էին,
Այս յարկ տիրական տաճար երկնային,
Խորհրդականօք սեմօք եօթնեկին,
Յօտէ զիւր որդիս յիւր փեսայն վերին:

«Ի ձախ կուսէ».

Ի սմա հաստատի վէմ ահաւորին,
Սովաւ ընդունի զորս յիւր սահմանին,
Եւ որք հրամանին հպատակ լինին,
Խառնին յերկնային սուրբ հարսնարանին²⁹։

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 377բ-378ա։

ԱՐԾՈՒԱԲԵՐ

Ա «Նորոգումն Արծուաբեր ուխտին».

ՉԼԴ (1285), յամս Արդուն կայսեր եւ աստուա-
ծապատիւ տեսա՞ն Ստեփաննոսի, յառաջնորդու-
թեան տէր Խ ||³⁰ նորոգեցի զՍուրբ Աստուածածինս
միարա || զուք մեծամեծ եւ փոքուն || հաստուցման եւ

26 «1868 յուլ. 21 ի Լիւն, առ Թօփուզեան»:

27 «Ընդօրինակեցի 1886 յայր. 25 ուրբաթ յինաց երկուշաբթի
յԱրարք»:

28 «1865 յօգոս. 18 ի Վան, յԱրծկէ, ի վանս Սքանչելագործայ»:

29 «65 անդ յԱրապկէր»:

30 [Փիրդալեմյանը գրում է՝ «Գիրս եղծեալ էր»]:

նուիրեցին ընծա աւա ՅՅ յրիանց գոյից ի քա ՅՅ մեծ աշխատանքն նորին գինն ետ ի ձորն, զայգին ՅՅ ձրվն ՅՅ ի յգ ՅՅ զայգին Լէոնն եւ բտ ՅՅ քիշարն արտ Բ ասիլն ի Խարաբաստ արտ ՅՅ ղա ՅՅ ա ՅՅ եւ կրդարն Ա Աջնաբէկ, յԱռինջ արտ ետ Բ Խութլումէլիքն ի շինամէջ արտ Ա յայս ՅՅ մինչ ի Լիանի արտ Բ Սուճաղն յիրաշատն արտ մի, տէր Խաչատուր ականցս նորատուն³¹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 387ա-բ:

Բ Ես՝ Վարագեցի Անանիա վարդապետս, կանգնեցի սուրբ խաչս բարեխօս եղբօրն իմոյ Եղիա կրօնատրին: Որք երկիր պագանէք, յիշեցէք ի Քրիստոս: ՊԾԱ (1402)³²:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 438ա:

Գ Ես՝ Կարապետ վարդապետս³³, կանգնեցի զխաչս բարեխօս առ աստուած եղբօրն իմոյ Յոհննէս հերպետի. որք երկիր պագանէք, յիշեցէք ի Քրիստոս: ՊԲԸ (1449)³⁴:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 460ա:

Դ Ծերուն քահանայն յիշեցէք ի Քրիստոս: (ԶԺԹ-1470):

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 464բ:

Ե «Գարձեալ Արծուաբեր ուխտի առքի».

Ի դանութեան Ղարայ Ուսուֆին եւ ի պարոնութեան Իսպանին եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Կարապետ վարդապետի³⁵ տուաւ հրամանաւ Ուսուֆ պարոն, տուաւ նալաթամով մուրք Սուրբ Աստուածածնիս ի գիւղն Անիշատ, ի շինամէջ Լ [30] մութ³⁶ տեղ ջրով, Ի [20] մութ՝ ոստին ի Կտրած քար, Ժ [10] մութ ջրով, Ի [20] ոստ ի Փապած, ԺԳ [14] մութ տեղ ի Հայրիկէ, ԺԵ [15] մութ տեղ ի Յառինջիկն, Բ [2] Խաղարտն, Բ [2] ակն ջաղաց ի Բողորմարզն, Ա [1] արտ ի Բլուրն, Ա [1] արտ յԱկանց, Դ [4] արտ յԻրիշատ, Ա [1] արտ ի Սկնաւերն, Բ [2] արտ Խառաբաստ, Չ [6] արտ, Բ [2] ջաղաց Սոսկոն, Բ [2] արտ ի Գանձակ, այգի մի: Ով որ հակառակ լինի, զանէծքն Ուրային առնու. եւ որ կամակից լինի, արիւնիս յաստուծոյ եւ յամենայն սրբոց, ամէն³⁷:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 388բ-389ա:

31 «1866, սեպ. 8 յԱրճէշ, ի վանս Արծուաբեր Սուրբ Աստուածածնի»:

32 «ՅԱրծուաբեր»:

33 «Վանահայր էր սա Խառաբաստայ ուխտին եւ եղբօր որդի Չաքէտի եպիսկոպոսին, որ նախքան զայս Կարապետ վարդապետն էր առաջնորդ անդ»:

34 «1866 սեպ. 12 յԱրծուաբեր»:

35 «Սոյն Կարապետ վարդապետ էր եղբօրորդի Չաքէտի եպիսկոպոսին, որ նա եւս լեալ էր առաջնորդ Խառաբաստայ Սուրբ Աստուածածնի ուխտին, որ ասպ ի թուին հայոց ՊԾԸ (1409) ամի վախճանեալ է ի նոյն սուրբ ուխտն»:

36 «Մութ չափի անուն է»:

37 «1866 սեպ. 8 հինգշաբթի օրինակեցի յԱրծուաբեր վանս, յատուր վանահայրութեան տէր Սօդոմոն պարթեալասակ քահանայի»:

ԱՐՃԱԿ

«Արճակ գիւղի եկեղեցոյ շինութեան արձանագրութիւն».
Չայնի երգով օրհնենք զաստուած փրկիչն մեր եւ զարքայն,

Նա, որ արար ողորմութեամբ իւրով աւուրս մեզ արժան, ը

Օր երջանիկ խրախութեան յոր բաղձային հարքն մեր,

Շինել զայս տունս բերկրալի ոչ կարացին ժամանել:

Իսկ յետ բազմաց ժամանակաց, որ այց արար տէր[ն] մեր,

Շինեցաւ տունս զայս տէրունի եւ յիշատակ վասն մեր,

Արդեամբք համայն ժողովրդոց՝ մեծաց, փոքունց եւ կանանց,

Որ եւ տացէ տէր փոխարէն ոգոց նոցա զփառս անանց:

Շրաջանութեամբ փոխառաջնորդ Վասպուրական աշխարհին,

Տեառն Պօղոսի վեհ ազգասէր եւ ծայրագոյն մեր դիտին,

Երեսներորդ եւ եօթներորդ յոբելիւնի թիւ փրկչին Եւ տասն եւ ինն բարդեա ընդ վերնոյն ի թիւ նորոգման սորին (1869)³⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 385բ-386ա:

ԱՐՄԱՇ

Ա «Արմաշու վանուց եկեղեցոյ դրան վերայի արձանագրութեան պատճեն է».

Չօրացեալ յաւէտ ի հոգւոյն շնորհաց,

Գերագանց գտաւ ի կարգ բաբունեաց,

Արքեպիսկոպոս Պօղոս հայր հարանց,

Այր աստուածընտիր եւ Քրիստոսագգեաց:

Որ յոգնամասնեայ արդիւնս արգասեաց,

Տեղոյս եւ ազգիս յաճախ դրախտեաց,

Քանզի գտաճարս այս շքեղապանձ

Չանասէր երկամբք հաստատեալ կանգնեաց:

Արդ սորա էր նախ երկիր հայրենեաց,

Գիւղ Տէրէվանք՝ յաշխարհին Գամբաց,

Ղարախօջ անուն հօր իւր ի նախնեաց,

Այր երեւելի եւ զարմ ազնուաց:

Իսկ ի չափ հասեալ զանցաւորս խոտեաց,

Վառեցաւ ի տէր ի հոգետրաց,

Առ մեծ պատրիարքն առ տէր Չաքարիաս,

Աշակերտութեամբ հպատակ եկաց:

Որ եւ նա տեսուչ Պրոսպայու կարգեաց,

Հովուել արթնութեամբ ըստ հարց կանոնաց,

Բայց յետ անցելոց յոլովից ամաց,

Առաջնորդ կարգի երկուց քաղաքաց:

Մեծին Պրոսպայու եւ Նիկոմիդեայ

Եւ գիւղօրէից թեմից շրջակայ,

Պայծառութիւն սուրբ եկեղեցեաց,

Ըստացաւ աշակերտս բարուք հրահանգեաց:

38 «1869 հոկ. 16 հինգշաբթի յԱրճակ գիւղն որ ի Վան»:

Արքեպիսկոպոսը են յաշակերտաց
Ստեփան, Պետրոս, զորս յառաջ կոչեաց,
Պօղոս, Յակոբոս լծակիցք կարգաց,
Ընդ որս Թաղէոս՝ զոր յետոյ ընտրեաց:
Անձնս իւրն ի սոցունց աշխատասիրեաց,
Առ ի շինութիւն սուրբ տանս ըստ կարեաց:
ՌՄԿԹ (1820)³⁹:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 375բ:

Բ «Նոյն վանուց գաւթի դրան արձանագրութեան պատ-
նէն».

Պայծառ հարսնարան Փրկչին Յիսուսի,
Լուսակիր տաճարս սուրբ եկեղեցի,
Յանուն Չարխափան Սուրբ Աստուածածնի,
Նորոգ կառուցաւ զեր ըսքանչելի:
Չոր յետ այրելոյ ապստամբ զօրոյի,
Չամս վեշտասան կացեալ յամայի,
Ապա փափաքմամբ անձնատիք ջանի,
Տեսաւրն Պօղոսի աստուածիմաստի:
Արքեպիսկոպոս քաջ առաջնորդի,
Եւ միշտ բազմերախտ բարունապետի,
Որոյ Կեսարիա քաղաք հայրենի,
Որդի Ղարախօջ առըն մեծագգի:
Եւ յաշակերտաց Չաքարիա պետի,
Որ էր սրբազան պատրիարք Պօլսի, ||
Յորմէ նախ կարգեալ Պրոսա քաղաքի
Առաջնորդ ընտիր ըստ կամաց էի:
Իսկ քսան եւ հինգ ամաց ըզկնի,
Ընտրի ես դէտ աշմիկ սուրբ ուխտի,
Յորում զայս չքնաղ սուրբ եկեղեցի
Շինեաց ի պատիւ Սուրբ Աստուածածնի:
Ի դիտողութեան Սուրբ Էջմիածնի,
Տեսան Եփրեմայ կաթողիկոսի,
Յամի տեսառն 1820 (եւ հայոց ՌՄԿԹ)⁴⁰:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 375բ-376ա:

Գ «Պօլսեցի բեմբասաց Գրիգոր վարդապետի մահար-
ձան».

Ի հանդէս արդեանց հոգելից սուրբ հարց
Գտեալ համազոյգ յարգասիս բարեաց,
Գրիգոր անուն վարդապետ կենաց,
Քարոզիչ ազտու, ընտիր բեմբասաց,
Գերիմաստ վարժեաց հոյս աշակերտաց,
Չքնաղ հանդիսի հոգետր արդեանց,
Բիւզանդեան քաղաք անուն հայրենեաց,
Պերճացեալ անդէն քարոզ անմոռաց, ||
Այս վանք սուրբ կուսին երբ հիւրընկալեաց,
Պատուեալ արժանւոյն զայս այր գեղապանծ,
Յայնժամ հրաման վերին ակնարկեաց,
Թողոյ զիւր մարմին զնոյն տապան շիրմաց:
Գտեալ հունձատոք Արարչին բարեաց,
Վաթսուն ամեայ ալեօթ փոխի ի կենաց,
Անբարբառ իւր ձայն հնչեալ մեղմասաց,

39 «1861 յունիս ուրբաք յԱրմաշու Չարխափան Սուրբ Աստուա-
ծածնի վանս»:
40 «1861 յուն. 9 ի նոյն սուրբ ուխտն»:

Մաղթ գողորմիս յայս ակնարկողաց:
Յամի տեսառն 1832, փետ. 3⁴¹:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 342բ-343ա:

Դ «Անտօն վարդապետի խաչվէմ».
Անտօն վարդապետ բնիկ ի Բերայ, կրօնատր
երբեմն յանապատն ի Լիւմ, կացեալ զամս յոլովս
յուլիտին Արմաշայ կայ ի պաշտաման իւր հաւա-
տարիւմ, աստ կնքեալ զկեանսն զժամանակեայ,
փոխի առ Քրիստոս առ իւր ցանկալին: Յամի
տեսառն 1836, հոկտեմբեր 20⁴²:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 344ա:

Ե «Գրիգոր վարդապետի խաչվէմ».
Գրիգոր վարդապետն է Բիւզանդացի,
Վանաց Թամզարայ բնիկ միաբան,
Քարոզիչ կարգեալ ի յԱլէմտաղի,
Յուլիտիս Արմաշու կրօնատրի,
Ուր զթել կենացն ախտ սրածութեան
Հատեալ ի յայտեացս յանձնահ կեանս փոխի⁴³:
1836 հոկ. 5:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 344ա:

Զ «Մաղաքեան տէր Յոհաննէս քահանայի խաչարձան».
Է որ կանուխ, որ անագան,
Հողագանգումս սերունդը մարդկան,
Վրիպին ոչ ի սրոյ մահուան,
Չոր ամ անշուշտ հաստչին հրաման,
Հար եւ գերէցրն Մաղաքեան,
Տէր Յովհաննէս հեզ քահանայն,
Եօթանասուն ամաց լրման,
Եւ ի քսանութ ամս պաշտաման,
Ում հայրենիք եւ բնակարան,
Ատափազար շքեղ աւան,
Ի գալ ի վանքս յուխտ հրաշական,
Ամփոփեցայ ի յայս տապան:
Յամի տեսառն 1837, սեպ. 26⁴⁴:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 344բ:

Է «Վանեցի Պետրոս վարդապետի խաչվէմ».
Ծաղիկ շնորհաբոյս Տորոյեանց զարմի,
Պետրոս վարդապետ տեղեալ Վանեցի,
Ընկալեալ զօծումն սուրբ հոգւոյն շնորհի,
Չեռամբ Ստեփաննոս վեհ դիտապետի,
Կարգի միաբան Արմաշու ուխտի,
Վարէ զպաշտօնն զամս քսան եւ մի,
Ի լրման յիսնից ամաց հասակի,
Հատեալ թել կենացն աստէն ամփոփի,
Յորոց այց առնել շիրմիս հանդիպի,
Միով Հայր մերիւ մաղթ գողորմի:
Յամի տեսառն 1850, յուլիս 7⁴⁵:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 349բ:

41 «1861 յունիս 8 ի վանս Չարխափան Աստուածածնի յԱրմաշու»:
42 «1861 յունիս 9 ի վանս Արմաշու»:
43 «1861 յԱրմաշու»:
44 «1861 յունիս 9 յԱրմաշու վանս»:
45 «1861 յունիս 9 ի վանս Արմաշու»:

Ը «Այտնցի Արամ Յարութին դպրոցականի մահարձան».
 Նորատունկ փառաց ծաղկեալ նոնենի յայգուջ
 Հայկազնի,
 Արամ Յարութին մարդասէր բարութ տատրակ
 նագելի, ||
 Սերունդ Այտնեանց, որդի Մինասայ առն բարե-
 պաշտի,
 Յետո որդեգրի Յօհաննու Տատեան վեհ ամի-
 րայի:
 Այս անմեղ գառնուկ ի տիս մանկութեան վե-
 հանձն ի հոգի,
 Կաթոզին հոգուվ հետամուտ գրոց խաղուց ա-
 տելի,
 Ի կենակցութեան մեծաց եւ փոքունց ազնի սի-
 րելի,
 Ի խօսս ընկերաց խոհեմ եւ արթուն յաւեւ համ-
 բալի:
 Սա աշակերտի ուսմանց արուեստից ազատա-
 կանի,
 Յաջողակ վարժեալ ի լեզուս ազգաց փափագ-
 մամբ սրտի,
 Հայոց եւ լատին, պարսից, հազարաց, եւս եւ ա-
 րապի,
 Թարգման յօրինիչ այլեւայլ գրոց ըստ անխոնջ
 գրչի:
 Այս անձն պատուական պարծանք իւր նախ-
 նեաց եւ Արմաշ գիւղի,
 Ի մայր քաղաքաց յազգային մարզի վարժա-
 րանս Պօլսի,
 Դառն ախտիւ լերդի յանկարծ ըմբռնեալ ո ան-
 բուժելի,
 Գայ ի հայրենիս ի բնակասնունդ անձամբ ցա-
 ւալի:
 Ի քսան եւ մի ամ ծաղիկ հասակի մանգաղ օր-
 հասի
 Չսա հնձէ ի բաց տարաղէպ մահուամբ յայս
 տապան թաղի,
 Պատճառաւ ուսմանց անձնանուէր հոգուվ ող-
 ջակէզ լինի,
 Չերթ խունկ անուշակ վերին պետութեան առ
 Տէր ընծայի:
 Վշտայից իւր մօրն եւ քեռն սիրելոյ եւ համայն
 զարմի,
 Ծովացոյց արեամբ զսիրտ եւ զոզի մինչ ենն ի
 մարմնի,
 Առ քեզ պաղատիմք աստուած սրբութեանց ե-
 րեքսրբենի,
 Արա արժանի քում սուրբ տեսութեան ըզտորին
 հոգի:

Յամի տեսան 18 հոկ. 24⁴⁶:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 349բ-350ա:

46 «Երգեաց զայս երգ եւ կառոյց տապան Ռշտունի Յոհաննէս վարդապետ նախկին վարժապետ սորին: 1861 յունիս 9 յԱր-
 մաշու վանից գերեզմանատուն»:

ԱՌԱՆՑ

Ա «Ի մի խաչարձանէ».
 Ես՝ Ծերուն քահանայ, կանգնեցի զխաչս բարե-
 խօսս առ աստուած հոգոյս եւ ծնողացս: ՋԻ (1471)⁴⁷:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 494բ:

ԲԱԶԵՆԻՑ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

Ա «Բազենից Սուրբ Էջմիածնի տաճարի նորոգողի յիշատ.».
 Յիշատակ է Սուրբ Էջմիածնայ գաւիթն եւ տա-
 ճար Էրէրնցի Մարտիրոս վարդապետին եւ ծնողաց
 Խանրէկին եւ Խղրաթին, թուին ՌՄԱ (17)⁴⁸:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 366բ:

Բ «Բազենից ժամատուն շինողի արձ.».
 Թուին ՌՄԺ (1761) շինեցաւ սուրբ ժամատունս
 ձեռամբ Թիլֆիզեցի Յովհաննէս վարդապետին:
 Աստուած ողորմի⁴⁹:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 367ա:

ԲԱԼՈՒ

Ա «Բալուայ Սուրբ Աստուածածին եկեղ. նորոգութեան արձ.».
 Ողորմութեամբն աստուծոյ նորոգեցաւ եկեղե-
 ցիս ձեռնտութեամբ համայն ժողովրդեան, որ
 խախտեալ էր ի մեծ շարժէն ՌՄԼԸ (1789) թուակա-
 նին: Վերակացուք՝ Տօներանց Գէորգն, պասմաճի
 Դաւիթն, Գ թէմէրն⁵⁰ Տօներոցն Գէորգի, Վանէսի,
 մօրն՝ Եղիսին յիշատակ, ի թուին ՌՄԽ (1791)⁵¹:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 370ա:

ԲԱՂԷՇ

Ա «Բաղիշոյ Ալեխու վանից Թադէոս առաքելոյ աղբեր ար-
 ձանագիրն է».
 Ընորիօք հոգույն ողորմածի,
 Ամենագօր մարդասիրի,
 Կարողութեամբ տեսուն Յիսուսի,
 Ի հիմանէ կերտեալ կազմի,
 Աղբիւրս ընտրեալ զարմանալի,
 Թադէոս սուրբ առաքել[ա]լի,
 Որ է բժիշկ ամէն ախտի,
 Եւ շինողիս մեծ Պօղոսի,
 Եւ կողակցուն Լուս-Խաթունի,
 Ծնողացն Աստուածատրի...
 Ի ժամանակս Գրիգոր վարդապետի
 Եւ Մարտիրոս վարդապետի:
 Թուին ՌՇԽԹ (1700)⁵²:
 Հիւնք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 390ա:

47 «Այս խաչարարն Վանայ Աւանց գիւղի ծովեզերի գերեզմա-
 նոցն է»:
 48 «Մոյն Բազենից Էջմիածին վանք, որ այժմ շաբաբացեալ վա-
 նորից կարգն անցեալ է (եւ կայ շինեալ ի սիրտ Խաչագորի լե-
 րին ի Գնունիս գաւառի մերձ ի Սուրբ Սահակ հայրապետի
 անուամբ անապատ՝ հանդէպ Էջմիածին ծառագարդ մենաս-
 տանին եւ յԷրէրնց գեղջ) երբեմն էր ի ճոխ մենաստանաց Վաս-
 պուրական նահանգի եւ ասպնջական գրագէտ անձանց, որ-
 պէս ցուցանեն յիշատակարանք նոցին, որք գրեցան ի սմին
 ակնապարար մենաստանի»:
 49 «1868 յուլ. 22 յԷրէրին»:
 50 «Թերեւս քեմէր կամ կամարն»:
 51 «1865 յուլ. 1 շաբաթ ի Բալու»:
 52 «1860 մայիս 17 յԱլեխու վանք»:

Բ «Բաղ[ե]շոյ Ամբոբայ վանուց գմբէի յիշատ.».

Ի ծայր թուոյս մեր տումարիս,
Քսան եւ վեց յորեկինիս,
Իննեակ թուոց պակաս հաշուիս,
Յունիս ամսոյ տաս ու մեկի[ս],
Յոյժ դառնացեալ ժամանակիս,
Շինումն եղել եւ սուրբ գմբէթիս,
Ծերունագարդ տեսունս Վարդանիս⁵³,
Արի եւ քաջ հովուապետիս,
Սրբազան եպիսկոպոսիս,
Միշտ մշտաշէն վանօրէիցս
Հօրս մերոյ տէր Ղազարին,
Կաթնամատոյց մօրս Սառային,
Եղբօրս մեր տէր Պաղտասարին,
Եւ եղբօրս միսում Աւետիսին,
Քուերս իմոյ Մարիամին,
Եղբօրս որդի փոքր Ղազարին,
Եւս իշխանապետ եւ կենդանի Խաչմանուկին,
Այլեւ համայն քրիստոնէից,
Ըրք ընթեռնութ, տուք զողորմին:

«Չորս լուսամտից վերայ գրեալս».

Ըվ սերովբէք, ով քերովբէք, ի դրախտն մտանէք,
զԱստուածութիւն աղաչեցէք, ընդ շինողին հաշտո-
ցուցէք:

«Հարաւային արեւմուտք սա եւս գրեալ կայր».

Ծերակցացութեամբ վանքին Գրիգոր ծայրագոյն
վարդապետին, թուին ՌՄՂԱ (1842)-ին:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 380բ:

ԲԵՅՐՈՒԹ

Ա «Պէրոթի վանուց Սուրբ Նշան եկեղեցոյ շինութեան ար-
ձանագրութիւն».

Օծմամբն սրբեցելով հաստատեցաւ եկեղեցիս
յանուն Սուրբ Նշանի փրկչին ի յիշատակ նախա-
հաւատ ազգիս հայոց բարեջան տենջանօք սրբոյ
գահին Երուսաղէմի տ. տ. Յովհաննոս վեհ պատ-
րիարքի Չմիւռնացոյ ի հատուցումն պաշտաման
սրբազան խորհրդոյ ի փառս ամենասուրբ Երրոր-
դութեան, գնեալ արդեամբ Յովսէփ սարկաւազի
Անթափեցոյ միաբանի սրբոյ աթոռոյն Երուսաղէ-
մի, յամի տեսուն 1851 փետրվար 28:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 20բ:

Բ «Նոյն եկեղեցոյ խաչկալի յիշատակարան».

Ի պատրիարգութեան Սրբոյ Երուսաղէմի տ. տ.
Եսայի սրբազան արքեպիսկոպոսի կառուցաւ խաչ-
կալս արդեամբն եւ ծախիւք Կեսարացի մեծ. Մահ-
տեսի Գրիգոր աղայ Պասմաճեանի, ի յիշատակ

կենդանեաց եւ ննջեցելոց իւրոց: Ի տեսչութեան
արժ. Յովհաննէս վարդապետի Գ. Իփէկեանի, 1878:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 20բ:

Գ Սուրբ Նշան եկեղեցու «աւանդատան յիշատակարան».
Շինեցաւ աւանդատունս արդեամբ եւ ծախիւք
Պրոտասցի Յովհաննէս վարդապետ Գ. Իփէկեանի,
ի յիշատակ կենդանեաց եւ ննջեցելոց իւրոց: 1884
ապրիլ 1⁵⁴:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 21ա:

ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ

Ա «Այրի վանից Գեղարդայ դիմացի քարայրի բերանի ար-
ձանագրութեանց».

Ի թուին ՈԼ (1181), ես՝ տէր Ստեփաննոս Ա-
դունից կաթողիկոս, եղէ միաբան սուրբ ուխտիս
Այրից վանաց, յառաջնորդութեան հօրն Գրիգորի:
Եւ ետու զԱնդրէի առաքելոյ նշխարն եւ սուրբ նշան
եւ բնակիչք տեղոյս խոստացան ինձ զտօճ փոխ-
ման Տիրամօրն Գ [3] աւուրս յամենայն եկեղեցիս
պատարագել զՔրիստոսն⁵⁵:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 6ա:

Բ «Կից վերի արձանագրութեան».

Ի թուին ՈԽԹ (1200) քրիստոսասէր իշխանաց
իշխանք Չաքարէ եւ Իւանէ վերստին դարձուցին
զջորմն... եւ բնակիչք խոստացան զաւագ խորանն
զԱստուածածին բովանդակ տարին պատարագել
զՔրիստոս յանուն նոցա⁵⁶:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 6ա:

Գ «Այրի վանից ընդարձակ գաւթի արձանագրոյ պատճեն».

Ի ժամանակս թագաւորազնոյն Չաքարիայի եւ
Իւանէի նորին հարազատի եւ որդոց նոցին՝ Շա-
հանշահին եւ Աւագին, եւ յառաջնորդութեան Բարս-
ղի միայնաւորի եւ աշխատութեամբ եղբարցս շի-
նեցաւ Կաթողիկէս մեծափառ: ՈԿԳ (1214)⁵⁷:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 6բ-7ա:

Դ «Այրի վանից քարափոր եկեղեցոյ արձանագրի պատ-
ճեն, որոյ մէջ սեւագոյն ջոր բղխէր, թիւ չունէր» (ՈՂԵ – 1246).

Ի տէրութեան բարեպաշտ, աստուածասէր թա-
գաւորին վրաց Աւագին եւ Շահնշահի եւ որդոյ նո-
րա Չաքարիայի, ես՝ Պոռոզ, որդի ըվ Վասակայ, յազ-
գէն Խաղբակու, գանձագին արարի ի տէրանց աշ-
խարհիս զմեծահռչակ Այրի վանս լերամբ եւ դաշ-
տաւ եւ ամենայն կազմութեամբ, որ կայր ի սմս,
փորեցի ի վիմէ տուն աստուծոյ յիշատակ ինձ եւ որ-
դեաց իմոց եւ ամուսնոյն իմո Խորթու-Խաթունին:
«Կից սորա այլ տեսակ գրով».

Իմովքն զամէն տվի ի դուռն Սուրբ Գեղարդին
վախմ⁵⁸:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 7բ-8ա:

53 «Սոյն վերոգրեալ գմբէք շինող Վարդան երեւելի մեծ եպիսկո-
պոսն Մշոյ Սատնավանից եւ գայլ եօթն եկեղեցի եւ կաթողիկէ
եւս շինելով իւր կենաց մէջ տաճարաշէն մակդիր ժառանգեալ է
իրաւամբ ի ժողովրդոց եւ ինքն վախճանելով Բաղիշոյ Ամբո-
բայ վանուց եկեղեցոյ մէջ թաղեալ է. վերոյգրեալ արձանագրու-
թիւն գրեցի ի Բաղէշ 1860 ամի, յաւուրս առաջնորդութեան տէր
Երեմիայ վարդապետի Տեւկանց ի Տեր հանգուցելոյն»:

54 «1890 թ. դեկտեմբեր 28, Բեյրութ»:

55 «1867 մայ. 30 յԱյրի վանք»:

56 «Մայիս 30 երեքշաբթի անդ»:

57 «1867 թ. մայիս 30 երեքշաբթի յԱյրի վանս»:

58 «1867 թ. մայիսի 30, Այրի վանք»:

Ե «Այրի վանից հանդէպ մի փորածոյ եկեղեցոյ նորոգութեան».

Ի թուիս ՉԵ (1256) նորոգեցաւ Սուրբ Աստուածածինս⁵⁹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 8ա:

Չ «Նոյն Այրի վանից վիմափոր մեծ տաճարի արձանագրութեան պատճեն».

Աւգնականութեամբն աստուծոյ ես... Պապարս, որդի Պռօշայ եւ անուսին իմ Ըռուգութեան, փորեցաք զժամատունս յինքնաբոս վիմէ յիշատակ հոգոց մերոց եւ զաւակաց մեզ անմահ ի հալալ արդեանց մերոց: Եւ եղև առաջնորդութեամբ տէր Գրիգորի⁶⁰, թուին ՉԼԷ (1288)⁶¹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 6ա:

Է «Մարտիրոս վանահօր խաչվեմ».

Այս է տապան հանգստեան վանահօր Մարտիրոս վարդապետի Էջմիածնեցոյ: Յամի 1845⁶²:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 346բ:

Ը «Այրի վանից գմբէթի եւ տանեաց նորոգութեան».

Շնորհիւ ամենագորին աստուծոյ երրորդ անգամ նորոգեցան տանիքն Այրիվանիցս Սուրբ Գեղարդայ հանդերձ երկրորմբ գմբէթիք, որօք լուսատուչեան հայոց ժողովրդականաց եւ բազմաջան աշխատութեամբ վանահօր Միքայէլ վարդապետի Չամօրեանց Տիխիսեցոյ, որ եւ գնեաց յօգուտ վանիցս իւրով սեպհականութեամբ ԳԳողտ գիւղն ընդ միոյ ջաղացի թուին հայոց ՌՅԵ եւ յամի տեսան 1856⁶³:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 383բ:

ԳԵՂՈՒԱՅ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

«Գեղուայ Սուրբ Կարապետի վանուց տաճարի դրան արձանագրութիւն».

Ես՝ Սառեպիտներ, կազմեցի գղումն: Յիշեցէք ի Քրիստոս: Ի թվին ՉԿԱ (1312), յիշատակ է իւր եւ իւր ծնողաց իւրեանց եւ որդոյն նմա՝ պարոն Տիրապետին եւ ամենայն զարմից: Շինեցաւ դուրս Սուրբ Կարապետի ձեռամբ պարոն Ստեփաննոսի:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 330ա:

ԳՈՂԳՈԹԱՅԻ ՎԱՆՔ

«Բզնունեաց երկրի Գողգոթայի վանք».

Ի դրանէ սուրբ եկեղեցոյս, որ Գողգոթայ վերակոչի, եւ ի Սուրբ Աստուածածնի տաճարէս եւ ի սուրբ սկաւառակէս եւ յայլ սրբութեանց եւ ի մասանց, որ աստ կան հաւաքեալ, որ է յերկիրն Բզնունեաց, որ է Արծկէ, հանդէպ մեծ անապատին, որ է հռչակատուր եւ հրաշագործ վանք, որ հասանէ ամենայն նեղեղոց եւ ցաւագարաց յօգնութիւն... եւ շինեցի զեկեղեցի զտեղին եւ անուանեցին Սուրբ Գողգոթայ եւ Սուրբ Աստուածածին եւ է տեղին անապատ

59 «67 բ. մայիս 30, անդ»:

60 «Կամ Մարգարի. փակագիր էր»:

61 «Մայիս 30, անդ»:

62 «1867 մայիս 30 երեքշաբթի ի Գեղարդայ վան»:

63 «1867 ի մայիս 30 երեքշաբթի յԱյրի վանք, որ այժմ ապի Գեղարդայ, եւ կայ ի սահման գիւղաքաղաքին Գառնոյ»:

եւ վանք եւ առնէ մեծամեծ սրանչելիս, զի աղբիւր ելանէ ի ներքոյ եկեղեցոյն եւ բժշկէ զամենայն խոցաւորս եւ զախտաժէսս:

Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 39բ:

ԳՈՐԾՈԹ

Ա «Գործոք գիւղի Սուրբ Կիրակոս եկեղեցոյ նորոգութիւն».

Կանգնեցաւ խաչս բարեխօս առ աստուած վասն պարոն Յովանէսին՝ Խաղրիվերմիշի⁶⁴ որդուն, որ ԾԵ (55) ամեայ փոխեցաւ ի Քրիստոս, թվ. ՉԼԳ (1484)⁶⁵:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 367բ:

Բ Չեռնուրով յիշեցէք ի Քրիստոս Աստուած, թուին ՌՇԹ (1570)⁶⁶:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 482ա:

Գ Սոյն Գործոք գիւղի եկեղեցին նորոգի ի թվ. ՌՄԾԸ (1809) արդեամբ Ղարաւէֆերեան Յակոբ աղայի⁶⁷:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 391ա:

ԳՕՐԻ

«Երեսանցի Տէր Մարգարեանց տէր Պետրոսի մահարձան».

Ի շիրմիս ներքոյ մարմնով ամփոփի Պետրոս քահանայ այր առաքինի, Ի Տէր Մարգարեանց զարմէն ընծիւղի, Եւ ի յերկիւղ տեսան անդէն սնանի: Ապա սրբալոյս իղով օձանի, Աշալուրջ հովի հօտին Քրիստոսի, Մա աղօթանուէր, յարգող սաղմոսի, Ծոյլ պղերգ արանց օրինակ բարի: Հեզ, անիառատէր ատող աշխարհի, Սուրբ վարուք բազմաց վճիտ հայելի, Ռհ, խորշակ մահու սմա հանդիպի, Խամրէ զկոկոն վարդ ծաղիկ հասակի: Քառասուն եւ եօթն ամաց վախճանի, Թողեալ զընդանիս ի սուգ թախճալի, Ի հողէն ստեղծեալ մարմին հող լինի, Ըստ վճռողական բանիցն Արարչի: Այժմ ընթերցողացդ խրատ պիտանի, Տայ զայս, թէ ունայն է փառք աշխարհի, Յաւարտ սուղ բանիս զայլ ինչ ոչ կամի, Միայն թէ ասել հոգւոյն զողորմի: [ՌՅԹ - 1860]⁶⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 4ա:

64 «Աստուածատրոյ»:

65 «1866 հուլ. 16 կիրակի ի Վան, ի Գործոք»:

66 «1866 հուլ. 16 կիրակի ի Վան, ի Գործոք»:

67 [Վստահ չենք որ սա վիմագիր արձանագրութիւն է: Ավելի հավանական է, որ ըստ վիմագրի՝ Փիրղալեմյանի խոսքն է: Քանի որ այլ աղբյուր չունենք, ուստի բերում ենք այնպէս, ինչպէս հաղորդում է Փիրղալեմյանը]:

68 «1860 փետ. 16 ի Գօրի քաղաքին Վրաստանու, որ կայ շինեալ առ եզերք Կուր գետոյն մեծի ի հիւսիս կուտ նորին յօրինեցի եւ ինքն զվերոյիշեալ դամբանական ըստ խնդրանաց նոյն վիճակի առաջնորդի եւ յաջորդի տեսան Պօղոսի հիւրամեծար եւ արժանապատիւ վարդապետի, որ էր հարազատ || եղբայր վերոյգրեալ Տէր Մարգարեանց Պետրոս քահանայ...»:

ԴԱՏՈՒԱՆ

«Էջմիածնի Բարսեղ կաթողիկոսի տապանագրոյ պատճեն».
Այս է հանգիստ տէր Բարսեղ կաթողիկոսին
Սուրբ աթոռին Էջմիածնի, ի թուին Ռ-ԺԶ (1567)⁶⁹:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 496բ:

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ա «Խալիֆայ Սաֆարի մահարձան».
Այս է տապան խալիֆայ Սաֆարին, քվին Ռ-ՉԹ
(1640):
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34բ:

Բ «Թաքիրտաղցի տիրացու Յոհաննէս. խաչվեմ».
Այս է տապան Թաքիրտաղցի տիրացու Յանէ-
սին, քվին Ռ-ՃԳ (1655)-ին էր⁷⁰:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 35ա:

Գ «Լեհցի Սեֆերի մահարձան».
Այս է տապան Լեհցի Սեֆերին, որ փոխեցաւ
առ աստուած, քվին Ռ-ՃԺ (1661):
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34բ-35ա:

Դ «Մահտեսի Շաքարի խաչվեմ».
Այս է տապան հանգստեան Քաւացի տէր Պա-
պայի դստերն մահտեսի Շաքարին, որ փոխեցաւ
առ Քրիստոս, քվին Ռ-ՃԺԳ (1665)-ին:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ ա:

Ե «Պեհեսնցի ժամօրհնող Սկրտիչ վարդապետի մահար-
ձան».
Տէր տապանիս, որ կայ յայտնի,
Է Սկրտիչ վարդապետի,
Որ էր տեղեալ Պրիքսնցի,
Եւ ժամ օրհնող գահին մեծի,
Բարուքըն յոյժ հեգահողի,
Եւ փոյթ ի գործս յամենայնի,
Հանգեալ ի մերս թուականի,
Հազար հարիւր քսանի (1671):
Դուք՝ ընթերցողդ, յիշեալ վարդապետի տուր
զողորմի, ամէն⁷¹:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ բ:

Չ «Ղալաթիացի խօճայ Սողոմոնի մահարձան».
Այս է տապան Ղալաթիացի մահտեսի խօճայ
Սողոմոնին, քվ. Ռ-ՃԻԳ (1674):
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34ա:

Է «Մոկացի Ստեփաննոս վարդապետի մահարձան».
Այս է տապան հանգստեան Մոկացի Ստեփան-
նոս ճգնատր վարդապետին, որ փոխեցաւ ի թուին
Ռ-ՃԿԹ (1720) ամին: Յիշեցէք եւ ողորմի ասացէք,
ամէն:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 35ա:

Ը Ի թիւն հազար հարիւր յըսնի,
Քրսան եւ երկու յաւերորդի (1723),
Խնդրեմ ի ձէնց աղերսալի,
Որք ընթեռնոյք, տուք զողորմին, ամէն:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ ա:

Թ «Պալատցի Պօղոս վարդապետի մահարձան».
Այս է տապան դամբարանի,
Տեառն Պօղոսի ընտրեալ պետի,
Արդիւնատր միաբանի,
Յոյժ գիտնական, իմաստիւք լի,
Տեղեալ զոլով սա Պալաթցի,
Ի թիւն հազար հարիւր յըսնի,
Քրսան եւ երկու յաւերորդի (1723), ||
Խնդրեմ ի ձէնց աղերսալի,
Որք ընթեռնոյք, տուք զողորմի, ամէն:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ ա-բ:

Ժ «Յաջակողմեան դասի խաչաքարի վերայի արձանա-
գիրն».
Հրամանաւ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ
քվին հայոց Ռ-ՃԶ (1727) եղեւ վախճան Բաբերդցի
Սիմէօն վարդապետին, որ նորոգեաց սուրբ (ուխ)-
տի տաճարս եւ եղաւ ի յայս տապան, յիշեցէք ի
Քրիստոս աստուած, ամէն⁷²:
«Ի տապանագրին».
Այս է տապան Սիմէօն վարդապետին:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52ա:

ԺԱ Այս է տապան հանգստեան Պալաթցի լու-
սարար Յակոբ վարդապետին, սրբոյ աթոռոյս բազ-
մաշխատ նուիրակի, որ հանգեալ ի քվին Ռ-ՃԶԷ
(1728)-ին: Ընթերցողք, տուք զողորմին:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34բ:

ԺԲ «Կիլիկիոյ Պետրոս կաթողիկոսի շիրմի պատճեն».
Այս է տապան Պետրոս կաթողիկոսին Կիլի-
կիոյ, որ փոխեցաւ առ տէր ի քվին Ռ-ՃԷ (1728) ա-
մին: Յիշեցէք ի Քրիստոս:
ՄՄ, ձեռ. 9027, էջ 31բ:

ԺԳ «Ղափանցի Սինաս վարդապետի մահարձան»⁷³.
Այս է տապան հանգստեան Ղափանցի միա-
բան⁷⁴ ժամասաց Ստեփաննոս վարդապետին, որ
փոխեցաւ քվին Ռ-ՃԶԳ (17) ամին: Ի յոյսն վերին
դուք՝ հանդիպողդ, տուք զողորմին:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 33ա:

ԺԴ «Բաղիշեցի Մարտիրոս վարդապետի մահարձան».
Այս է տապան հանգստեան Հրեշտակապետու
րէիզ Բաղիշեցի Մարտիրոս վարդապետին, որ
հանգեալ ի Ռ-ՃԶԳ (17)-ին:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ բ:

69 «Այս գերեզման Վանայ Դատուան գիւղի եկեղեցոյ տաճարի
աջակողմեան պատի տակն է, ըստ ասից Տէվկանց Վրդանէս
վարդապետի՝ ընդօրինակողի նոյն արձանագրութեան. եւ ես
ընդօրինակեցի ի նմանէ յամի տեառն 1885 հոկտեմբեր 23
չորեքշաբթի ի Վան»:
70 [Փիրդալեմյանը լուսանցքում գրել է՝ «1755. Ռ-ՃԳ»: Այնհայտ
է, որ 1755-ը վրիպակ է, քանի որ Ռ-ՃԳ-ն 1655 է եւ ոչ 1755]:
71 «1891 յունվար 20 կիր., ի վանս հայոց Սրբոյ Փրկչայ ի Սիօն»:

72 «Յաջակողմեան դասի խաչաքարի վերայի արձանագիրն»:
73 [Փիրդալեմյանը ցանկացել է տալ Ղափանցի Սինաս վարդա-
պետի տապանագիրը, սակայն առանց խորագիրը փոխելու
ներկայացրել է Ստեփաննոս վարդապետինը]:
74 [Փիրդալեմյանը նախ գրել է Սինաս վարդապետ, որն այնու-
հետև ջնջել է վրան գրել է միաբան]:

ԺԵ «Լուսարար տեր Աբանասի խաչվեմ».

Այս է տապան հանգստեան Սուրբ Յարութեան լուսարար տեր Աբանասին, քվին ՌՃՁԳ (17)-ին: Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ ւա:

ԺԶ «Լուսարար Յակոբ վարդապետի մահարձան».

Այս է տապան հանգստեան Պալաթցի լուսարար Յակոբ վարդապետին՝ սրբոյ աթոռոյս բազմաշխատ նուիրակի, որ հանգեաւ ի քվին ՌՃՁԷ (1738)-ին: Ընթերցողք, տուք զողորմին: Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34բ:

ԺԷ «Թորոս Պարոնտիրի մահարձան».

Այս է տապան հանգստեան Ըստամպոյցի Թորոս Պարոնտիրին, որ հանգեաւ ի ՌՃԿԸ (1739) քվին: Ընթերցողք, տուք զողորմին: Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34բ:

ԺԸ «Տանիքէն յարեմտեան եւ հարաւ. դիէն Կաթուղիկէի շրջանակի գրի օրինակութիւն».

Յովհաննու եւ Յակոբայ բարեխօս է սուրբ խաչերս առ աստուած վասն Կոստանդնուպոլսի պատրիարկաց⁷⁵, ՌՃՂ (1741): Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52բ:

ԺԹ «Բաղիշեցի թէիզ Յովաննէս վարդապետի մահարձան».

Այս է տապան հանգստեան Սուրբ Յարութեան թէիզ Բաղիշեցի Յովաննէս սաղմոսասաց հեզ ծերունի վարդապետին, որ ի քվին ՌՃՂԱ (1742) ամի բարի մահուամբ փոխեցաւ ի յոյսն վերին: Դուք՝ հանդիպողքդ եւ ընթերցողքդ, զողորմին ասացէք լի բերանով, ամէն: Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34բ:

Ի «Խոզագրակցի Գրիգոր վարդապետի մահարձան».

Այս է տապան Խոզագրակցի Գրիգոր վարդապետին, որ փոխեցաւ ի քվին ՌՃՂԱ (1742): Յիշեցէք եւ ողորմի, ասացէք: Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34բ:

ԻԱ «Երզնկացի Սահակ վարդապետի մահարձան».

Այս է տապան Երզնկացի Սահակ վարդապետին, որ փոխեցաւ ի քվին ՌՃՂԱ (1742): Յիշեցէք ողորմի ասելով: Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ ւա:

ԻԲ «Սահաթի մահտեսի Յովսէփ աղայի խաչվեմ».

Այս է տապան հանգստեան Ստամպոյցի չուխածի մահտեսի Յօհաննէսի որդի, հռչակատր սահաթի մահտեսի Յովսէփ աղայ բարեպաշտ իշխանին եւ մեծի բարեկամի սրբոյ աթոռոյս, որ փոխեցաւ ի Քրիստոս թուին ՌՃՂԹ (1750), նոյնմբերի ԻԹ (29), յօրն հինգշաբթի եւ մեծ սուզ երող ընտանեացն եւ ամենայն զբարին կամեցողաց Սրբոյն Յակոբայ: Ընթերցողք, տուք զողորմին: Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34ա:

ԻԳ «Աագ լուսարար Աստուածատր վարդապետի խաչվեմ».

Այս է տապան հանգստեան Սրբոյն Յակոբայ աագ լուսարար Ալաշկերտցի, ի գիւղէն Նանաճանայ, բազմաշխատ եւ շնորհալի Աստուածատր վարդապետին, որ հանգեաւ ի յոյսն վերին, ի ՌՄԸ (1759) քվին: Որք ընթերցողք, տուք զողորմի: Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 33բ:

ԻԴ «Սուրբ Կարապետի գերեզմանի նորոգութեան».

Յիշատակ է Զօթսեացի մահտեսի Աստուածատրի որդիքն մահտեսի Ստեփաննին, Յարութիւնն եւ Յակոբին հոգւոցն, ի դուռն սուրբ անպատին Կտուցու, ի քվին ՌՄԹ (1760): Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 51բ:

ԻԵ «Թերճիւման Պօղոսի մահարձան».

Այս է տապան հանգստեան բազմաշխատ Թերճիւման Պօղոսին, որ հանգեաւ ի քվին ՌՄԺ (1761)-ին: Որք ընթերցողք, տուք զողորմին: Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34ա:

ԻԶ «Յորենաբան Մարգարի խաչվեմ, ի դրսի գերեզմանատուն».

Այս է տապան հանգստեան Արեւելցի ցորենաբան Մարգարին, քվին ՌՄԻ (1771): Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 36բ:

ԻԷ Այս է տապան Ղալաթիացի մահտեսի խօճայ Սողոմոնին, քվին ՌՃԻԳ (1774): Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34ա:

ԻԸ «Բարսեղ վարդապետի արձանագրի պատճեն».

Կանգնեցաւ սուրբ խաչս բարեխօս առ աստուած վասն Բարսեղ վարդապետին: Էր աստուածաբան, Բաղիշեցի եւ փիլիսոփայ, հին միաբան, ՌՄԻԳ (1774): Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 54բ:

ԻԹ «Ղուզունճանցի Գարբիէլ եպիսկոպոսի մահարձան».

Այս է տապան հանգստեան սրբոյ աթոռոյս միաբան եւ վէքիլ Ղուզունճանցի⁷⁶ Գարբիէլ արհի եպիսկոպոսին, որ հանգեաւ ի ՌՄԼԱ (1782) թուին: Ընթերցողք, տուք զողորմին, ամէն: Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34ա:

Լ «Կէնճեցի կազմարար Մխիթար վարդապետի խաչվեմ».

Այս է տապան հանգստեան Կէնճեցի կազմարար Մխիթար վարդապետին, որ փոխեցաւ ի կեանս, քվին ՌՄԻԻ (1791): Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 36ա:

ԼԱ «Դարպասճի Զաքարիա վարդապետի մահարձան».

Այս է տապան հանգստեան Արեւելցի եւ սրբոյ աթոռոյս աշխատատր դարպասճի Զաքարիա վարդապետին, ի քվին ՌՄԾԱ (1802): Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 36ա:

75 [Խոսքը վերաբերում է Հովհաննէս Կոլոտ և Հակոբ Նալյան պատրիարքներին]:

76 [Իմա՝ դուզունճանցի]:

ԼԲ «Չանգակատան սեղանի սեւադեղով գրեալ արձանագրի պատճեն».

Յիշատակ է զանկազատունս անուն սրբոյ Հրեշտակապետի, որ է տաճար եւ ուր տեղի անմահ եւ սուրբ պատարագի Ակնա գիւղ...⁷⁷ Ափու...ցի⁷⁸ Արփիարեանց ազնիւ զարմէ Փիլիպպոսի բարեպաշտի եւ մեծահասնաւ ամիրայի: Յանկայի զանկազատունս յիշատակ է որդոյ նորա Արփիարի:

Ով ընթերցողք, բողոք սրտիս տուք զողորմի ինքն զարմօք, զաւակօք օրհնեալ լինի, թվին ՌՄԾԲ (1803):
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52բ:

ԼԳ «Վանեցի աւագ լուսարար Սիմեոն եպիսկոպոսի խաչվէմ».

Այս է տապան հանգստեան սրբոյ աթոռոյս բնիկ միաբան, աւագ լուսարար Վանեցի Սիմեոն եպիսկոպոսին, որ հանգեալ ՌՄԿԹ (1810), սեպտեմբեր ԺԵ (15):

Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34ա:

ԼԴ «Չմշկածագցի Պետրոս եպիսկոպոսի մահարձան».

Այս է տապան հանգստեան սրբոյ աթոռոյս միաբան եւ բազմաշխատ վէրիլ Չմշկեգեցի⁷⁹ Պետրոս եպիսկոպոսի, որ հանգեալ թուին 1810: Ընթերցողք, տուք զողորմին:

Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 34ա:

ԼԵ Երուսաղեմի Սուրբ Փրկիչ վանք. «Վանեցի Աբրահամ վարդապետի խաչվէմ».

Տապանս այս է // սրբոյ աթոռոյս բազմամեայ միաբան Վանեցի Աբրահամ վարդապետին, որ հանգեալ ՌՄԿԶ (1817):

ՄՄ, ձեռ. 9027, էջ ք-36ա:

ԼԶ Այս է տապան հանգստեան սրբոյ աթոռոյս բնիկ միաբան, աւագ լուսարար Վանեցի Սիմեոն եպիսկոպոսին, որ հանգեալ ՌՄԿԹ (1820), սեպտեմբեր ՌԵ (15):

ՄՄ, ձեռ. 9027, էջ 34ա:

ԼԷ «Երուսաղեմի վանուց ինն գրքատան նորոգութեան արձանագրութիւն».

*Պայծառագեղ ծաղկանկարք,
Ամենուստեք քաջայարմարք,
Չորս ի սենեակ աստ գրքատան,
Վայելես դու ի տես ական:
Գերասպայծառ Մինաս անուն,
Եպիսկոպոսըն բազմարդիւն,
Քաջ նկարել հոգացաւ զսոյն,
Ի յիշատակ իւրոյ հոգոյն:*

Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 25ա:

ԼԸ [Նույն գրքատան] «մի այլ արձանագրութիւն».

*Յերջանիկ աւուրս պատրիարկութեան,
Տեսուն Գարրիէլի վեհին սրբազան,*

77 [Բազմակետերը Փիրդալեմյանինն են]:

78 [Հավանաբար պիտի լինէր «Ափուլեխցի», քանի որ Արփիարայան տոհմը Ափուլեխցի էր]:

79 [Իմաս՝ չմշկածագցի]:

*Այս վայելչակերտ սենեակ գրքատան,
Նորոգեալ ցուցաւ ի գոյն գեղազան,
Մինաս վարդապետ ծնունդ Բիզանդեան,
Եւ եպիսկոպոս տեղոյս միաբան,
Ի վայելս անձին երբ էր գրքապան,
Եւ յետնոց եթող յիշատակարան.*

ՌՄՀԲ (1823 ամի տեսուն):

Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 25ա:

ԼԹ «Սկրտիչ վարդապետի խաչվէմ».

Աստ է տապան հանգստեան նախկին չուխածի Մամաթիացի Սկրտիչ վարդապետին, որ հանգեալ ՌՄՀԵ (1826), հոկտեմբեր 31-ին: Որ հանդիպիք, տուք զողորմին⁸⁰:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 339ա:

Խ «Գրիգոր եպիսկոպոսի մահարձան».

Այս է տապան հանգստեան Սուրբ Յակոբայ միաբան Ղարապաղցի Գրիգոր արքեպիսկոպոսին, որ հանգեալ ի թուին 1827, յունիս 1-ին⁸¹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 339բ

ԽԱ «Ատաբազարցի մահտեսի Թորոսի մահարձան».

Այս է տապան հանգստեան Ատապազարցի Մաֆեց Մեխրոսի որդի մահտեսի Թորոսին, որ հանգեալ թվին ՌՄՉ (1831), դեկտեմբերի ԻԹ (29): Որք հանդիպիք, տուք զողորմին:

Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ ք:

ԽԲ «Երեւանցի Սկրտիչ արքեպիսկոպոսի մահարձան».

Այս է տապան հանգստեան սրբոյ աթոռոյս բազմաշխատ միաբան եւ խորհրդական աւագ լուսարար Երեւանցի Սկրտիչ արքեպիսկոպոսին, որ յուրսուն եւ չորս ամօք հասակի հանգեալ եւ խնդրէ ի հանդիպողացոյ տալ զողորմին: Յամի տեսուն 1838, յունիս 10:

Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 33ա-բ:

ԽԳ «Սրբոյ Երուսաղեմի Գարրիէլ պատրիարգի մահարձան».

*Ի բարձրելոյն երգէ Սիրաք մսեղեաց,
Այս դատաստան բարէ եւ զի վայելուչ,
Յապաղել յիմ նուաղելոյս ի կարեաց,
Ընդ ո՞յր անոյշ ոյր եւ անձն իմ ընկալուչ:
Գարրիէլ իմ սուրբ աթոռոյս գահակալ,
Այլ նիկոմիդ ծծել ետ ինձ զօդ նախկին,
Որ իմն էր բաղդ յայս աստիճան վերառեալ՝
Ընդ փորձ անցոյց որպէս զոսկի քուրային:
Քսաներկու ամաց շրջանս ի գահիս,
Չիշխանութեան յաջս ընկալեալ զաւագան,
Չիմ շունչ վերջին յաւանդ թողի ով շնորհիւ,
Յայս Սուրբ Միօն յեցեալ յայիս ծերութեան:
Որ փառատրի քո սուրբ անուն յայս կայան,
Տէր իմ Յիսուս, ոյր եւ փայլի քոյդ շիրիմ,
Ի փող զուարթնոյն անդ անճառիցն ի խորան,*

80 «1861 յայր. 24 ի վանս Փրկչին ի սուրբ Երուսաղեմ»:

81 «1861 ի սուրբ Երուսաղեմ»:

Հնչեա յականջս, հանգիր ծառայ մտերիմ:
Յամի տեսառն 1840 ապրիլ 25-ին, ամաց 76⁸²:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 345ա:

ԽԴ «Եւրոկիացի Կարապետ արքեպիսկոպոսի շիրմի պատճեն».

Այս է տապան հանգստեան սրբոյ աթոռոյս միաբան, Հնդկաց // նուիրակ եւ բազմաշխատ վերիլ Եւրոկիացի Կարապետ արքեպիսկոպոսին: Որք հանդիպիք, տուք զողորմին, 1842, դեկտեմբեր] 16:
Հիւք. ՄՄ, էջ 31բ-32ա:

ԽԵ «Մշեցի Պետրոս վարդապետի խաչվէմ».

Աստ ննջէ բազմաշխատ միաբան սրբոյ աթոռոյս Երուսաղէմի, Մշեցի Պետրոս վարդապետին, որ եւ խնդրէ ի հանդիպողացոյ մի Հայր մերիւ տալ զողորմիս, յամի տեսառն 1845. ՌՄՂԳ⁸³:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 346բ:

ԽԶ «Չաքարիա պատրիարգ Երուսաղէմի Տէր Պետրոսեան».

Գերէք զամենայն,
Գերեցէք եւ զիս
Մահ եւ զերեզման
Ի յիմ վաթսուն ամ: //
Զսուրբ պատարագիս
Պատճատ մատուցման,
Ի կենդանակիր
Փրկչին զերեզման:
Տէր Յիսուս Քրիստոս,
Վասն քո բաղման,
Զթաղեալս վերածեա
Ի քումդ հանգստեան:
Յամի տեսառն 1846, մայիս 7⁸⁴:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 346բ-347ա:

ԽԷ «Մարկոս եպիսկոպոսի մահարձան».

Մարկոս արքեպիսկոպոս սարկաւագ Պօղոսեան, ծնեալ ի Քիլի 1776 ապրիլ 23 եւ սնեալ ի Փօթուշան, նուիրակ Աժտերխանու եւ երկ(ր)իս Բումէլու եւ զամս Է (7) աւագ լուսարար, խնդրէ զողորմի ի ձեռն աշակերտին՝ Ռօմանցի Տէր-Յարութիւնեան աւագ լուսարար Գեորգ եպիսկոպոսին, յամի տեսառն 1849, փետրվար 20:
Հիւք. ՄՄ, էջ 33բ:

ԽԸ «Սուրբ Փրկիչ վանից ննջեցելոց մահարձանի պատճենը. Կիրակոս պատրիարգի շիրմի պատճեն».

Գանձ ոսկերաց տ. տ. Կիրակոս արքեպիսկոպոսի եւ պատրիարգի Սրբոյ Երուսաղէմի.
Հոտին Քրիստոսի հովիւ հոգեջան,
Բաւական հնձոց մշակ տէրունեան,
Հայելի ընտիր վարուք մաքրութեան,

Անձնաձիր քարոզ կենացն անվախճան,
Նորոգիչ գահոյս տեղեաց զանազան,
Որք կան ակներեւ գրեալ ի յարձան,
Հովուապետ բարի փրկիչ աշխարհի,
Տուր սմա տեղի ի քումդ խորանի:
1850 մայիս 25:
Հիւք. ՄՄ, էջ 31ա:

ԽԹ «Պօղոս պատրիարգի մահարձանի պատճեն».

Այս է տապան հանգստեան Պօղոս սրբազան արքեպիսկոպոսի Ադրնապօլսեցոյ՝ նախկին պատրիարգի Կ. Պօլսոյ եւ սուրբ աթոռոյս հարազատ եւ բազմերախտ միաբանի, որ ի հասակի իննսունամեայ հանգեալ ի տէր, // յամի 1853, ի 5-ն մայիսի:
Հիւք. ՄՄ, էջ 31ա-բ:

Ծ «Սուրբ Փրկչի վերնահարկի սեան ներքին է այս տապանաբարն այժմ. Կելիպօյցի Թէոդորոս վարդապետի մահարձան».

Յայս շիրիմ ամփոփեալ կայ Կելիպօյցի պաքալ Յարութիւնեան Թէոդորոս վարդապետն, աշակերտեալ յԵրուսաղէմ նախկին պատրիարգի Պօլսոյ Պօղոս սրբազանի, հասեալ ի կարգ վարդապետութեան 18, երբեմն չուխաճի եւ ժամասաց սրբոյ աթոռոյս եւ երբեմն տեսուչ Յոպպէու, ապա վեց ամ խորհրդական անուամբ կացեալ հանգիստ էառ:
Հանդիպօղք միով Հայր մերիւ յիշեսջիք, 1855, յունիս 5:
Հիւք. ՄՄ, էջ 36բ:

ԾԱ «Արիստակէս վարդապետի արձանագիր».

Կանգնեցաւ սուրբ խաչս բարեխօս է վասն Արիստակէս վարդապետին Գաւառցուն, ՌճՅԶ (1857) ամին:
Հիւք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 54բ:

ԾԲ «Կարնեցի Պօյրէկճեան Ստեփաննոս զօրավարի մահարձան».

Մա Կարնեցի, բայց գաղթական,
Ի մեծ տոհմէն էր Պօրէկճեան,
Ստեփաննոս այր պատուական,
Ունէր յանձին գործ բարութեան,
Սուրբ հաւատով քրիստոսական,
Մեծ զօրավար ռուս տէրութեան,
Կացեալ բազմաց քաջ ախոյեան,
Էառ երկիցս պատուանշան,
Դիպաւ սմա ախտ անդարման,
Քառասնամեայ կայ յայս տապան,
Տէր մեր Յիսուս, արա արժան
Զհոգի սորա քում տեսութեան:
Յամի տեսառն 1858, փետր. 6⁸⁵:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 3ա:

ԾԳ «Կարնեցի Դաւիթ եպիսկոպոսի շիրմի պատճեն».

Կարնեցի տիրացու Գեորգեան Դաւիթ արքեպիսկոպոս, ամաց 62, ու.

82 «1861 յապրիլ 15 օրինակեցի ի սուրբ Երուսաղէմ»:

83 «1861 յապր. 24 յԵրուսաղէմ»:

84 «1861 յապր. 24 յԵրուսաղէմ, ի վանս Փրկչին»:

85 «1861 յապրիլ 24 ի սուրբ Երուսաղէմ, ի Փրկիչ»:

Մուսեր հատու տխուր մահուան,
Կտրե՛ զկեանս ազգի մարդկան,
Սա քարոզիչ ոչ լոկ բանի,
Այլ հայելի ճշմարտութեան,
Նուիրակ Չմիտնոյ բուն միաբան,
Մեծ աթոռոյս սուրբ Յակոբեան,
Դարպասընկալ եւ փոխանորդ
Գտաւ բարեօք հաճոյական,
Քաջ հովուապետ տէր փրկութեան,
Տուր մեր հովուիս զմերինդ խորան,
Յամի տեսուն 1858, ի 6-ն հոկտեմբեր⁸⁶։
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 32ա։

ԾԳ «Սրապիոն Մուրատեան պարոն Յակոբայ խաչվեմ».
Այս է տապան հանգստեան հանգուցեալ Սրապիոն մեծանուն Մուրատեան պարոն Յակոբայ, որ եղեւ հիպատոս Բրուսիոյ եւ Ամերիկայ գերագոր տէրութեանց, ի նշան հանճարեղ խոհեմութեան իւրոյ ստացաւ ի Պրուսիոյ մեծագոր տէրութենէն զասպետութեան կարմիր արծուանշան խաչն եւ մատանի, պերճացեալ խոհական շքով ի գործ հիպատոսութեան վեշտասան ամաւ, յորում գտաւ յաչս բազմաց, ճոխացեալ առաքինի գործով ի տիս 49 ամի փոխեցաւ առ աստուած, վասն որոյ խնդրէ յանցատրացոյ միով Հայր մերիւ յիշել զինքն ի տէր։ Յիշեսցէ եւ զձեզ յիւր ողորմութիւն, 1858 դեկտեմբեր 19։
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 36ա։

ԾԵ «Յովհաննէս պատրիարզի մահարձան».
Այս է տապան հանգստեան տէր Յովհաննու սրբազան արքեպիսկոպոսի Չմիտնացոյ եւ բազմարդին պատրիարզի սուրբ աթոռոյս, որ վարեալ զիշխանութիւնն զամս տասն, հանգեաւ ի տէր յամի 1860, ի 23 դեկտեմբերի։
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 31բ։

ԾԶ «Գէորգ եպիսկոպոսի՝ լուսարարապետի խաչվեմն գրեալ ի նոյն վիմի».
Աստ վերիյիշեալ Գէորգ եպիսկոպոսն եւս հանգեաւ եւ եղաւ յամի տեսուն 1861, յունվ. 16։
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 33բ։

ԾԷ «Կ. Պօլտոյ Յակոբ պատրիարզի շիրմի պատճեն».
Այս է տապան հանգստեան Յակովբայ սրբազան արքեպիսկոպոսի՝ նախկին պատրիարզի Կոստանդնուպոլսոյ, որ եկեալ յովստ տնօրինական տեղեաց, հանգեաւ ի տէր յամի 1862, ի 6-ն նոյեմբերի։
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 31բ։

ԾԸ «Մեսրոպ եպիսկոպոսի շիրմի պատճեն».
Աստուած իմ Յիսուս, յոյս իմ նորոգման,
Ի ներքոյ վիմիս կամ ի թագստեան,

Էիդ սպասեմ ահեղ զայստեան,
Աներկբայ յուսով կենացն անվախճան,
Առ զիս աստի տէր առ, որ չունիմ սէր,
Կոչեա զիս ի վեր՝ առ ի փառսդ վայել, //
Ես եպիսկոպոս ի յովստէն Սոյոյ,
Մեսրոպ անուն իմ ի Գերմանիկոյ,
Յետոյ միաբան Յակոբեանց զահի,
Անցատրք, աստի տուք ինձ գողորմի։
Յամի տեսուն 1863, մարտ 14։
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 32ա-բ։

ԾԹ «Վանեցի Սեփեան տիրացու Մարգարի խաչվեմ».
Հանգզի նազելին յայս տխուր տապան, //
Վանեցի ուշիմն Մարգար Սիւնիկեան,
Լի յուսով դիմեալ վասն առողջութեան,
Քսաներքոյ ամեայ կուր եղեալ մահուան,
Այնչափ սիրելի վարուքն մաքրական,
Յաչս խնամակալին հորըն Խրիմեան,
Որ ի սփոփանս իւրոյ թախծութեան
Յիշատակ կանգնէ զայս ցուրտ մահարձան.
Որ հանգեաւ ի Քրիստոս 1870, ապրիլ 14 թուականի։
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 36բ։

Կ «Բաբերդցի Սահակ արքեպիսկոպոսի մահարձանի պատճեն».
Այս է տապան հանգստեան տէր Իսահակ արքեպիսկոպոսի Բաբերդցոյ՝ լուսարարապետի ս. աթոռոյս, 1883, մարտ 15։
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 33բ։

ԿԱ «Ատրեամանցի աթոռակալ Վրդանէս վարդապետի շիրմի պատճեն».
Տէր Վրդանէս հեզ ըարունիս,
Ամփոփեցաւ յայս տապանիս,
Ի հայրենեան Ատրեաման
Եկեալ Սաղիմ երկնանման։
Յիսունհինգ ամ վարդապետէ,
Շատ աշակերտ հասուցանէ,
Քրսան ամ եւս խոստովանահայր
Արանց եղբարց էր մխիթար։
Նաեւ չորս ամ սուրբ աթոռոյն,
Սա տեղապահ եղեւ արթուն,
Թողեալ բազում սա յիշատակ,
Ննջեցելոց իւրոց համակ։
Իննսուներկու ամաց հասեալ,
Հանգեաւ ի տէր զաշխարհ թողեալ։
1884։
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 32բ։

ԿԲ «Եսայի պատրիարզի շիրմի պատճեն».
Այս է տապան հանգստեան Եսայեայ սրբազան արքեպիսկոպոսի Թալասցոյ եւ պատրիարզի սուրբ աթոռոյս, որ վարեալ զիշխանութիւնն զամս քսան, հանգեաւ ի տէր յամի 1885, ի 29 օգոստոսի։
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 31բ։

86 [Փիրղալեմյանը գրում է. «Ի ձեռն ձեռնասուն աշակերտին իւրոյ Տիգրանակերտցի Յակոբ վարդապետին»]։

ԿԳ «Աշրգեան Յակոբ Էֆէնտի եւ իւր կնոջ՝ տիկին Գատրնի մահարձանի պատճեն է յետագոյն».

Է կոթող սայր ի վեր գերկինս մատնանիշ,
Ազդէ մեզ յեթեր լինել ակնասպիշ:
Ոսկերք համակիր զիյզ առաքինեաց,
Հանգին աստ ի դիր հոգիքն երկնասլաց:
Անխնայ զեղին տուրս ողորմութեան,
Ի գոգ աղքատին եւ ազգին ի ծոց,
Ամնաք ի մեր սիրտ լերուք եւ հանգիստ,
Փառօք անվախճան երկնիցն ի խորան:
Յակոբ Էֆէնտի Աշրգեան Թալասցի, (ծնեալ)
1819 (եւ վախճանեալ) 1887:

Տիկին Գատրն ոչ Աշրգեան, (ծնեալ) 1824 եւ վախճանեալ 1885:

Ի յաւերժ յիշատակ առաքինի ծնողացն կանգնեաց զայս մահարձան երախտագէտ որդին Պօղոս պէյ Աշրգեան. 1890:

Հիւք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 33ա:

ԿԴ Այս է տապան դամբարանի,
Տեառն Պօղոսի ընտրեալ պետի,
Արդիւնատր միաբանի,
Յոյժ զիտնական իմաստիւք լի,
Տեղեալ գոլով սա Պալաթցի:

Հիւք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 35ա:

ԿԵ Արդ Բշվեցի⁸⁷ Գրիգոր վարդապետ, Գորեցի Գէորգ վարդապետ, Թամլանցի տէր Կարապետ, Մարտնց տէր Գրիգոր, Քանքերցի⁸⁸ տէր Հայրապետ, Դեւէիցի Կիրակոսին սուրբ խաչն օծել տվինք:

Հիւք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52ա:

ԿԶ «Թորանի հիւսիս. յորմն».

Ես՝ Բաղիշեցի Կարապետ վարդապետ, սեղանի սուրբ Խաչն օծեցի, յիշատակ ծնողաց իմոց՝ Մխիթարին եւ Խամբիկին:

Հիւք. ՄՄ, ձեռ. 9027, էջ 52ա:

ԵՒԴՈՎԻԱՅ

Ա «Այս է տապան հանգստեան Փաշայ-Խաթունին, որ փոխեցաւ առ Քրիստոս, թուին ԶԺԲ (1463)⁸⁹»:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 464ա:

Բ «Ի մի մեծ խաչարձանէ, որ կայ յԵւրոկիոյ Քառասուն մանկանց եկեղ. բակ».

Սուրբ Յօհաննու աւետարանչի գորութեամբ յիշատակ է սինս Նախջումու գեղէն Փառակու, որ այս սուրբ տանս յառաջմէ աշխատատր է // լուսատր հոգի խոճայ Ղամբերին, որդւոյն աշխատատր Զաքէին, որ այս տանս շինութեան վերակացու կամ ճի⁹⁰... թուին ՌճՀԲ (1723), մայիսի 28: Մինաս

87 «Բաշվեցի»:

88 «Գուգէ Քանաքեցի»:

89 «1865 յունվ. 27 ի Եւրոկիա, ի վան Յովակիմայ եւ Աննայի»:

90 «Երեք գիր ընդօրինակելէ զկնի տետրակ ջոր դիպնելով եղծեալ է այժմ»:

անուն Ըստամայօցին ֆերման հանեց շինելու. յորժամ կատարեցաւ մօլայքն եկեալ քակտեցին վասն մեր մեղացն. այլ այս թուին յուլիսի 13-ին Վարդապարի բարեկենդանի օրն զնացեալ նորաշէն վանքն⁹¹ ալ հրով չորս կողմ այրեցին. տաճար մնաց սաղ. յետոյ այս թուէս սեպտեմբեր 18 միջնորդութեամբ սրբոց քաղցրացաւ սիրտ թագաւորին, վեզիրին, սուրբ տան եկն դափուչի հաճի Ամէտ աղան. այս երկու տունս կրկին նորոգեցինք: Միաբերան ասեմք աստուած հաստատուն պահէ մինչ ի կատարածն, ամէն:

«Քարի միւս երեսն այն յիշատակն եւս գրեալ կայր».

Դարձեալ այս տունս զնացեալ մերամի թէ վարպետի կամ քերեստոն թէ տաճկաց յետ ու առաջ. ամէնն ԸՌՄԾ (8250) դուռուշ եղել: Աստուած շէն պահէ տուօղքն, ամէն⁹²:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 390ա-բ:

Գ «Եւրոկիոյ Յովակիմ [եւ] Աննայի վանոց աղբեր նորոգութեան յիշ.».

Կամեցողութեամբն աստուծոյ նորոգեցաւ սուրբ վանս այս լի ՌՄԾԵ (1805) թուին եւ յունվարի մեկին, արդեամբ բարեպաշտ իշխանաց քաղաքիս կամ հասարակ ժողովրդեան հոգաբարձութեամբ Բարուճեան պարոն Պօղոսին, որ էր վերակացու եւ վանահայր սրբոյ վանուցս. ուրեմն տէր Յիսուս հաստատուն պահեցէ պատճառ շինողաց վարձս բարեաց պարգեւեցէ, ամէն⁹³:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 372բ:

Դ «Եւրոկիոյ Սուրբ Յօհան Ոսկերեան վանոց բակի աղբեր արձանագրութիւն».

Հաստատեցաւ աղբիւրս ի վանս Սրբոյն Հօհաննու Ոսկերեանի օգնութեամբ Անջրտեցի մահտեսի Գարբիէլեան սառաֆ մահտեսի Մարտիրոս ամիրային եւ որդւոցն Գէորգ աղային եւ Թորոս աղայի[ն], այլեւ հաւասար ժողովրդեանն Եւրոկիոյ եւ աշխատութեամբ վանահայր Աննեան պարոն Գէորգին, ի թվին ՌՄՀԶ (1827), նոյեմբեր Ա [1]⁹⁴:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 376ա:

Ե «Եսայի վարդապետի մահարձան».

Տեառն Եսայեայ վարդապետի
Մարմին աստէն ի հող դնի,
Որ հայրենօք Մարգուանցի,
Եղբայր Յարութիւն վարժապետի,
Սա յաշխարհէս հրաժարի,
Դիմէ ի վանս այս հրաշալի,
Աշակերտեալ դիտին մեծի,
Գէորգ արհի սրբազանին,
Որոյ յարատիւ յաւէտ սնանի,
Համեստ ի վարքս զարդարի,

91 «Սուրբ Աննայի»:

92 «1865 յունվ. 25 ի Սուրբ Քառասունքն յԵւրոկիայ»:

93 «1865 յունվ. 27 չորեքշաբթի ի վան Յովակիմայ [և Աննայի]»:

94 «1865 ի մայ. 1 ի նոյն վանք, որ կայ մերձ ի գիւղն Պիզաղի»:

*Եւ վարդապետ իսկ ձեռնադրի,
Շնորհօք հոգոյն գերափայլի,
Յերեսն եւ ինն յամբս կենի,
Մահն յաղթող գայ հասանի,
Յանանց ի կեանս վերափոխի,
Առնուլ զպսակն իւր արժանի,
Յամի տեառն 1827, փետր. 13⁹⁵:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 339բ:*

Չ «Եւրոկիոյ Յովակիմայ եւ Աննայի վանուց նորոգութեան յիշատ.».

Ողորմութեամբն աստուծոյ նորոգեցաւ սուրբ ուխտս ի հիմանէ հանդերձ սենեկօք եւ շրջապատ պարսպօք եւ արտաքին շինուածովք յամի տեառն 1828. սկսեալ յսկիզբն ապրիլի եւ աւարտեալ ի վերջն սեպտեմբերի, աշխատութեամբ Գէորգ արքեպիսկոպոսի եւ տրօք ժողովրդեան եւ իւրն եւ միաբանութեան ի փառս աստուծոյ⁹⁶:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 376բ:

Է «Անապատաց նուիրակ Սարգիս վարդապետի խաչվեմ».

Երկուց անապատաց ժողովարար ճգնաւոր Սարգիս վարդապետն աստ հանգեաւ եւ եղաւ յայս շիրիմ ձեռամբ Յակոբ վարդապետին⁹⁷, թուին ՌՄՀԸ (1829)-ին, սեպ. Ի (20)-ին⁹⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 341ա:

Ը «Եւրոկիոյ դէտ Չմիւռնացի Գէորգ արքեպիսկոպոսի մահարձան».

*Յնծա հրճուանօք տապան տենչալի,
Որ ունիս ի քեզ զգանձ ցանկալի,
Գէորգ մեծ արհին այր սքանչելի,
Շինող սուրբ ուխտիս, հովիւ պանծալի,
Ի հանդէս բարունեացս յոգունց գերագանց,
Իբրեւ լուսարփի ի հոյս աստեղաց,
Խաչակրօն վարուք փայլեալ գերապանձ,
Չուարթուն մտօք նման հրեշտակաց,
Յորդախաղաց գետ բոխեալ յԵդեմայ,
Ոռոգեաց գտունկս, որ Եւրոկիայ,
Ոսկերանձ ծաղիկ բուսոյց ի նմայ,
Նուիրեաց ի ձօն ազգիս մեր Հայկայ:
Երանին զքեզ քաղաք Չմիւռին,
Որ զայս բուսուցեր ծաղիկ ծովային,
Արդ խորշակահար ի մահ դառնակին,*

95 «1865 յունվ. 27 ի վանս Յովակիմայ եւ Աննայի» [Նույն տեղում Փիրղալեմյանը գրում է. «Ի նոյն վանուց գերեզմանատան մէջ թէև կային շատ մի եւս խաչվեմք, բայց զայն ուրոյն ուրոյն գրել չժամանեցի: Ի սմին գերեզմանատան կայ թաղեալ յամի 1829 վախճանեալ վարուք առաքինի Գրիգոր արժանաշիշատակ վարդապետն մականուամբ Կիւնկէօրմազ կոչեցեալ»: Այնուհետեւ բերում է. «Կիւնկէօրմազ Գրիգոր Տփիսիսեցի բանիբուն վարդապետի մի դամբանականն է, որ ի կենդանութեան յօրինեալ էր ի վերայ ինքեան»: Սակայն այդ «դամբանականը» չենք բերում, քանի որ վիմագիր արձանագրութիւն չէ]:

96 «1865 յունվ. 27 յԵւրոկիայ, ի նոյն սուրբ ուխտն»:

97 «Թօփուգեան արհին է»:

98 «1865 յունվ. 25 յԵւրոկիայ»:

*Տնկեցաւ հոգով ի դարաստ երկնային:
1832 սեպտեմբերի 13⁹⁹:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 342ա:*

Թ «Եւրոկիոյ Սուրբ Ստեփաննոս եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւնն է».

Այս տաճար յանուն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային կառուցաւ արդեամբ եւ տրօք համայն ջերմեռանդ ժողովրդեանն հոգաբարձութեամբ եւ ջանիւք երկուց գործակալաց եկեղեցոյս Ղալփախճեան մահտեսի Մարտիրոս աղայի եւ Թաղէոսեան մահտեսի Յակոբ աղայի, յամի տեառն 18, ի միջոցի երկամեայ ժամանակի. տացէ տէր հաստատութիւն եւ բարեկարգութիւն ի պարծանս ազգիս¹⁰⁰:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 378ա:

Ժ «Սուրբ Յօհան Ոսկեբերանի վանուց եկեղ. գաւթի դրան վերայի արձանագրութիւնն».

*Բերանդ ոսկի, փառք քեզ աստուած միշտ ասէր,
Աշխոյժ բարի վերընծայել ստիպէր,
Չայս չստանայր Յակոբոս դեթ մինչ յաթոռ քո դեռ նստէր,*

Չորոյ երգունս ճգանց ի սմայ ի հաճոյս քո ընկալ, տէր:

«Կից սմին յայլ քարի վերայ».

Շինեցաւ Սուրբ Յօհան Ոսկեբերանի տաճարս բոլոր շրջապատ պարսպօքն // եւ ամենայն շինուածովքն Եւրոկիոյ եւ վիճակաց նորա ազգիս հայոց բարեպաշտ օրհնեալ ժողովրդոցն տրօք եւ ողորմութեամբ: 1842 եւ հայոց ՌՄԴԱ¹⁰¹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 380ա-բ:

ԺԱ «Սուրբ Յօհան Ոսկեբերանի վանուց խաչկալի յիշատ.».
Յիշատակ է Սուրբ Ոսկեբերանի խորանիս խաչկալն Ասլանեան մահտեսի Յակոբ աղային

99 «1865 յունվ. 27 յԵւրոկիայ, ի վանս Յովակիմայ եւ [Աննայի]: Փիրղալեմյանն այնուհետեւ գրում է. «Հեղինակ վերոյիշեալ տապանագրին էր արժանաշիշատակ Յոհաննէս արքեպիսկոպոսն Չմիւռնացի հոգեւոր դէտ վիճակին Ալկնայ: Թէ տյն Յոհաննէս եպիսկոպոս եւ թէ հանգուցեալ Գէորգ արհին, նոյնպէս նաեւ պուէտ բարունին Բարդուղիմէոս, որ էր ի քաղաքէն Մանիսայի եւ վանահայր Կարմուրայ Սուրբ Աստուածածնի ուխտին, որ կայ ի Վան, էին երեքեան եւս յաշակերտաց բազմերջանիկ եպիսկոպոսին Երեմիայի Կոստանդնուպօլսեցոյ՝ ընկերակցին Աստուածատուր պատրիարքին Կ. Պօլսոյ, որ ի բանդի արարին զմեծ սքանչելիս, որոյ գիտակք են բնակիչք Կ. Պօլսոյ: Սոյն Գէորգ արհոյ գերեզման եկեղեցոյ գաւթի դրան յառաջ մի կամարի տակ է: Ի վերայ որոյ մի խայտաբղետ պատուական մարմարիոն քար ձգեալ կայ եպիսկոպոսական եմփորոնով քանդակագործեալ եւ իւր մահարձանի գիրն եւս մի սեւագոյն մարմարիոնի վերայ գրեալ կայ եւ հաստատեալ են զնոյն վէմն յորմի անդ: Սոյն երանելի հանգուցեալն մի ընտիր Քարոզգիրք հեղինակեալ է, որ աստ եւ անդ այժմ օրինակք գտանին: Հանգուցելոյս կից հանգչի նաեւ Եւրոկիացի Գարուստ ծայրագոյն վարդապետ, որ կացեալ է զկնի Գէորգայ արհոյն եւ Յակոբայ պատրիարքին ժամանակ ինչ դէտ յԵւրոկիայ, գորոց հոգիս տէր լուսաւորեցէ»:

100 «1865 յունվ. 24 յԵւրոկիայ, յառաջնորդութեան Յակոբ բարունոյ Շգնատրեան»:

101 «1865 ի մայիսի 1, ի նոյն սուրբ ուխտն, որ կայ ի Պիզառի գիւղ»:

վասն հոգւոց ծնողացն եւ զաւակացն կենդանեաց եւ ննջեցելոցն համայնից: 1843¹⁰²:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 380բ:

ԺԲ «Սուրբ Յօհան Ոսկեբերանի վանուց աւագ խորանի գեղեցիկ խաչկալի եւ սրբատաշ բեմի յիշատակարանաց պատճեն է, որ Հիւսիսեանց եւ Ալլանեանց տոհմականաց առատ տրօքն յառաջ եկեալ են»:

Անջնջելի յիշատակ է սոյն մարմարոնեայ բեմս Հիւսիսեան հանգուցեալ մահտեսի Գրիգոր աղայի որդի մահտեսի Մանուկ աղայի եւ հանգուցեալ մահտեսի Յակոբ աղայի որդոցն՝ մահտեսի Աւետիս աղայի եւ մահտեսի Յօհաննէս աղայի եւ մահտեսի Մարտիրոս աղայի, մահտեսի Մալմուկեան, յամի տեառն 1843¹⁰³:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 392բ-393ա:

ԺԳ «Եւրոկիոյ Յովակիմ [եւ] Աննայի վանուց ուխտատրաց բաղ շինողի յիշատակարան»:

Ի թիւ փրկչական քառասուն ութի (1848), Հիւսիսեան Յովհաննէս աղան մահտեսի, Չեւ հասեալ ի այր ծաղկեալ հասակի, Յանկարծ ի կայանս երկնից վեր փոխի, Որոյ արդեամբս այս թաղըս շինի, Նորին յիշատակ օրհնութեամբ լիցի, Լուսաւորեսցէ տէր նորին հոգի, Հանգուցէ ընդ սուրբս իւր յաջակողմի¹⁰⁴:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 381բ:

ԺԴ «Եւրոկիոյ Սուրբ Երրորդութիւն եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւն»:

Նորաշէն տաճարս յանուն Սուրբ Սարգսի, Տարաբախտութեամբ յանկարծ հրդեհի, Յերեքտասան ամս նստեալ ի մոխրի, Ապա այցելութիւն տեսառն հասանի, Եւրոկիացոց սուզն ի բաց մերժի, Գեր քան զառաջին պայծառ նորոգի, Սուրբ Երրորդութեան յանուն օծանի, Յեօթներորդ ամի Յակոբայ դիտի, Ըր կանգնեաց յիշատակ գոյգ իւր արծաթի, Կրովք ժողովրդոց ըստ կամատրի, Եւ անձնադիր ջանք ոմանց ըստ կարգի, Ետուն ի վայելս մեզ զմայլելի, Որք եղէն պատճառ կանգնել սոյն յարկի: Եւ աշխատեցան զօր ամենայնի, Գրեսցին անուանք յերկնից կամարի, Ի արքայութեան լիցին արժանի:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 381բ:

ԺԵ «Նոյն յիշատակարանին կից յայլ քարի մի վերայ սա եւս կայր»:

Յիշատակ է փառաւոր դրունս բոլոր քարամբն շորջանակի հանգուցեալ տիրկէր մահտեսի Սուքիասի, զոր կտակաւ աւանդեալ էր որդոյ իւրոյ՝ տիրկէր ուստայ Օհանին շինել¹⁰⁵:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 381բ:

ԺԶ «Եւրոկիոյ Սուրբ Աստուածածին եկեղեցոյ շինութեան յիշատակարան»:

Շնորհիւ փրկչին մերոյ եւ յատուկ պաշտպանութեամբ անարատ ծնողին իւրոյ կառուցաւ սուրբ տաճարս եւ նուիրեցաւ յանուն սրբուհոյ Աստուածածնի արդեամբ հաւասար ժողովրդեանն, ջանիւք եւ հոգաբարձութեամբ Հիւսիսեան մահտեսի Մանուկ աղային, յամի տեառն 1849:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 382ա:

ԺԷ «Արձանագրութեան քարի երկուստք սա եւս գրեալ կայր»:

Յիշատակ է դուռն սրբոյ եկեղեցոյ բոլոր պարագայիւրն պախըր/ճի Սեմերճեան մահտեսի Կարապետին եւ եղբօրն՝ մահտեսի Յարութիւնին վասն ննջեցելոց եւ համայն կենդանեաց իւրոց¹⁰⁶:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 382բ:

ԺԸ «Եւրոկիոյ Սուրբ Քառասուն մանկանց եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւն»:

Ի հիմանց անտի նորոգ կառուցաւ Սրբոյ Քառասնից մանկանց եկեղեցին արդեամբ եւ ձեռտուութեամբ համորէն ժողովրդոց քաղաքիս, որոց տէր լիցի վարձահատոյց եւ աշխատողաց սորին, պարզեւեսցէ տէր զիւր անբաւ ողորմութիւնն եւ սուրբ տաճարս այս անփորձ եւ անասան պահեսցէ ի պարծանս ազգիս հայոց: Յամի տեառն 1851 եւ հայոց Ռ-Յ-ին¹⁰⁷:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 382բ:

ԺԹ «Եւրոկիոյ Սուրբ Երրորդութիւն եկեղեցոյ բակի աղբեր արձանագրութիւն»:

Աղբիւրս այս մշտահոսան, Չովացուցիչ սրտից մարդկան, Կանգնեալ արդեամբ ժողովրդեան, Եկեղեցոյս Երրորդութեան: Պատճառք սորին լիցին արժան:

Ի «Ճրասունեան զարմէ Ղատեմեան տիկին Հռիփսիմէի խաչվեմ»:

Ծաղիկ պայծառ Ճրասունեան, Փայլեալ ի տանն Ղատեմեան, Ընկեր աղա Գրիգորի, Հռիփսիմէ կին պատուական: // Թառամեցոյց մանգաղ մահուան, Ծածկեալ հողովք զգանձն անմման, Չքնաղաշէն յարկաց փոխան,

102 «1865 մայիս 1 յԵւրոկիայ, ի վանս Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան հայրապետի»:

103 «1865 մայիս 1 ի նոյն ուխտն»:

104 «1865 չորեքշաբթի յունվ. 27 յԵւրոկիայ, Յովակիմ Աննայի վանք, յաւորս տեսչութեան վիճակին Գգնաւորեան ի տէր հանգուցեալ Յակոբոս վարդապետի»:

105 «1865 յունվ. 26 երեքշաբթի յԵւրոկիա, ի Սուրբ Երրորդութիւն»:

106 «1865 յունվ. 18 ի Սեբաստիայ»:

107 «65 յԵւրոկիայ»:

*Բնակեցուցեալ յայս դամբարան:
Ընկալ ասպա Փրկիչ մարդկան,
Չհոգի տորա յարքայութեան,
Յորժամ փառօք գաս միս անգամ,
Դասեալ ի դասս աջակողմեան:
1853 նոյեմբեր 29¹⁰⁸:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 0բ:*

ԻԱ «Ղատկմեանց հանգուցեալ Սարգիս աղայի, Յօհաննէս եւ Հռիփսիմէ որդոց խաչվեմք ի միասին»:

*Որք յայս շիրիմ ամփոփեալ կան,
Եղբայր եւ քոյր անգուգական,
Բարի ծնունդ ազնուական,
Սարգիս աղայի Ղատկմեան:
Իբրեւ զարփի Յօհան աղան,
Հռիփսիմէն լուսնոյ նման,
Միոյն պսակ փեսայութեան,
Որ պատրաստիւք քաջ իսկ արժան:
Իսկ միւսոյն քող հարսնութեան,
Արդ ընդ հողովք ծածկեալ գտան,
Ոհ, այս է վճիռ կենաց մարդկան,
Չոր հատանէ մանգաղ մահուան:
Չի ոչ կանուխ, ոչ զանագան,
Գիտէ երբէք այն դաւաճան,
Որ յարուցիչդ ես ամենայն
Ննջեցելոց հոգւոց մարդկան:
Յարո զսոսին ի միս անգամ,
Դասել յաջմէ յարքայութեան,
(վախճանեալք) 1853, սեպ 5 եւ նոյեմ. 1¹⁰⁹:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 0բ:*

ԻԲ «Ետրկիացի Քեստկեան մահտեսի Կարապետ աղայի մահարձան»:

*Հասակ ծերութեան, հասակ խղճալի,
Որ միշտ հիւանդութեամբ տառապեալ մաշի,
Կարապետ մահտեսոյս Քեստկեան տոհմի,
Օրհասի պատահեաց սոյն դէպք ցաւալի:
Ի համար շինութեան այս սուրբ տաճարի,
Չամենայն ճիգ անձինս անշէջ վառեցի,
Այժմ ընդ հովանեաւ տորին ննջեցի,
Ի ներքոյ հողախիշտ սոյն մահարձանի:
Փրկիչ իմ, տէր Յիսուս առաջնորդ բարի,
Ողորմեա հոգւոյ իմ յամեղ ատենի,
Աջ քո որդոց իմոց լիցի հովանի,
Մնալ անփորձ կենօք յայսմ աշխարհի¹¹⁰:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 2ա:*

ԻԳ «Մահարձան Ետրկիացի Ասլանեան մահտեսի Յովակիմ աղայի»:

*Արձանացեալդ դէմ յանդիման,
Չի՞նչ նշմարես յայս մահարձան,*

*Թէպէտ լռիկ կայ եւ անձայն,
Բայց հայելի կենաց մարդկան,
Սա անբարբառ մատենարան,
Քան զոր ազտեն արք քաջարան,
Կանգուն կենաց էից համայն, //
Չափէ կանուխ կամ անագան, //
Լարեալ հանդէպ զերթ աղեղան,
Սլաքամուխ նետիւք մահուան,
Բարձեալ զոգին ի սուղ վալլրկեան,
Թողու զմարմին տի անկենդան,
Արք զայս բաժակս դառնութեան,
Մահտեսի Յովակիմ աղայն,
Որում մակդիր ազնիւ անուան
Սկզբնատառք ծանօթս տան,
Նորին կենաց ճրագարան,
Փայլատակեալ եօթնաջանեան,
Չամս վաթսուն եւ երեքեան,
Շիջաւ ասպա հողմովք մահուան,
Եթող ժառանգ յերկրի միայն,
Հնգեակ որդիս ազնուական,
Չորոց մարդեմք ի մի բերան,
Լինիլ հարցն իւրեանց փոխան:
Աշխարհ լացին, դեռես լան,
Որքք եւ այրիք անխնամ կան,
Քանգի բազմաց լինէր պաշտպան,
Գորովագութ այս մեծ իշխան,
Նոր նորոգող փրկչին մարդկան,
Յորժամ փառօք գաս հայրական,
Ընկալ զսա յերկնից կայեան,
Յարքայութեանդ շտեմարան,
1858 նոյեմ. 1¹¹¹:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 2բ-3ա:*

ԶՄԻՒՆԻԱ

Ա «Ծովախայեաց Չմիւռնիոյ չքնադակերտ եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւն»:

*Հոյակապ այս սուրբ տաճար զկնի այրմանն յամին 1845 դարձեալ յանուն Սուրբ Ստեփաննոս Նախավկայիս ի հիմանց նորոգ կառուցաւ արդեամբ առհասարակ ժողովրդոց Չմիւռնոյս եւ մասնատր նուիրօք ոմանց բարեպաշտից, ի հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի Ս. Ս. Ներսէսի Ե-րդ սրբազան կաթողիկոսի Ամենայն հայոց եւ յառաջնորդութեան քաղաքիս տ. Պօղոսի սրբազան արքեպիսկոպոսի, յամի տեսուն 1853¹¹²:
Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 383ա:*

Բ «Փափագեան Անդրէաս վարժապետի մահարձան»:
Ռուբէնի Անդրէաս Փափագեան բարեջան տեսչի եւ բազմարդիւն վարժապետի ս. Մեսրոպեան վարժարանին Չմիւռնիոյ, զոր ծաղկեցոյց զամս

108 «1865 յապրիլ 28 յԵտրկիայ»:

109 «Սոյն դամբանականի հեղինակն էր գիտնական տէր Յովսէփ Հալաճեան Ետրկիացի: 1865 յապրիլ 28 ի քաղաքն Ետրկիոյ»:

110 «ՅԵտրկիայ 1865 յունվ. 25 ի բակն Քառասուն մանկանց եկեղեցոյ»:

111 «Հեղինակ սոյն դամբանականիս է տէր Յովսէփ հմուտ քահանայն Հալաճեան Ետրկիացի: 1865 յապրիլ 28 յԵտրկիայ քաղաք»:

112 «1861 ի մայիս 11 ի Չմիւռնիայ»:

քսան եւ վեց. կանգնեցին զայս մահարձան աշակերտք իւր շնորհապարտք: Ծնեալ ի 11 ապրիլի 1806, փոխեալ յաստեացս ի 6 մարտի 1857¹¹³:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 2ա-բ:

Գ «Բալուեցի աղա Խաչատուր Ղազարեանի խաչվէմ».
Դամբարանիս անձուկ ծոց,
Ննջէ գրուն արդարոց,
Պերճ Խաչատուր Ղազարեան,
Անդամ ազգիս պատուական,
Պանծայ Բալու ի փառս քո,
Առնս մեծի խանձարուր,
Այլ առաւել Չմիւռին,
Ասպրնջականըն նորին,
Վաճառական մեծանուն,
Արդարասէր եւ արթուն,
Բարեպաշտօն, երկիրաձ,
Գոյիւքըն չափ ողորմած,
Չի զկալուածսն հոյակապ,
Եկեղեցոյ թող ի կտակ,
Որ մերձ ի մուտս արեւուն,
Անդ տեսչութեամբ ինքն ուրոյն,
Ետ զարդարիլ այս տաճար,
Ի ծեփս ի ներկըս ճարտար,
Այսպէս վարեալ արծարծուն,
Ոչ զՀիմէնեան այլ զհոգոյն,
Չահ իողայից լուսափայլ
Եւ յոլետոյ իւր յեցեալ,
Ի տիսն երբեակ քսան եւ հինգ,
Բարձին ի մէնջ զնա երկինք:
Յամի տեառն 1857 հոկ. 29¹¹⁴:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 2բ:

Դ «Չմիւռնիոյ Պուռնօվայ եկեղեցոյ շինութեան արձանագրութիւն».

Սուրբ Խաչ եկեղեցիս շինեցաւ արդեամբ ժողովրդեան Չմիւռնոյ եւ Պուռնօվայոյ ի վերայ տեղւոյն մահտեսի Սարգիս աղայի Ղօնճաեանց եւ օծաւ ձեռամբ Պօղոսի սրբազան արքեպիսկոպոսի առաջնորդին Չմիւռնոյ, 1863 սեպ. 14¹¹⁵:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 385ա:

Ե «Չմիւռնիոյ Կարչեաքայ ամուն գեղջ եկեղեցոյ շինութեան արձանագրութիւն».

Եկեղեցիս յանուն Սրբոյ Աստուածամօր կառուցաւ արդեամբք բարեսէր ազգայնոց Չմիւռնիոյ եւ Քորդէլիոյի, յառաջնորդութեան սրբազան Պօղոս արքեպիսկոպոսի Չմիւռնիոյ, Քորդէլիոյ: 1 օգոստոս 1871¹¹⁶:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 386ա, 407բ:

Չ «Չմիւռնիոյ դէտ Պօղոս պատրիարքի մահարձան: Ի յիշատակ ամենապատիւ տ. տ. Պօղոսի Բ արքեպիսկոպոսի սրբա-

զան պատրիարքին Կ. Պօլսոյ եւ առաջնորդին Չմիւռնիոյ. խաչվէմի պատճեն է».

Մահարձան

Յաւերժացի արդ քան զայս մահարձան,
Պերճ համբաւ վարուց վեհին գիտնական,
Տեառն Պօղոսի արիւոյն սրբազան,
Ծնեալն ի Պրուսայ զարմէ Թագաբազեան,
Չարգացեալ ի վարժս սուրբ գրոց ուսման,
Ընտրեցաւ քարոզ բանին կենսական,
Իբրեւ զկէս դար ի նոյն պաշտաման,
Տաղանդք իւր արդեանց վեհ հանդիսական,
Եկաց Չմիւռնոյ տեսուչ խոհական,
Ուր զամս երեսուն ի սէր հայրական,
Միշտ խաղաղ պահեալ գորդիսն հոգեկան,
Ապա կոչեցաւ պատրիարք Բիւզանդեան,
Իսկ յետ վեց ամաց ըստ ուխտին լրման,
Դարձեալ ի վիճակն հանգեաւ յայս տապան, //
Վերանորոգեալ ի կեանս անվախճան,
Մինչեւ հնչեսցի փող Գաբրիէլեան:
Ի Չմիւռնիա, 9 սեպտեմբեր, 1872:
Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ 20ա-բ:

Է «Չմիւռնիոյ եկեղեցոյ մարմարիոն սալահատակ շինողի արձանագրութիւն».

Շինեցաւ սալայատակ գաւիթս Սուրբ Ստեփաննոս եկեղեցոյ ծախիւք Պալէօզեան հարազատաց Կարապետի եւ Մատթէոսի, ի յիշատակ հօր իւրեանց բարեպաշտօն Մարտիրոսի եւ հանգուցեալ ազնուափայլ Տուռու տիկնոջ Պալէօզեանի եւ ըստ որոշման ազգային վարչութեան կանգնեցաւ յիշատակարանս յառաջնորդութեան տ. Մելքիսեդէկ սրբազան արքեպիսկոպոսի Մուրատեանց: Չմիւռնիա, 1 մարտ, 1885¹¹⁷:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 386ա:

ԷՅԻՊ ՍՈՒՐԲ ԵՂԻԱ

«Էյիպ Սուրբ Եղիա եկեղեցոյ արձանագրի պատճեն».

Ողորմութեամբն աստուծոյ վայելչագեղ կառուցաւ եկեղեցիս Սրբոյն Եղիայի մարգարէի ի պատրիարգութեան տեառն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի յարդեանց միայն // հարազատ քեռ քրիստոսագօր Յարութիւն ամիրայի Պէզճեան բարեպաշտուի Համասպիւռ տիկնոջ եւ պայծառածին զաւակաց նորա՝ Նշան, Պօղոս, Սարգիս եւ Յօվաննէս Չէլէպեաց եւ Մարիամ օրիորդին ի յիշատակ ինքեանց եւ ազգատոհմի իւրեանց, գորս տէր վարձատրեսցէ յաշխարհի աստ. եւ յարքայութեան իւրում, ամէն, յամի տեառն 1832, յուլիս 30¹¹⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 391բ-392ա:

ԷԶՄԻԱԾԻՆ

Ա «Էջմիածնայ զանգակատան շինութիւն».

113 «1873 սեպ. ի Չմիւռնիայ»:
114 «1873 սեպ. 12 ի Չմիւռնիոյ գերեզմանոց»:
115 «1873 սեպ. 20 ի Պուռնօվայ»:
116 «1873 սեպ. 24»:

117 «1885 մայիս 24 ուրբաք ի Չմիւռնիայ»:
118 «Օրինակեցի յամի տեառն 1870 ի մարտ 1 կիրակի մեծի պահոց առաջի շաբթուն, մինչ նորոգ թաղական կազմելոյ համար գնացեալ էի անդ պատրիարք սրբազանի հրամանաւ»:

Շնորհիս աստուծոյ եւ օժանդակութեամբ սրբազան հայրապետացն Փիլիպպոսի եւ Յակոբայ հրաշակերտեցաւ զանգակատունս եւ ծաղկեցաւ ի թուականիս ՌՃԺԳ (1664)¹¹⁹:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 390ա:

Բ «Գայիանէի վանուց դրան վերայի արձանագրի պատճեն է».

Ես՝ տէր Եղիազար կաթողիկոս Սուրբ Էջմիածնի, Հռովկայեցի գորով, տեսի զամայութիւն սուրբ վանուցս, որ յանուն սրբուհոյն Գայիանայ շարժեցայ ի գութ հոգեւոր սիրով եւ պարսպեցի զսա սրահօք, յարկօք եւ խցերօք. նաեւ զգաւիթ եկեղեցւոյս կառուցեալ յաջմէ խորան յանուն սուրբ առաքելոյն Պետրոսի եւ ի ձախակողմն խորան յանուն սուրբ առաքելոյն Պողոսի յիշատակ հոգւոյ իմոյ եւ ի հայոց թուականիս ՌՃԼԷ (1688) ամիսն¹²⁰:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 361ա:

Գ «Էջմիածնի Բ սեղանատան արձանագրութեան պատճեն».

Ի թվ. ՌՃԿԲ (1713), ես՝ Ջուղայեցի տէր Աղեքսանդր կաթողիկոս Ամենայն // հայոց, շինեցի սեղանատուն ի վայելումն Սուրբ Էջմիածնի միաբանաց վասն ճրմոռան¹²¹:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 363ա-բ:

Դ «Էջմիածնի տպարանի պատի վերայ յարտաքուստն էր սա».

Ես՝ Համատանցի տէր Աստուածատուր կաթողիկոս, ետու շինել տնտեստունս ի վայելումն Սուրբ Էջմիածնայ միաբանիցն, ՌՃԿԷ (1718) թուին¹²²:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 363բ:

Ե «Էջմիածնայ տաճարի կաթող. ի ներքուստ արձ. պատճեն է».

Ի թուականութեանս հայկական ՌՃԿԹ (1720) ես՝ տէր Աստուածատուր Համատանցի կաթողիկոս Ամենից հայոց, ետու նորոգել զչորեսին խախտեալ սինքն սրբոյ եկեղեցւոյս եւ զբոլոր եկեղեցիներն նորոգեալ եւ ծաղկեալ հանդերձ մարմարոնեայ շինուածովքն, որ ի մէջ սրբոյ եկեղեցւոյս են, յիշատակ հոգւոյ իմոյ, ի վայելումն տառապեալ ազգիս հայոց եւ աստ ի սուրբ աթոռս զետեղեալ միաբանից. եւ որք ընթեռնութեամբ զարձանս զայս, յիշեցէք զիս ի մաքրափայլ յաղօթս ձեր, եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի, ամէն¹²³:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 363բ:

Զ «Իջման տեղոյն երկաթեայ վանդակի յարեւմ. դրան վերայի գիրն է».

Ի թուին հայոց ՌՃՁԱ (1732), ի հայրապետութեան Արքահամ (Բ) կաթողիկոսի եւ հոգաբարձու-

թեամբ նորին շինեցաւ շրջապատ ճաղերս իջման տեղոյն Քրիստոսի գեղեցիկ շինմամբ. յիշեցէք ի տէր¹²⁴:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 364բ:

Է «Գասուց խորանաց յիշատակարանաց պատճեն».

Հրաշակերտեալ տաճար վառաց,
Վասն զենման գառին կենաց,
Ի փրկութիւն մարդկան մեղաց,
Յանուն երկուցքն Յակոբեանց,
Եղբոր տեառն եւ Ռոտմանց,
Արքահամու վեհին արդեանց,
Ի վայելումն հայոց ազանց,
Ի ներթուրջ մերում ազանց:
ՌՃՀԲ (1733)¹²⁵:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 364բ:

Ը «Սուրբ Էջմիածնի որմնոց նորոգողէն».

Յօգնականութեամբն աստուծոյ, նորոգեցան ներքնաշարեալ չորք կարգ քարինքս բոլոր որմնոց լուսանկար սուրբ տաճարիս հոգաբարձութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսի Ամենայն հայոց, արդեամբ Ակնայ Ապուշեխցի եւ ի Կոստանդնուպօլիս բնակեալ ի Քրիստոս հանգուցեալ մահտեսի Աստուածատուր աղայի որդի բարեպաշտ Յարութիւն ամիրայիս ի յիշատակ ինքեան եւ որդոյն իւրոյ՝ մահտեսի Յովհաննէսին եւ այլ ամենայն իւրայնոցն, ՌՄԼԳ (1784)¹²⁶:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 369ա:

Թ «Էջմիածնայ ինչ ինչ շինութեանց յիշ. վանուց միջին դրան վերայ».

Շնորհիւն աստուծոյ շինեցաւ կամարակապ դռունս եւ արեւելակողմն ներքնայարկիս, որք են վեց խոց եւ անբարանոց բրնձոյ հանդերձ կցորդ շինուածովքն, հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին, արդեամբք Ջուղայեցի Էմինիագեան Խաչիկ աղային, ի բարի յիշատակ իւր եւ կենակցին իւրոյ՝ Մարիամ խաթունին եւ որդոց իւրեանց՝ Մովսէս աղային եւ այլ ամենայն կենդանեաց եւ ննջեցելոց իւրեանց, ՌՄԼԴ (1785) թուին¹²⁷:

Հիմք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 369բ:

Ժ «Էջմիածնայ սեղանատան նորոգութեան յիշ».

Յաջողութեամբ ամենակարողին աստուծոյ եւ հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսի Ամենայն հայոց, նորոգեցաւ ի հիմանէ սեղանատունս եւ փոքր սրահս հանդերձ համայն վերնայարկօքն ձախիւք Ջուղայեցի Խաչատրեանց ի Բաղդաս բնակեալ Մարգար աղային, ի յիշատակ ինքեան եւ հոգելոյս ծնողաց իւրոց՝ Աւետին եւ Ով-

119 «1867 մայ. 17 ի սուրբ Էջմիածին»:

120 «1867 մայ. 20 շաբաթ ի Սուրբ Գայիանէ»:

121 «1867 մայ. 20 շաբաթ ի սուրբ Էջմիածին»:

122 «1867 ի մայիս 20 ի սուրբ Էջմիածին»:

123 «1867 մայ. 20 ի սուրբ Էջմիածին»:

124 «Մոյն վանդակ շինողն Էրզրումցի Միքայէլ վարդապետն լեալ է: 1867 մայիս 17 չորեքշաբթի ի սուրբ Էջմիածին»:

125 «Անդ, ի սուրբ Էջմիածին»:

126 «67 մայ. 17 ի սուրբ Էջմիածին»:

127 «1867 մայ. 17 ի սուրբ Էջմիածին»:

սաննային, եւ քեռ իւրոյ՝ Աննային եւ կանախն]ց իւրոց հանգուցելոցն եւ կենդանոյն եւ այլ ամենայն իւրայնոցն, ի ՌՄԼԷ (1788) թուականին¹²⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 370ա:

ԺԱ «Հռիփսիմէի վանուց խաչկալի շինութեան յիշատ.»

Ի հայրապետութեան տեսոն եւ տեսոն ութերորդի Յօհաննու Կարբեցոյ Ամենայն հայոց կաթողիկոսի, կանգնեցաւ խաչկալս պատկերազարդ եւ ծաղկանկար արդեամբ եւ աշխատասիրութեամբ Յարութիւն վարդապետի Վարդազարեանց՝ վանահօր Սրբոյն Հռիփսիմեայ: Ի 10 սեպտեմբերի 1841 (ՌՄՂ) ամի¹²⁹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 380ա:

ԺԲ «Եփրեմ կաթողիկոսի մահարձան».

Եփրեմ առաքինութեամբ սրբասնեալ հայրապետ, ծնեալ յամի տեսոն ՌճՂԹ (1750), կաթողիկոսացաւ ի ՌՄԾԹ (1810) եւ ընկալեալ ի թագաւոր կայսերէ ամենայն Ռուսաց¹³⁰ զասպետութիւն սրբոյն Աննայի Առաջնոյ, Աղեքսանդրի Նացոյ եւ Անդրէի առաքելոյն, վերափոխեցաւ յաստեացս երջանիկ մահուամբ յանանց կեանսն յախտենից եւ եղաւ յայս շիրիմ, ի 18 ի 16 յուլիսի¹³¹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 344ա:

ԺԳ «Կարպեցի Յովհաննէս կաթողիկոսի մահարձան».

Կաթողիկոս Ամենայն հայոց Յովհաննէս Ը Կարպեցի վախճանեցաւ 1842 ամի մարտի 25¹³²:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 346ա:

ԺԴ «Ներսէս Ե Աշտարակեցի կաթողիկոսի տապանագրի պատճեն».

Պաշտպան հայրենեաց կաթողիկոս Ամենայն հայոց Ներսէս Ե Աշտարակեցի, ծնեալ ի 13 փետրվարի 1761-ՌՄԺ, վախճանեալ ի փետրվարի 1857¹³³:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 2ա:

ԺԵ «Էջմիածնի Դաւիթ կաթողիկոսի մահարձան».

Ահա դամբարան եւ յարկ բնակութեան, Դաւիթ հօրն այն դիոյ հանգստեան, Կաթողիկոսի շնորհիւ օծութեան, Եւ հայրապետի գահիս սրբութեան: Որոյ դատ արեալ ի խռովութենէ, Չկնի հրաժարման ի վեհութենէ,

128 «67 ի սուրբ Էջմիածին»:

129 «1867 մայիս 19 ի Սուրբ Հռիփսիմէի ուխտ»:

130 «Նիկողայոս»:

131 «1867 մայիս 19 ի սուրբ Էջմիածին»: Փիրղալեմյանն այնուհետեւ գրում է. «Հասարակ միաբանութեան գերեզմանոցի մէջն է Եփրեմ հայրապետի գերեզման, ի ներքոյ փոքր կաթողիկէի միոյ եւ հիւանդք մանաւանդ ի դենդէ ըմբռնեալ յաճախսն ի շիրիմ լուսահոգոյն»:

132 «1867 մայ. 17 ի սուրբ Էջմիածին»:

133 «Սպիտակ պատուական մարմարիոն մի կայ ի վերայ նորին, կաթողիկոսական զգեստիք, գործ մեծի քարահատ ճարտարին Կոստանդնուպոլսեցոյ պարոն Սկրաչի թերես: 1867 մայիս 17 ի սուրբ Էջմիածին»:

Սիրով միշտ գգուեալ ի պետէն մերմէ, Սրբազան տեսոն մեծէն Եփրեմէ:

Հանգեաւ սա յամի տեսոն Փրկչական Հազար ութ հարիւր տասնեօթ թուական (1817), Ի նոյեմբերի ատուր միական, Մեծաշուք փառօք եղաւ յայս տապան¹³⁴:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 3բ:

ԼԷՍԿ

Ստեփան յիշեցէք ի Քրիստոս: ԹՎ. ԶԶ (1531)¹³⁵: Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 473ա:

ԼԻՄ ԱՆԱՊԱՏ

Ա «Լիմ անապատայ տաճար նորոգողի արձանագրութեան պատճեն».

Ի թուականութեան հայկազեան տումարի ՉԾԴ (1305), յաշխարհակալ // թագաւորութեան յազգէն նետողաց Ալաջաթու սուլթանին եւ՝ նուաստ տէր Զաքարիա վերադիտող Աղթամարայ, շինեցի ի հիմանց գտորք տաճարս սրբոյն Գէորգայ զօրավարին: Որ հանդիպիք, յիշեցէք ի Քրիստոս: Ընդ նմին զծնողսն մեր եւ զերարսն եւ զքուերսն եւ զայլ աշխատարսն եւ զերախտարսն, եւ Քրիստոս աստուած ողորմեսցի յիշողացդ եւ յիշեցելոցս, ամէն¹³⁶:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 358ա-բ:

Բ Կանգնեցաւ խաչս զերահրաշ բարեխօս առ աստուած տէր Յովհաննէս եպիսկոպոսի¹³⁷ եւ հարազատին իւրոյ Յովանէսին՝ հանգուցելոցն ի Քրիստոս, այլեւ կանգնողացն Խաղաղութենին եւ Կարապետին, ամէն, թուին ՊՀ (1421)¹³⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 445ա:

Գ ԶՎարդան փիլիսոփայն յիշեցէք ի Քրիստոս, թվին ՊՀԹ (1430)¹³⁹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 453բ:

Դ Տէր Յովհաննէս արհի եպիսկոպոս՝ առաջնորդ սուրբ ուխտիս¹⁴⁰, յիշեցէք ի տէր, թուին ՁԵ (1456)¹⁴¹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 461բ:

Ե Ես՝ Թումայ հայրապետս¹⁴², կանգնեցի զխաչս սուրբ բարեխօս առ աստուած (վասն) ննջեցեալ ծնողաց իմոց. որք երկիր պագանէք, յիշեցէք ի Քրիստոս, թուին ՁԺԲ (1463)¹⁴³:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 464ա:

134 «1867 թ. մայիսի 17 սուրբ Էջմիածնի Գայանէի վանք»:
135 «1866 սեպ. 2 ի Վան, ի Լէսկ գիւղի գերեզմանատուն»:
136 «1865 դեկ. 6 ի Լիմ կղզին»:
137 «Մեռելայարոյց կոչեցելոյ՝ Լմայ վանահօր»:
138 1865 դեկ. 6 ի Լիմ անապատ»:
139 «Շիրիմս է ի Լիմ կղզին Վանայ»:
140 «Վարազայ»:
141 «1868 յուլ. 21 ի Լիմ, ի մատենէն Թօփուզեանի»:
142 «Թերես վանահայր Լիմ անապատի»:
143 «1865 դեկ. 6 ի Լիմ կղզին ի Վան»:

Չ «Լմայ ամանդատան դրան արձանագրոյ պատճեն».

Շինեցաւ ժամատունս թուին ՌԼԱ (1582) ձեռամբ տէր Յովհաննէս եպիսկոպոսին, տէր Չարարիա եպիսկոպոսին, տէր Կարապետ եպիսկոպոսին, տէր Գալիթ վարդապետին¹⁴⁴, տէր Գրիգորն, տէր Սարգիսն, տէր Հայրապետն եւ միաբան սուրբ ուխտիս տէր Ստեփաննոս, տէր Պետրոս, տէր Սելքիսէ, տէր Պողոս. յիշեցէք ի Քրիստոս: Սպասատր սուրբ եկեղեցոյս զՍկրտիչն, զՈւրվարդին, զՍարանին յիշեցէք ի Քրիստոս¹⁴⁵:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 9բ:

Է Ես՝ Կարապետ եպիսկոպոս, կանգնեցի զխաչս¹⁴⁶ բարեխօս առ աստուած ի փրկութիւն հոգւոյ իմոյ, թուին ՌԼԱ (1582)¹⁴⁷:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 487բ:

Ը «Ի մի աջէ».

Սուրբ աջս բարեխօս է առ Քրիստոս վասն փրկութեան հոգւոցն Լայիխանին, Գ[իւ]լխտանին: ՌՂԳ [1644]¹⁴⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 390ա:

Թ «Լմայ դարպաս շինողի յիշ».

Ի հայրապետութեան տեսարցն Սիմէոնի եւ Թումայի¹⁴⁹ եւ յառաջնորդութեան տեսուն Յակոբայ ճգնազգեաց վարդապետին Վանեցոյ եւ ի թուակամութեանս հայոց ՌՄԺԵ (1766)-ին քակեցաւ փայտեղէն ժամատունս եւ շինեցաւ դարպասս ի հիմանց նոր ի նորոյ ձեռամբ Մոկացի Յօհաննէս վարդապետին¹⁵⁰. որք հանդիպիք միաբան եղբարց, աստուած ողորմի ասացէք, զի բազում աշխատանս կրեցի¹⁵¹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 367բ:

Փ «Լմայ եկեղ. տանեաց սրբատաշ քարայտակի յիշատ.».

ԹՎին ՌՄԼԷ (1788)-ին, հայրապետք Էջմիածնի եւ Աղթամարայ Դուկաս եւ Կարապետ կաթողիկոսունք եւ մերոյ անապատի առաջնորդ Յակոբ վարդապետ, այլեւ վէթիլ էր Վանցի վարդապետ, (որոյ) ձեռամբ նորոգեցաւ (դարպասի տանիքն)¹⁵²:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 370ա:

ՓԱ «Լմայ տաճարի եւ դարպասայ խաչկալ շինողի արձ.».

Յիշատակ է խաչկալներս Աշտարխանայ նվիրակ Ստեփաննոս վարդապետին, թիւ ՌՄՀԶ (1823)¹⁵³:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 376ա:

ԺԲ «Ստեփան եպիսկոպոսի խաչվեմ».

Ով լուսազարդ նշան փրկչին,
Յորժամ երեւիս ի ահեղին,
Լուսաւորեա լուսով քոյին,
(Չհոգի) ի Ստեփաննոս արքեպիսկոպոսին,
Որ է նուիրակ Աշթախանու:
ԹՎ. ՌՄՀԵ (1826)¹⁵⁴:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 339ա:

ՓԳ «Հասամբուրցի Յարութիւն եպիսկոպոսի մահարձան».

Ով լուսազարդ նշան Փրկչին,
Յորժամ երեւիս ի ահեղին,
Լուսաւորեա լուսով քոյին,
(Չհոգի) ի առաջնորդ Յարութիւն արքեպիսկոպոսին:

Թուին ՌՄՀԵ (1826)¹⁵⁵:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 339բ:

ՓԴ «Գարբիէլ եպիսկոպոսի մահարձանի պատճեն».

Խաչս բարեխօս է վասն Գարբիէլ վարդապետին¹⁵⁶ եւ իւր ծնողացն, հօրն՝ Չաքարին, մօրն՝ Թուրօյին, թվին ՌՄՉԷ (1838)¹⁵⁷:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 345ա: Նաև ձեռ. 9027, էջ 53ա:

ՓԵ «Լմայ շտեմարանի շինութեան արձանագրութիւն».

Յիշատակ յաիտեան շտեմարանս ցորենոյ Նորակերտ կառուցաւ իսկ արդեամբ Վանեցոյ Վանահօր այս ուխտիս Գարբիէլ Բարունոյ, Յիշել զինքն եւ զծնողսն, զաշխատողսն եւս սոյնոյ:

Յամի տեսուն 1845¹⁵⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 381ա:

ԿԱՊՈՒՏԿՈՂ

Ա «Կապուկողայ Սուրբ Յակոբայ վանուց աղբեր նորոգութեան քարն, որ այժմ կայ նոյն ուխտի բեմի առաջ».

ԹՎին ՌՆԽԷ (1698): Ընորիօք հոգւոյն սրբոյ շինեցաւ աղբիւրս բազում աշխատութեամբ ի հայրապետութեան տեսուն Նահապետ կաթողիկոսին Էջմիածնի եւ յեպիսկոպոսութեան սուրբ ուխտիս Գրիգորի /// ¹⁵⁹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 361բ:

144 «Լաւ նօտար էր սա»:

145 «1865 դեկ. 6 երկուշաբթի ի Լիւն կղզին, ի ծովն Վանայ»:

146 «Ի Լիւն կղզին, մերձ յեկեղեցին ի հարաւ կուտ»:

147 «1865 դեկ. 6 ի Լիւն»:

148 «1868 ի Լիւն, ի Թօփուզեանի գրոց»:

149 «Վերջինս Աղթամարայ է»:

150 «Նշանատր Արդար Յօհաննէսն է»:

151 «1865 դեկ. 6 երկուշաբթի ի Լիւն կղզին»:

152 «1868 սեպ. 5 ի Վան, առ Թօփուզեան»:

153 «1865 դեկ. 6 ի Վան, ի Լիւն կղզին»:

154 «Վերոյիշեալ խաչաքար Ստեփան եպիսկոպոս իւր կենդանութեան կանգնեալ է. ինքն յետոյ Նարեկայ վանքն վախճանեալ է եւ իւր նուիրակութեամբ շատ արդիւնատր եղեալ է Լիւն անապատին: 1865 դեկ. 6 ի Լիւն կղզին»:

155 Տե՛ս նախորդը, որը գրեթե նույնն է: Քանի որ անունները տարբեր են, ուստի թյուրիմացութիւն չի կարող լինել, այլ հավանաբար այդպէս է եղել իրականում: Փիրղալեմյանը գրում է. «65 ի Լիւն անապատ»:

156 «Եպիսկոպոս է»:

157 «1868 յուլիս 20, ի Լիւն, առ Թօփուզեան»:

158 «1865 դեկ. 6 ի Լիւն, յաւուրս վանահայրութեան Յակոբ եպիսկոպոսի Թօփուզեան»:

159 «Մէկ երկու տող հող լեցումս էին մէջ. ժամանակս չներեց, որ մաքրելով զայն ես գրէի: 67 յունվ. 16 ի Սուրբ Յակոբ Կապուկողայ»:

Բ «Կապուտկողայ Սուրբ Յակոբայ ուխտի գմբեթի նորոգութիւն».

Տէր աստուած Յիսուս Քրիստոս, բուին ՌՄԾԶ (1807):

Ով քառաթեւ նշան խաչին,
Եկեալ բազմեալ սուրբ սեղանին,
Ի նորոգումն սուրբ գումբէթին,
Անուն Յակոբ հայրապետին,
Լեր բարեխօս տէր Ստեփանին¹⁶⁰:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 372բ:

ԿԱՐԱՉՕՊԱՆ

«Խնունայ Կարաչօպան գիւղի եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւն».

Ի վերստին նորոգումն Սուրբ Յակոբ եկեղեցոյ բազում աշխատութեամբ եւ բազում դրամ տարով ի յօգուտ եւ ի փրկութիւն հոգոց մերոց, թվին ՌՅԺԲ (1863)¹⁶¹:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 385բ:

ԿԱՐԻՆ

Ա Խաչս բարեխօս է առ աստուած Յակոբ նահատակին եւ կողակցոյն՝ Ղաեաթին, եւ որդւոյն՝ Յովսէփին, տիրացու Ղեւոնդին, թվ. ՌՃԻԲ (1673)¹⁶²:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 565բ:

Բ «Կարնոյ Լուսաւորիչ վանուց Սուրբ Սարգիս եկեղեցոյ խաչաքարի մի վերայ հետեւեալ արձանագրութիւն կայր».

Նորոգեցաւ տաճարս Սուրբ Սարգիս զօրավարին ձեռամբ Խաչատուր վարդապետի Կոստանդնուպօլսեցոյ առաջնորդի սուրբ ուխտին, որ եւ տէրն ողորմեսցի, թվին հայոց ՌՃԿԹ (1720) եւ նորին փոխանորդ վարդապետի¹⁶³:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 364ա:

Գ «Սոյն վանուց աղբիւր շինողի արձանագրութիւն, որ կայ ի վերայ աղբեր».

Յիշատակ է բարեհամ աղբիւրս այս Կեղեցի Իսահակ վարդապետին եւ հոգետր ծնողին իւրոյ տեսուն Յովհաննէսի մեծի վարդապետին Կոստանդնուպօլսոյ պատրիարքին, թվ. ՌՃԶԳ (1734)¹⁶⁴:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 566ա:

160 «1867 յունվ. 16 ի Սուրբ Յակոբ»:

161 «1869 նոյ. 26 չորեքշաբթի ի Կարաչօպան»:

162 «Այս արձանագրութիւն Մայր եկեղեցոյ ներքնատան մէջն է այժմ եւ Յակոբ նահատակ Կարնոյ մէջ Կիւռճի դռն փոքր բաղանեաց քով քարկոծելով նահատակի»:

163 «1868 մայ. 15 ի Կարին, առ Արծնեան տէր Գրիգորիս»:

164 «Ինձ բուի թէ վերոգրեալ Իսահակ վարդապետ Սահակ Ա-հագին է, որ յետոյ ընտրեցաւ կաթողիկոս Ամենայն հայոց, բայց չժամանեց օծումն առնելոյ եւ Լուսաւորչի վանք մնալով յետ ընտրութեան վախճանեցաւ անդ, որոյ մարմին թաղուած կայ եկեղեցոյ որման հիւսիսային կողմն արտաքոյ կուտ, անթուական եւ անգիր մեծ մահարձանի մի ներքեւ, որ յամի տեսուն 1868 մայիս 14 Համբարձման երեքշաբթի օր հոն գնալով ընդ Երուանդեան տէր Գալուստ քահանային ընդ Նաթանեանց պ. Կարապետին, ընդ Պճկանց պ. Եղիազարին եւ ընդ Տեղաբիկեանց մահտեսի Սարգսին եւ այլոց ուխտ երթալով տեսինք անր»:

Դ «Նոյն վանուց պարսպի վերայ բացուած երկրորդ դրան յիշատակութիւն».

Այս պարիսպը Առաքել վարդապետին յիշատակն է. ՌՃԶԳ (1734) թի հայոց:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 566բ:

Ե «Առաքել վարդապետի տապանագրի պատճեն».

Այս է տապան եռամեծի,
Առաքել վարդապետի,
Սրբոյ ուխտիս դիտապետի,
Որոյ ձեռամբ նորակերտի
Բոլոր սագերս ընդ գմբեթի,
Եկեղեցիս պայծառ ծաղկի,
Նորաշէն պարիսպ կապի,
Սակս տեղոյս հարկատրի
Առաջնորդ... ապա առ տէր վերահանգչի,
.....մինն սորա վիմիս դնի,
Հոգին որ ետն վերահանգչի,
Թիւ այս թոռոյս թուականի,
Յարեթական մեր տօմարի,
Հազար հարիւր ութսուն, որ ընդ հնգօք ամօք
աւելորդ (ՌՃՁԵ-1736): Հանդիպո[ղ]քդ տուք ողորմի,
զի ողորմն ձեզ ստաց... վասնզի... այսպէս լինի,
ողորմ խնդի... յոյժ կարօս...
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 566բ:

Չ «Կարնոյ Միաբան Սուրբ Աստուածածնի մատուռի դրան վրայի արձանագրութիւն».

Կանգնեցաւ սուրբ խաչս բարեխօս առ աստուած վասն երանեալ հոգոյ տեսուն Յովհաննու Կոստանդնուպօլսոյ պատրիարքին, թվ. ՌՃԿ (1741), փետրվար ԺԳ [13]¹⁶⁵:

Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 390բ, 565բ:

Ը «Սոյն վանուց [Կարմիր] գերեզմանոցն Յովսէփ վարդապետի արձանագրութիւն».

Յովսէփայ վարդապետի
Եւ սուրբ ուխտիս դիտապետի
Մարմին սորա աստ ամփոփի,
Որք հանդիպիք, տուք զողորմի,
Տէր հատուցէ փոխանակի:
Թուին հայոց ՌՃՂԷ (1748):
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 566բ:

Ը «Կարնոյ Կարմիր վանուց եկեղ. դրան յաջակողման գիրն է».

Հազար երկու հարիւր տասնինն թոռոյս (1770) լեալ է,
Վասն մեղաց գետինն շարժեալ է,
Սուրբ վանքս բոլորովին փլեալ է,
Յակոբ արհին զպարիսպն շինեալ է:
Ոմն Մովսէս ցասմամբ տուգանեալ է,
Ոյր վասն զդռնն ի վեր շարեալ է,
Շատ ժամանակ ամայացեալ է,
Ղեւոնդ դեւն ի Պօլսոյ հրաման բերեալ է,
Չդռնն բացեալ շինումն արկեալ է,

165 «1868 մայ. 15 ի Կարին, առ Արծնեան տէր Գրիգոր»:

*Այլեւ զինչ ինչ տեղիս շինեալ է,
 Բայց տաճարս այնպէս մնացեալ է,
 Շարժէն երեսուն ամ անցեալ է¹⁶⁶։*
 Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 368ա:

Թ «Կարնոյ Կարմիր վանուց եկեղեցոյ առազանի արձանագրութեան պատճեն».

Յիշատակ է սուրբ առազանու Տէփանի կին մահտեսի Ղուտրաբին, որդոյն՝ Մելքոնին, մահտեսի Գասրաբին եւ մահտեսի Պաղտասարին, թվին ՌՄԽԹ (1800):

«Կարձեալ անր».

Տէր աստուած Յիսուս Զրիստոս: Յիշատակ է սուրբ խաչս Սէլվիին, Յարութիւնին, որդոյն Գալուստին¹⁶⁷։

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 391ա, 566ա:

Ժ «Նոյն վանուց եկեղեցոյ հիսախ. որմի վերայի մի խաչի յիշատակութենէն», նաև «Կարմիր վանուց ի հիսախ յորմն մի խաչէ».

Յիշատակ է սուրբ խաչս Կարմիր վանքին սպասաւոր Սկրտիչ վարդապետին, հաւատարիմ եւ բազմաշխատ Վանեցի հաճի Գրիգորին եւ ծնողացն Սարուխանին եւ կողակցոյն՝ Սրմային, եւ եղբորն՝ Սարգսին, Սարտիրոսին, թվին ՌՄԽԹ (1800)¹⁶⁸։

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 566ա: Նաև ձեռ. 6273, էջ 371ա:

ԺԱ «Նոյն վանուց եկեղեցոյ սեան վերայ գրուած խաչաքարի մի յիշատակութիւն», նաև «Նոյն վանից մի սեան վերայի խաչաքարէն».

Յիշատակ է տուրկէր Ստեփանին: Եւ սիւնս ի հիմանէ շինեցաւ եւ եղի ի սուրբ տանս եւ իւր եղբոր Աբրահամին եւ ծնողացն Յօհաննէսին, թվին ՌՄԽԹ (1800)¹⁶⁹։

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 566ա: Նաև ձեռ. 6273, էջ 371ա:

ԺԲ «Նոյն վանուց եկեղեցոյ դրան ձախ կողմն մարմարիոն խաչարձանէ մը հանուած», նաև «Ժ մի մարմարիոնէ Կարնոյ Կարմիր վանուց նորոգութեան յիշ».

*Մայրն աստուած արդ գթած ես,
 Հրաման շինման իսկ յաջողես,
 Տրօք ազգիս հայոց օգնես,
 Սուրբ տաճարս շքեղ շինես,
 Գմբէթայարկ կարմրազարդես,
 Աւուր օծման լուսափայլես:
 Դէտն Սկրտիչ պետն աշխատեալ,
 Երկու բարեսէրք թիկունս հասեալ,
 Մոմճի Կարապետն արիացեալ,
 Դասապ Յակոբի ջանասիրեալ,*

166 «1868 մայ. 15 ի Կարին, առ տէր Գրիգոր Արծնեան»: [Նույնը նաև էջ 566ա-ում, ուր վերջին քառատողի փոխարեն ունենք՝ «Չորումն բացեալ շինումն արկեալ է,

Այլեւ զինչ ինչ ամ անցեալ է,

Հին շինուածքին թիւն Ռ-ճԳԹ (1750) է»]:

167 «1868 մայ. 15 ի Կարին, առ տէր Գրիգոր Արծնեան»:

168 «68 ի Կարին»:

169 «Անդ ի Կարին»:

*Այլեւ գրումն յիշատակ իրեանց սուացեալ,
 Բոլոր խարճիւրն որ պատշաճեալ:
 Թուին ՌՄԽԹ (1800), հոկ. ԻԷ (27)¹⁷⁰։*
 Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 566ա-բ: Նաև ձեռ. 6273, էջ 371ա:

ԺԳ «Կարմիր վանուց եկեղեցոյ արտաքոյ յարեւելեան կուսէն պատին վերայ սա եւս կայր».

Յիշատակ է զայսոսիկ եօթն քարերս էքմէքճի պաշի Ինճէ տիրացու Յակոբին, կողակցոյն Ինթի-զարին, դստեր Սէլվին, թվին ՌՄՀԶ (1827)¹⁷¹։

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 376ա, 566բ:

ԺԴ «Կուրապցի Պետրոս արքեպիսկոպոսի խաչվէմ», նաև «Կուրապցի Պետրոս եպիսկոպոսի մահարձանի պատճեն».

*Վճիռ տէրունեան անդարձ հրամանի,
 Դնէ աստանօր գմարմին Կուրապցի
 Պետրոս սրբազան եպիսկոպոսի՝*

Չհոգին արդ գոչէ, որ դէտ քաջաշխատ Ամլորդ-տոյն մեծի,

Սուրբ Կարապետի Մշոյ գաւառի.

Նաեւ քաղաքիս իսկ այսմիկ Կարնոյ

Որոյ յիշատակ շիրիմս այս կանգնի:

Յամի տեառն 1844 նոյ. 24¹⁷²։

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 346ա: Նաև ձեռ. 6273, էջ 565բ:

ԺԵ «Կարնոյ Գրիգորիս արքեպիսկոպոսի մահարձանի պատճեն».

Բիւզանդացի Չօրաբարէլեան տեառն Գրիգորիոս սրբազան արքեպիսկոպոսի Կարնոյ մահարձան յիշատակի: Մինչ հայրենիդ Բիւզանդին ետ գրեզ յաշխարհ քրիստոսանուէր բարձար բարձու, հայոց Կարնոյ հօտին փոքրիկ մեծ այցելու, երկուտասան ամաց հովի կացեր ի Հայս արքնահամբաւ տաղանդ քո բարձր բնատուր ծննդեան երարձ գանունդ յԱստեղոց գաւառ, նախանձաբեկ ժանդ ժամանակն փութաց դնել ընդ ոտիք մահուն, այլ ոչ զհոգիդ, որ սաւառնեալ զայգիս ճեմէ յանմահից դաշտ, յուղոյ կենաց մտից կուսէ ի դաշտ ոգոյ առ սափորովդ եկեալ փորէ ի ցուրտ վիմիդ ցօղով աչաց զիւր վերջին երգ, որ ծնաւ ի քէն ի մանկութիւն // քալորոգութեան եկեղեցոյ. աստուծոյ դառն է յոյժ Մամբրեայ Մամզոն ողբալ զջահոյ շիջելափառ. ոհ, ջահ մատաղ, արեւ անգին, արթուն անուամբ անմահ հոգով Գրիգորիէ անդրի փառաց քեզ յերկինս Քրիստոս գուարթունք հսկեսցեն զաճիւնովդ նորոգելի եւ ոչ շինուածք գոր կանգնեաց ձեռն մահկանացու: Ննջեաց ի հասակի 51 ամաց, յամի տեառն 1859, յունվար 11¹⁷³։

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 3բ-4ա, 565բ:

170 «1868 մայիս 15 ի Կարին, առ տէր Գրիգոր Արծնեան»:

171 «1868 մայիս 15 ի Կարին, առ Արծնեան տէր Գրիգոր»:

172 «1868 մայ. 13 ի Կարին քաղաքի եկեղ.»; «Այս գերեզման Միաբան Սուրբ Աստուածածնայ եկեղեցոյ դրան առաջն է, մեծ եկեղեցոյ արտաքոյ կուսէն հարաւային կողմանէ»:

173 «1868 մայիս 15 ի Կարին». [էջ 565բ-ում՝ «Այս գերեզման պարտիզին մէջ հիսախային կողմն է»]:

ՎԱՐՄՐԱՒՈՐԻ ՎԱՆՔ

Ա «Կարմրոր Սուրբ Աստուածածնի վանուց նորոգութեան արձանագրութիւն է».

Ի թուարբերութեան հայկազեան սեռիս հայոց տումարի ՌԿԴ (1615), առաջնորդ սուրբ ուխտին Վարազայ Մարտիրոս վարդապետ եւ սուրբ ուխտիս Չաքարէն շինեցաւ ձեռամբ խաւջայ Միրաքին յիշատակ իւր հոգւոյն եւ իւր ծնողաց, հարն՝ Սկրտչին, Մաւաֆր¹⁷⁴ մէլիքին եւ եղբարն՝ զԽաչատուրն, Չիրաքն, Աստուածատուրն եւ որդոցն՝ Միրումին, Ամիրզադին, տէր Ստեփաննոսին, խոջայ Ալլէտի¹⁷⁵ ...¹⁷⁶:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 389բ-390ա:

Բ «Կարմրոր վանուց նորոգութիւն».

Յիշեցէք ի Քրիստոս եւ աստուած որդրմի ասացէք սուրբ Էջմիածնայ նուիրակ եւ սուրբ ուխտիս առաջնորդ Պաղտասար վարդապետին, որ վերստին նորոգեաց զսուրբ ուխտս եւ զԿաթողիկէ սուրբ տաճարս, թվ. ՌՄԻԸ (1779)¹⁷⁷:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 368բ:

Գ «Կարմրորայ տաճարի դրան վերայի արձանագրութիւն».

Ի թուականիս հայկազեանին ՌՄԻԸ (1779) ամին, Նորոգեցաւ տաճար հին Կարմրոր Աստուածածնին, Կաթողիկէն եկեղեցին, Ձեռամբ մեծի Պաղտասարին, Նուիրակ սուրբ Էջմիածնին, Եւ առաջնորդ Վան քաղաքին, Յիշատակ իւրն եւ ծնողին, Եւ փրկութիւն հոգոց նոցին, Մեղաց մուրհակն ջնջեցսցին, Որք հանդիպիք, տուք զորդրմին¹⁷⁸:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 391ա:

Դ «Կարմրորայ վանուց պարսպի նորոգութիւն».

Նոր նորոգեցաւ պարսպ սուրբ վանուցս Կարմրոր կոչեցեալ Սուրբ Աստուածածնին կամօք եւ ձեռնտուութեամբ իշխանապետ Կարաւէֆերեան Յակոբ աղային, ՌՄԿԶ (1817) թուին¹⁷⁹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 373բ:

ԿԱՖԱ

«Կաֆայի Սուրբ Խաչի տաճարի արձ.».
Փառաց տաճարս աստուածային,
Յերկրին դրախտ կենաց փայտին,
Որ է պատկեր յերկնից վերին,
Եւ [եռանձնեանըն]¹⁸⁰ կայանին,

174 [Գուցէ Սաֆա՞ր]:

175 «Գրեր խառնուած էին, ուստի քանի մի անուն մնաց առանց վերձանութեան»:

176 «1866 յունիս 21 երեքշաբթի ի Կարմրոր»:

177 «69 հոկ. 8 ի Կարմրոր»:

178 «1866 յունիս 21 ի Վան, ի Կարմրոր»:

179 «1869 հոկ. 8 ի Վան, ի Կարմրոր սուրբ ուխտ»:

180 [Հավելումը ըստ տպագրի]:

Ի ծննդեմէ մարմնով փրկչին,
Երեք հարիւր եւ հազարին,
Ուր եւ իսուն¹⁸¹ ըսկսեալ ամին (19),
Կանգնեալ անուն Սուրբ Նշանին,
Սատարութեամբ իւր ծառային,
Օվանէսի¹⁸² կրօնատրին,
Եւ հարազատ եղբարցն նորին,
Եւ ըստ հոգոյ¹⁸³ որդոյ բնաւին¹⁸⁴:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 388բ:

ԿԵՆՂԱՆԱՆՅ

Ա Կենդանաց գիւղի եկեղեցի, «Մուշեղ վարդապետի մահարձանի պատճեն».

ՆԺԶ (967) թուականիս կանգնեցաւ սուրբ խաչս¹⁸⁵ յիշատակ Մուշեղայ¹⁸⁶ հայոց վարդապետի¹⁸⁷:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6332, էջ 3բ: Նաև ձեռ. 6273, էջ 325ա:

Բ «Նոյն».

ՌՄԾԹ (1810). Խաչս է Օհաննէս, Բարսեղ, Արքին, Փանոս, Աղահան, Մարանոս, Էպրեսիմա: Ծինեցաւ Կենդանաց Սուրբ Աստուածածին ձեռամբ Կարասավարենց Յակոբ աղին վաքիլ Թուրիկանց Փանոսին:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6332, էջ 3բ:

ԿԷԼԻՊՈԼ

«Կելիպօլոյ Սուրբ Թեոդորոս եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւն».

Շնորհիւ տեսուն աստուծոյ կառուցաւ սուրբ եկեղեցիս յանուն Սրբոյն Թեոդորոսի քաջայայտ զինատրին Քրիստոսի ի պատրիարքութեան տեսուն Կարապետ արհի եպիսկոպոսի եւ յառաջնորդութեան քաղաքիս տեսուն Առաքել արքեպիսկոպոսի, արդեամբք եւ ծախիւք առհասարակ մերազնէիցն բնակչաց տեղոյս այսմիկ բարեպաշտ եւ աստուածասէր ժողովրդեան հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս ի տէրն մեր: Յամի տեսուն 1828, սեպ. 13¹⁸⁸:
Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 376բ, 403բ:

181 [Հմմտ. Գրիմի Սուրբ Խաչի վանք, աշխատասիրաց Խորեն ծայր. վարդապետ Ստեփանէ, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 4-5: Տպագրում՝ յերեսում]:

182 [Տպ.՝ Յովհաննիսի]:

183 [Տպ. ոգոյ որդոց]:

184 «Մոյն արձանագրութիւն Գաղատիոյ վանուց միաբան եւ Ուլնեցի Կարապետ կաթողիկոսի աշակերտ Պաղտասար վարդապետ յամի 1719 եւ ի թուին հայոց ՌճԿԸ մինչ էր ի Կաֆայ ընդօրինակեալ էր ի մէջ Բարդուղիմէոսի Արարածոց մեկնչի յիշատակարանին»:

185 [6332-ում՝ սեղանս]:

186 «Մոյն Մուշեղ երեւելի վարդապետի շիրմն է ի Կենդանաց գիւղի եկեղեցոյ կից մատուռի մէջ եւ բազում ուխտատուք յարգանքոք այցելութիւն տան նոյն գերեզմանին» (6273, էջ 325ա):

187 «1887 թ. յուլիս 20 ի Կենդանաց»:

188 «1870 օգոս. 21 ի Թէքիրտաղ, ընդօրինակելով ի գրոց Վասպուրականցի Պաղտասար ուրարակիի, որ անուանեալ կոչի Ողբերգութիւն Հայաստանի»: [Էջ 403բ-ում՝ «1870 օգոս. 21 ի Թէքիրտաղ, Սուրբ Թազատը եկողոցոյ յառաջնորդարան, Թաղէոս եպիսկոպոսի ձեռագիրներէն օրինակեցի»]: Պարզ է, որ թելուզ նույն օրը, սակայն տարբեր աղբյուրներից է վերցրել Փիրղալեմյանը սույն արձանագրութիւնը]:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ա «Յակոբ նահատակի մահարձանի պատճեն».

Այս նահատակ յաղթող վկայ,
Տեսնոն աստուծոյ ազնիւ ծառայ,
Առեալ ի ուս իւր գվսահան,
Եւ զսուներ հոգւոյն զբան,
Եկաց ընդդէմ նա խազարին,
Աներեւոյթ բռնատրին,
Տիօք մանուկ էր եւ առոյգ,
Որ եթող զայս կեանս անստոյգ:
Ոչ երկուցեալ ի սուսերաց,
Եւ ահարկու դիմաց դահճաց,
Եհեղ զարիւնն վկայական,
Յակոբ յաղթօղս այս քաջաջան¹⁸⁹,
Եղէւ սրբոց մարտիրոսաց,
Հաղորդ փառաց եւ պսակաց,
Էր թուականս մեր հայկական
Հազար հարիւր եւ չորս քսան,
Ընդ որս եւ չորս յարագուգեալ (17),
Յորում վկայս եղէւ ցուցեալ,
Հեղմամբ արեան սորս յերկրի,
Մեզ բարեխօս առ տէր լիցի,
Որպեսզի յոյսն ամենայնի
Մեզ համօրէն ողորմեսցի¹⁹⁰:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 501ա:

Բ «Մերաստացի Յովհաննէս վկայի մահարձանի պատճեն».

Այս նահատակ յաղթող վկայս,
Տեսնոն աստուծոյ նոր ընծայս,
Բուսեալ ծաղիկ զարմանալի,
Անշող ձմռան ժամանակի:
Կացեալ ատեան դատատրին,
Տայր անվեհեր պատասխանին,
Թէ Քրիստոսի եմ ծառայ,
Եւ ոչ թողում զօրէն նորս:
Էր սա երկրէն Մերաստիոյ,
Մանուկ կտրիչ հասեալ տիոյ,
Հօրն անունն Անանիայ,
Իւրն Յօհաննէս Փրկչին վկայ:
Թվին հայոց ՌՃՂԱ (1742), մարտի Ը (8)¹⁹¹:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 507բ:

Գ «Մանուէլ վարդապետի մահարձանի պատճեն».

Այս է տապան հանգստեան Պէկօղլուցի Թամարի թոռն հանգուցեալ Մանուէլ վարդապետին, որ էր պահապան Ուսքուտարու վանացն: Եւ որք հանդիպիք, ասացէք աստուած ողորմի, ամէն, թվին ՌՃՂԲ (1743)¹⁹²:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 507բ:

Դ «Կամրկապցի Յակոբ նահատակի խաչվիմի պատճեն».

Այս է տապան հանգստենի,
Յակոբ որբուկ նահատակի,
ՅԱկնայ գիւղէ Կամրկապցի,
Որդի Ոսկեանցն Սինասի:
Նաեւ պատճառ այսմ շիրմի,
Ողորմութիւն ամենայնի,
Որք հանդիպիք, տուք զողորմի,
Ննջեցելոցն համայնի:
Ի թուին ՌՄ (1751), յունիս ԺԶ (16)¹⁹³:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 509ա:

Ե «Մխլէյիմ օղլի Գէորգ աստուածաբան վարդապետի մահարձանի պատճեն».

Է գետեղեալ յայսմ շիրմի,
Գէորգէոս քաջ բաբունի,
Մխլէյիմ օղլու որ յորջորջի,
Էր քաղաքաւ Ըստամբօլցի,
Պարագլուխ վարդապետաց,
Ասել ըզսա հայկականաց,
Ունի տեղի արժան մտաց,
Ոչ ըստ մարմնոյ պատուոյ փառաց,
Որ ոչ ունէր ըստ արժանեաց,
Այլ ըստ ձրրի աշխատանաց,
Նման նախկին մեր թարգմանչաց,
Եկեղեցոյս Հայաստանեաց:
Էր սա գիտակ բազում լեզուաց,
Եւ զանազան մակացութեանց,
Հայոց, տաճկաց, նաեւ յունաց,
Ֆրանսերգաց եւ լատինաց,
Լեզուաց գրոց հանգամանաց,
Քաջ պարտրեալ ի մէջ մտաց,
Յայլեւորեալ ծեր հասակի,
Յեօթանասուն եօթնում ամի,
Որպէս հասեալ ցորեան բարի,
Ժողովեցաւ ի համբարի,
Հայոց մեծաց թուականի,
Հազար երկու հարիւր եօթնի (1758),
Նաեւ յունվար ամսոյ վեցի,
Յաւուր ծննդեան մերոյ փրկչի,
Որ ճշմարիտ գոլոյն սակի,
Էր ջատագով յամենայնի,
Չորիւք ամօք ի մէջ բանի,
Երեսուն ամ ի յաքտորի,
Վասն մերոյս սուրբ կրօնի,
Ի լատինաց ազգէն տանջի,
Արդ ով դիպողք այսմ շիրմի,
Մի դանդաղիք տալ զողորմի¹⁹⁴:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 509բ:

189 [Հնարավոր է կարդալ նաև քաջազան]:

190 «1885 փետ. 8 ի Կ. Պօլիս, ի Բերայի հայոց գերեզմանատուն»:

191 «1885 փետ. 8 ի Պօլիս, ի Բերայ»:

192 «1885 փետ. 8 ի Կ. Պօլիս, ի գերեզմանոցն Բերայի»:

193 «1885 փետր. 8 ի Բերայ»:

194 «1885 փետ. 8 ի Կ. Պօլիս, ի գերեզմանատուն Բերայի»:

Չ «Յովհաննես Գառնիկի մահաբանի պատճեն».
 Շիրինս այս է Սամաթիայի Պօտոս օղի Ստեփանի որդի Գառնիկի տիրացու Յօհաննէսին, թվ. ՌՄԼ (1781)¹⁹⁵:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 511ա:

Է «Վանեցի Ղարաաֆէրեան Յարութիւն աղայի խաչվեմն».
 Յատուկ ըստացող այս մեծ շիրմատան,
 Եղև պապ սորին, որ կայ յայս տապան,
 Բետոր այրըն այն գրով արքունեան,
 Եթող յիշատակ սեռիս հայկազեան:
 Մինչ որ ընթեռնուք զայս յատուկ տապան,
 Ի ծոց իւր ունող զՅարութիւն աղայն,
 Այսինքն Վանցի Ղարաաֆէրեան,
 Յէւն հայցեցէք ողորմիս համայն:
 Թվական հայոց ՌՄԾԷ (1808), փետրվարի 7¹⁹⁶:
 Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 512ա:

Ը «Ղուկաս վարդապետի տապանագրոյ պատճեն».
 Այս է տապան ծերունի Ղուկաս վարդապետի,
 որ Սպերու Սուրբ Յօհաննու վանուց առաջնորդ
 եղև: Որք հանդիպիք, մի Հայր մերի յիշեցէք,
 ՌՄԾԷ (1808)¹⁹⁷:
 Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 512բ:

Թ «Յովհաննէս պատրիարգի խաչվեմն».
 Պօլսեցի քաջ դէտ Յօհաննէս արհին,
 Չաքարիա վեհին հոգեծին որդին,
 Ներբողի յիշել եթէ զանց առնին,
 Բողոքին քարինք ըստ տեառն բանին.
 Մին սման սին հազիւ մեզ յայտնին,
 Քաջ աստուածաբան վսեմ յատենին,
 Համեղ եւ անլուր բանից քարոզին,
 Չեղև մեզ յազիւ քառասուն տարին, ||
 Գթած ընչատեաց հայր տէր անընման,
 Կալով նպատակ վշտաց զանազան,
 Չերեքտասան ամ պատրիարգութեան,
 Բայց կրկին թեօք ճոխ իմաստութեան,
 Բարձրացոյց զազգ մեր յաչս տէրութեան,
 Ուստի ետ արքայն խիլայ յարգութեան,
 ...¹⁹⁸,
 Որ չէ աստ երբէք եղեալ յախտեան,
 Բաց յանթիւ բարեաց ի Պօլիս միայն,
 Եօթն եկեղեցիք նոր հաստատեցան,
 Եւ յետ հրաժարման պատրիարգութեան,
 Չչորս ամ ապրեալ էառ սուրբ վախճան,
 Ի թիւ վաթսունի կենացն լրման,
 Սլացաւ ի մենջ ի սուրբ հարց կայեան:
 Յամի տեառն 1817 յուլիսի 27¹⁹⁹:
 Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 3բ-336ա:

195 «1885 փետր. 8 ի Կ. Պօլիս, ի Բերայի գերեզմանոց»:
 196 «Ընդօրինակեցի 1885 փետ. 8 ի Կ. Պօլիս, ի Բերայ»:
 197 «1885 փետր. 8 ի Կ. Պօլիս, ի Բերայ»:
 198 [Մի տողի տեղ բաց է թողնված]:
 199 «1871 ապրիլ 24 շաբաթ, ի Պօլիս, յԻւսքիտարի գերեզմանոց»:

Ժ «Թրիսուպօլսոյ Սուրբ Խաչ եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւն».

Ողորմութեամբն աստուծոյ չքնաղ կառուցաւ եկեղեցիս Սուրբ Խաչի ի պատրիարգութեան տեառն Կարապետի արքեպիսկոպոսի, յարդեանց ազգիս հայոց եւ ջանացողութեամբ աստուածաւեր իշխանապետաց, որոց ամենեցուն ընդ մասնաւոր հոգաբարձուի շինութեանս տացէ տէր զուարճանալ յերկնաւոր եկեղեցին ընդ անմահից հրեշտակաց: Յամի տեառն 1830, սեպ. 27²⁰⁰:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 377ա:

ԺԱ «Նոյն եկեղեցոյ արձանագրութեան պատճեն».
 Ի յիշատակ հոգւոց Սարգիս եւ Կարապետ ամիրայիցն Փիշմիշեանց. վայելօղիքդ յիշեսցիք զսոսա ի տէր, 1831²⁰¹:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 377ա:

ԺԲ «Ատապազարցի մահտեսի Թորոսի մահաբան».
 Այս է տապան հանգստեան Ատապազարցի Մաֆեց Սեխրոսի որդի մահտեսի Թորոսին, որ հանգեաւ թվին ՌՄՉ (1831), դեկտեմբերի ԻԹ (29): Որք հանդիպիք, սուրբ զողորմին:
 Հիւր. ՄՄ, ձեռ. 9027, էջ բ:

ԺԳ «Թօփ Գափոյ Սուրբ Նիկողայոս հայրապետի եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւն».

Ողորմութեամբն աստուծոյ կառուցաւ սուրբ տաճարս արդեամբք ազգիս հայոց ի հայրապետութեան Տ. Տ. Եփրեմայ սրբազան կաթողիկոսի եւ ի պատրիարգութեան Կոստանդնուպօլսոյ տեառն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի, յամի տեառն 1832 յունիսի 4 ի փառս աստուծոյ. անձնանուէր պատճառ շինութեանն նուիրամատոյց եւ ձրիաշխատ ազգայինքս մնալով յուսայից վարձատրութեամբ ի տեառնէ²⁰²:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 377ա:

ԺԴ «Յարութիւն ամիրա Տիգրանի տապանագիրը Կ. Պօլսի Գոնգաբու թաղամասի Սուրբ Աստուածածին եկեղեցուն կից Սուրբ Յարութեան մատուռում».

Ահա մեծագործ այր անզուգական,
 Պարոն Պօղոսի որդի պատուական,
 Իշխան վեհապանձ Յարութիւն Պէզճեան,
 Ազգօգուտ գործովք անմահ ի մահուան,
 Գիտաց զաստի կեանս ստուէր անցական,
 Մեծութիւն եւ փառք երազ գնդական,
 Իբրեւ ցանկացող կենացն անվախճան,
 Մթերեաց իւր զանձ յերկնային կայան²⁰³:
 Ունէր սա լիով զգիրս ամենայն,
 Որ ինչ է վայել ազգասիրութեան²⁰⁴,
 Չեռն իւր առատ լեզու էր խոստման,
 Օգուտն ազգին շահ օգտի ինքեան,

200 «1870 մայիս 22 ուրբաթ ի Կ. Պօլիս, Յիւսքիտար»:
 201 «Ի նոյն օր անդ»:
 202 «1885 ապր. 13 շաբաթ ի Թօփ Գափու եկեղ.»:
 203 [Տպ. խորան]:
 204 [Տպ. վերջին երկու տողը չունի]:

Որ խոկմամբ մահու որպես խոհական,
Շինեաց գայս շիրինն ի կենդանութեան,
Որ ամփոփեցաւ արդեամբք բազմազան,
Ի վաթսուներեք ամին իւր լրման,
Սա տենչմամբ վերին յարկիդ բնակութեան,
Բնակեաց ի գաւիթ տանս սրբութեան,
Բարերար Քրիստոս հանգո հաւիտեան,
Հոգի ծառայիդ յերկնից քո խորան:
Յամի տեառն 1834 յունուար 13²⁰⁵:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 343ա: Հմմտ. **Քեռսեան**, Յուշամատենան Սուրբ Փրկչի, էջ XV:

ԺԵ «Պալատու Սուրբ Հրեշտակապետ եկեղ. նորոգութիւն».
Ողորմութեամբն աստուծոյ կառուցաւ սուրբ
տաճարս արդեամբ ազգիս հայոց ի պատրիարզութեան տեառն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի յամի տեառն 18 սեպտեմբեր 7²⁰⁶:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 514ա:

ԺԶ «Իսկիստարու Սուրբ Կարապետ եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւն».
Տաճար աստուծոյ յանուն Սրբոյն Կարապետի նորոգեալ ի պատրիարզութեան տեառն Աստուածատրոյ սրբազան արքեպիսկոպոսի, 1844²⁰⁷:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 381ա:

ԺԷ «Ալթունեան Պետրոս արքեպիսկոպոսի խաչվեմ».
Փող ազտողական պատգամաց վերին,
Քարոզիչ բանից երկնից արքային,
Սա գիտակ լեզուաց եւ ուսմանց խորին,
Եւ անխոնջ քարգման ըստ բաւականին:
ՅԱլթունեան տոհմէ արհի տէր Պետրոս,
Առաքելագործ արքեպիսկոպոս,
Մահառիք ախտիւ աստի կենցաղոյ,
Չեւ վաթսուն ամեայ եղաւ ընդ հողոյս:
Մնայ գալստեանդ Փրկչիդ կենարար,
Առնուլ զպսակ խնամօղբ անճառ,
Արդ հովիւդ քաջ դատատր արդար,
Տուր սմա հանգչիլ յերկնից քո տաճար:
Յամի տեառն 1844, սեպ. 26²⁰⁸:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 346ա:

ԺԸ «Աստուածատուր պատրիարզի մահարձանի պատճեն».
Անցաւորք, աստի դարձուք յայս տապան,
Հայիլ մի անգամ յարհիս սրբազան,
Այն որ անդստին գործոց բարութեան,
Վեհ հանդիսացաւ չքնաղ տեսարան:
Պատրիարզ Պօլսոյս Չաքարիա արհույն
Չեռնասուն ընտիր տէրս վեհարուն,
Սոյն եւ ազգասէր ըստ իւրոյ նախնոյն,
Ի հոգ իւր հօտին զգաստ եւ արթուն:|
Սա ի յազգային անդ խռովութեան,

Եղեւ պատրիարզ ի խնամոց տեառն,
Յորդորմամբ սորին շինեալ անմնան,
Սուրբ Կարապետին տաճար հրաշագան:
Անդ հանգոյց զնորա նշխար պատուական,
Փայլեալ հրաշիւք յազգրս ամենայն,
Ինքն վճարեալ ցաւալից զիւր կեան,
Վերապացաւ յանմահից խորան:
Յամի տեառն մերոյ Յիսուսի 1846 փոխեալ յունվար 2, ամաց 75²⁰⁹:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 347ա-բ:

ԺԹ «Կարապետ պատրիարզի մահարձանի պատճեն».

Տապան հանգստեան սրբոյ աթոռոյն Երուսաղէմի միաբան Կոստանդնուպոլսեցի Կարապետ արքեպիսկոպոսի, որ ութ ամեայ ժամանակաւ պատրիարզ կարգեցաւ Կոստանդնուպոլսոյ, յորմէ կամովին հրաժարեալ առանձնացաւ ի տան իւրում ի Խրիստոպոլիս, ընդ հովանեաւ Սուրբ Խաչի չքնաղ եկեղեցոյ յամս տասն եւ ինն եւ ի հասակի վաթսուն եւ եօթն ամաց կենաց իւրոց հանգուցեալ եղաւ յայս գերեզմանի, զոր ինքն էր պատրաստեալ, ուր այժմ խնդրէ յընթերցողացդ ասել աստուած ողորմի, յամի տեառն 1850, յուլիս 31²¹⁰:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 349ա-բ:

Ի «Պերպերեան Յակոբ վարդապետի մահարձան».

Յակոբ ծ. վարդապետ Պերպերեան Կ. Պօլսեցի:
Կրօնատրեալ ի Սուրբ Էջմիածին եկն ի մայրաքաղաքս, քարոզեաց ամս քառասուն եւ հինգ եւ յատուրս պատրիարգաց Ստեփաննոսի եւ Յակոբայ վարեաց զպատրիարգական փոխանորդութիւն, որ եւ ի շրջան եկեղեցական կենացն յետ զբազումս աշակերտելոյ եւ ընծայելոյ սուրբ եկեղեցոյ ի պաշտօնէութիւն, հանգեաւ ի Քրիստոս ի հասակի եօթանասուն եւ հինգ ամաց, յամի տեառն 1853, ապրիլ 5²¹¹:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 0բ:

ԻԱ «Սամաթիոյ Սուրբ Յակոբ եկեղեցոյ շինութեան արձանագրութիւն».

Ողորմութեամբն աստուծոյ կառուցաւ սուրբ տաճարս այս յանուն գլխտեր սրբազան առաքելոյն Յակոբայ արդեամբ եւ աշխատութեամբ առաքիւնասէր ժողովրդոցս հայկազեան ի հայրապետութեան Տ. Տ. Մատթէոսի աստուածընտիր կաթողիկոսի Ամենայն հայոց եւ ի պատրիարզութեան Կոստանդնուպոլսոյ տ. Յակոբայ ազգասէր սրբազան արքեպիսկոպոսի, 1858, յուլ. 13²¹²:
Հիւք. ՄՄ, ձեռ. 6273, էջ 384ա-բ:

205 «1864 փետրվար 24 ի Կ. Պօլիս, ի մայր եկեղեցին»:

206 «Ի 1868 փետ. 19 ի Կ. Պօլիս, ի Պալատ»:

207 «1868 յայլ. 12 հինգշաբթի յԻւսքիստար»:

208 «1864 սեպ. 16 ի Կ. Պօլիս, ի Բերայի գերեզմանատուն»:

209 «1871 յուլ. 9 ուրբաք ի Կ. Պօլիս, ի գերեզմանատուն Խրիստոպոլսոյ»:

210 «1871 յայլիլ 24 շաբաք ի գերեզմանատուն Խրիստոպոլսոյ»:

211 «64 սեպ. 16 ի Բերայ»:

212 «1868 յունվ. 5 ի Կ. Պօլիս, ի Սամաթիայ, ի Սուրբ Յակոբ եկեղեցին, մինչ քարոզութեան պաշտօնիւ կայի անդ»:

ԻԲ «Կ. Պօլսոյ Զաղկեդոն գեղջ եկեղեցոյ նորոգութեան արձանագրութիւն».

Ողորմութեամբն աստուծոյ ի հիմանէս կառուցաւ Սուրբ Թագաւորի տաճարս արդեամբ մեծապատիւ մահտեսի Կարապետ աղայի Մուրատեան Կարնեցոյ ի յաւերժական յիշատակ ազնուական իւրոյ ազգատոհմին, ի հայրապետութեան տեսան տեսան Սատթեսի սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն հայոց եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ տեսան Յակոբայ սրբազան արքեպիսկոպոսի, յամի տեսան 1858, սեպ. 30²¹³:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 384բ:

ԻԳ «Պէշիկթաշու Սուրբ Աստուածածին եկեղեցոյ շինութեան արձանագրի պատճէն».

Սուրբ եկեղեցիս Աստուածամօր Կուսին շինեցաւ ի 1838 ամի ձեռամբ եւ արդեամբք պերճահամբաւ Կարապետ ամիրայի Պալեան արքունի ճարտարապետի, զորոյ տարածամ մահ 1866 ողբասցէ միշտ ազգս հայոց, որ վայելեաց զանչափ նորա երախտիս. եւ եկեղեցին մաղթեսցէ զանսպառելի կեանս երկնից²¹⁴:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 378բ:

ԿՈՒՌՈՒՊԱՇԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔ

Ա «Կոտուպաշայ Սուրբ Խաչի մարագի պատի վրա».

Թվ. ՌԽ (1591) ես՝ Սարգիս եպիսկոպոսս, շինեցի զպարիսպս...:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6332, էջ 3բ:

Բ «Կոտուպաշայ Սուրբ Խաչ տաճարի մոտի փոքրիկ եկեղեցին».

ՌԿԴ (1615) թվին շինեցաւ Սուրբ Խաչս, Սուրբ Գրիգորս, Սուրբ Մանդուխտ ձեռամբ մահդասի Խանունց Ղարիպջանին, յիշատակ իւր հոգւոյն. ես

իւր ծնողացն եւ իւր կողակից Խանադին, իւր որդւոյն՝ Թումին, Դիլանջին, եւ Թումին որդիքն՝ Մինասին, Սարիասին:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6332, էջ 3բ:

Գ «Կոտուպաշայ Սուրբ Խաչի դրան վրա».

Շնորհօքն եւ ողորմութեամբ եւ աջովն ամենակալին տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի շինեցաւ լուսազարդ եկեղեցիս, որ յիսուսական քառաթեւ խաչիւ որ ի թվին ՌՃԾԸ (1709), ի հայրապետութեան տեսան Աղէքսանդրի եւ մայրաքաղաքիս Ստեփաննոսի վարդապետին կանգնի վանքս հրամանաւ քաղաքիս տոլվաթատրացն:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6332, էջ 3բ:

Դ «Կոտուպաշայ Սուրբ Խաչի գմբէթ»²¹⁵.

Վերստին նորոգեցաւ Կաթողիկէս ձեռամբ Երեսանցի Աւետիս արքեպիսկոպոս վարդապետին, թվ. ՌՄԼԴ (1785)²¹⁶:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6332, էջ 3բ:

ԿՈՓԱՅ ՍՈՒՐԲ ԴԱՆԻԷԼ ՎԱՆՔ

«Կոփայ Սուրբ Դանիէլի վանուց Կաթողիկէի նորոգութիւն».

Վերստին նորոգեցի կաթողիկէ յանթից սաքերով ձեռամբ Ջիարաթցի Մկրտիչ վարդապետին եւ ճարտարապետութեամբ Բաղիշեցի Միմոնին եւ կարողութեամբ ժողովրդոց, թվ. ՌՄԾԴ (1805)²¹⁷:

Հիւր. ՄՄ, ձեռ. 6273, էջ 372ա:

Շարունակությունը հաջորդիկ

213 «1868 յայլո. 12 ի Գատի գիւղ»:
214 «1871 մայ. 2 ի Կ. Պօլիս, ի Պէշիկթաշ»:

215 [6273-ում՝ «Վանայ Կոտուպաշայ Սուրբ Խաչի գմբէթի նորոգութիւն»]:
216 [6273-ում՝ «87 մայ. 6 չորեքշաբթի ի Սուրբ Խաչի վանս»]:
217 «1865 օգոս. 9 ի վանս Կոփայ»:

Գրախոսություն և քննադատություն

ԳագոՄժոք Գ., Բանճլաձե Ե., մոնոֆիզիտ օրհուր Ժեղեղե ԵճճարտեղեղեՄ, I յեղեղ յարճեղեղ, տճեղեղե, 2009.

Վրաստանի ԳԱ պրոֆեսոր Զագա Ալեքսիճեի և պատմ. գիտ. դր.-պրոֆ. Դմիտրի Թումանիշվիլու խմբագրոյեանը, Գիորգի Գագոշիճեի և Նափիա Չանթլաճեի համահեղինակոյեանը 2009 թ. Թրիլի-սիում լոյս է տեսել «Վրաստանի մոնոֆիզիտ հուշարճանները» աշխատոյեանը (178 էջ) լրացվաճ 128 լոսանկարներով, ճարտարապետական կառույեղների բազմաթիվ չափագրոյեաններով, վիճագրերի գրչանկարներով¹:

Հարկ է նշել, որ այս աշխատոյեանն առաջին հայացքից պատկառելի տպավորոյեան է թողնում, քանի որ միանգամից աչքի է գարնում այն ողջունելի իրողոյեանը, որ գիորքը ստեղծվել է ոչ թե գրասենյակային տաքուկ մի անկյունում, այլ դաշտային տևակն և քրտնաթոր աշխատանքի արդյունքում, և որի հեղինակները չեն զլացել հաղթահարելու տասնյակ կիլոմետր կաճաններ՝ ուսումնասիրոյեան ենթակա հուշարճաններին հասնելու համար:

Սակայն աշխատոյեան քննոյեանը ցավալիորեն ակներև է դարճնում, որ հավաքաճ նյորքը գիտական անաչառ մոտեցման չի ենթարկվել, և ողջ ուսումնասիրոյեանը, ըստ էոյեան, կյանքի է կոչվել թերևս սոսկ կանխատեսելի քաղաքական խնդիրներին «լուճում» ապահովելու մտայնոյեանը:

Ըստ այդմ, աշխատոյեան հեղինակները պարզապես հետապնդել են ներկայիս Վրաստանի Հանրապետոյեան կազմում գտնվող Պատմական Հայաստանի Գուգարք նահանգի մի շարք գավառներում (Ճորոպիոր, Բողնոպիոր, Քվեշափոր, Կանգարք, Մանգլեացփոր) պահպանվաճ հայկական պաշտամունքային մեճաթիվ հուշարճանների՝ «գիտական ուսումնասիրոյեան» շղարշով քողարկվաճ յորացման խնդիրը, որին հասնելու համար էլ առաջնորդվել են գիտոյեան հետ չառնչվող կանխակալ մոտեցումներով, իրենց ինքնահնար տեսոյեան գարգացման տեսանկյունից ոչ շահեկան սկզբնաղբյորային և պատմագրական բազմաթիվ տվյալների ակնբախ անտեսումներով և ներկայացվաճ վիճագրերի վերճանոյեաններում առկա միտումնավոր և մտացաճին աղճատումներով, որոնց արդյունքում էլ ցավալիորեն մեճապես արճեղրկել են խնդրո առարկա աշխատոյեանը:

Ընդհանուր բնոյթի վերոնշյալ գնահատումից հետո այճմ ցանկանում ենք առավել հանգամանալից ներկայացնել հրատարակոյեան մեջ առկա էական խեղաթյորումները:

1 Շնորհակալոյեան ենք հայտնում համահեղինակ Գ. Գագոշիճեին աշխատոյեան մեկ օրինակը մեկ նվիրելու համար:

Եվ այսպես, աշխատոյեանը թեև կրում է «Վրաստանի մոնոֆիզիտ հուշարճանները» վերնագիրը, սակայն իրականում անդրադառնում է վարչական միայն 4 շրջանների՝ Բոլնիսի, Դմանիսի, Թեթրի-Ճղարոյի, Մարնեուլի տարաճքում պահպանվաճ հուշարճաններին, ընդ որում, ներառում է նաև Հայաստանի Հանրապետոյեան Լոռու մարզի սահմաններում գտնվող որոշ հուշարճաններ: Սա արդեն տարրական էթիկայի խախտում է, քանի որ Հայաստանի Հանրապետոյեանը Վրաստան չէ:

Թվարկվաճ վերոնշյալ վարչական 4 շրջանները, է դարում ստեղծվաճ հայտնի Աշխարհացոյցի համաճայն, համապատասխանում էին Մեճ Հայքի Գուգարք նահանգի վերոնշյալ գավառներին, որոնք արդեն ԺԲ դարի սկզբներին (Կյորիկյան թագավորոյեան անկումից հետո) հայտնվում են նախ սելջուկների, ապա վրացիների տիրապետոյեաններքո:

Հայտնի է, որ տարաճաշրջանը որոշ ընդմիջումներով վրացական տարբեր թագավորոյեանների կազմում մնում է մինչև Ռուսաստանի նվաճմանը վրաց պետականոյեան վերացումը (1801 թ.):

Ընդ որում, վրաց թագավորոյեան հարավային մասում գտնվող խնդրո առարկա գավառները Հայաստանից նվաճաճ լինելը փաստում են հենց վրացական աղբյորները: Այսպես, օրինակ, վրաց Գիորգի ԺԲ թագավորի որդի Իոանն Բագրատիոն արքայազնը (1772-1839 թթ.) իր «Կալմատբա» աշխատոյեան մեջ նշում է, որ Հայաստանի «...հողերը բաճանվաճ են Թյորքիայի, Պարսկաստանի և Վրաստանի միջև, բայց կան և ազատ վայրեր, որոնք, լեռների և նեղ ճանապարհների շնորհիվ անմատչելի լինելով թշնամիների համար, միանգամայն ազատ են և անառիկ: Արգրումը՝ Արմենիայի առաջին քաղաքը, այճմ Թյորքիային է պատկանում, Երևանը՝ Ասիական Արմենիայի աթոռ(անխտը)՝ Պարսից տիրապետոյեան ներքո է, թեև որպես Վրաստանի թագավորից գրավվաճ, վերջինիս հարկ է վճարում...»²:

Հատկանշական է, որ վրաց թագավորոյեանը միացվաճ հյուսիսհայաստանյան գավառները դարեր շարունակ հայտնի են եղել Սոմխիթ (վրացերեն՝ Հայաստան) անվաճք, ընդ որում, հատկապես ԺԷ-ԺԸ դարերի վրացական աղբյորները հստակ գանագանում էին վրացապատկան Հայաստանը՝ Սոմխիթը, օրինակ, հարևան խանական Հայաստանից՝ Իրևանու Սոմխիթից (Երևանի Հայաստան) և այն երբևէ չեն նույնացրել հարևան Քարթլիի հետ³:

2 Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյորները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 252:

3 Ըստ Մելիքիա Չխեիճեի «Թագավորների պատմոյեանը» աշխատոյեան՝ 1732 թ. «...լեզգիները մտան Սոմխիթ և մոտեցան Սամշվիլիին...» (Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյորները



Ռուսական կայսրության սահմաններում մինչև 1828 թ. ձևավորված մարզերը, որտեղ հստակ են նաև Սոմխիթի սահմանները

Վրաստանը Ռուսաստանին բռնակցելուց հետո ռուսական իշխանությունները ևս տարածաշրջանը շարունակում էին կոչել հնավանդ՝ Սոմխիթ անվամբ, որպես և ամբողջ ԺԹ դարում հայտնի էր Վրաստանի և Իմերեթի հայոց կոնսիստորիայի գործակալություններից մեկը:

Մինչդեռ խնդրո առարկա աշխատության հեղինակները, սկսած նախաբանից, հետևողականորեն խուսափել են հենց վրացական աղբյուրներում այնքան հաճախակի հանդիպող (և ըստ այդմ պատմական իրականությունն ակամա մատնող) Սոմխիթ տեղանվան գործածությունից և փոխարենը շրջանառել այս տարածաշրջանի համար հորինված և նրա հետ երբևէ չառնչվող, սոսկ նրա հյուսիսային հարևան երկրամասին վերաբերող Ներքին Քարթլի վարչաաշխարհագրական միավորի անվանումը:

Ի՞նչ է և սա, գիտնականի անգիտություն, բնավ ոչ: Պարզապես մենք գործ ունենք իրենց առջև ոչ թե գիտական, այլ քաղաքական խնդիրներ առաջադրած հեղինակային աշխատանքի հետ, ովքեր կարծում են, թե Հայաստանի մի հատվածը Վրաստան կոչելով (Սոմխիթը՝ Ներքին Քարթլի)⁴ կարելի է ապահովել այդ երկրամասի յուրացումը և վրացականացումը:

Նախաբանի արդեն երկրորդ պարբերության մեջ հեղինակներն առաջ են բերել պատմական իրողությունների հետ բնավ չառնչվող հետևյալ հորինվածքը. «Երբ հիշատակում ենք Վրաստանի բնակչության մոնոֆիզիտներին, սովորաբար հիշում ենք վրացիների հին հարևան հայերին, սակայն չպետք է մոռանանք նաև էթնիկ վրացիներին, որոնք, 17-18-րդ դարերում հայտնի իրավիճակներից ելնելով, փոխում էին իրենց հավատքը և ընդունում հայերի կրոնը...»⁵:

⁴ Հայաստանի և հայերի մասին», հ. Գ, Երևան, 1955, էջ 26): Նաև Պապունյան Օրբելիանի «Քարթլի անցքերը» (1759) աշխատության համաձայն՝ 1739 թ. «...Լեզգիներն ավերեցին Սոմխիթը և մոտեցան Գանահի բերդին...» (նշվ. աշխ., էջ 117): Նաև ըստ Գավիթ Բագրատիոն արքայազնի «Նոր պատմություն» (1814) աշխատության՝ 1789 թ. «...Լեզգիները վնասում էին Քարթլիին և Սոմխիթին...» (նշվ. աշխ., էջ 190, 201): Նաև ըստ Բագրատ Բագրատիոն արքայազնի (1769-1841 թթ.) «Նոր պատմում» (1824) աշխատության՝ 1801 թ. Ալեքսանդր I կայսրը «...հաստատեց Տփլիսին իբրև նահանգ և բաժանեց Քարթլին, Կախեթը և Սոմխիթը...» (նշվ. աշխ., էջ 229) և այլն:

⁴ Իրականում Ներքին Քարթլին Քարթլի ներքին հատվածն է, որը, ընդգրկելով Մցխեթի շրջակաները, հասնում է մինչև Տփլիսի մատույցները: Ինչպես և Քարթլին, ունի միջին (Գորիին հարակից շրջաններով) և վերին (Սուրամին հարակից հարակից հատվածներով մինչև Բորժոմի մատույցները) հատվածները: Այս կերպ, հաշվի առնելով Ջավախքի ջրբաժան լեռնաշղթայից մինչև Կուր գետ տարածված բնական միջավայրը, Սոմխիթն էլ իր հերթին կարելի է բաժանել ստանդարտ վերին և ներքին հատվածների, բայց որը երբևէ չի կարող շփոթվել կամ մոյսացվել հարևան մարզի հետ:

⁵ ԳագոՊոմոյ Գ., Ինտելեկտ Ե., նշվ. աշխ., էջ 5:

Անշուշտ, նման անհեթեթություններին սովորաբար պարզաբանումներ չեն տրվում, և մենք էլ թերևս ձեռնպահ կմնայինք այդ անելուց, եթե խնդրո առարկա աշխատությունը լույս ընծայված չլիներ Վրաստանի ԳԱ պրոֆ. Զ. Ալեքսիձեի և դր.-պրոֆ. Դ. Թումանիշվիլու խմբագրությամբ:

Եվ այսպես, գրքի հեղինակներն ու նրա խմբագիրները գտնում են, որ ԺԷ-ԺԸ դարերում Վրաստանի թագավորության կազմում գտնվող Սոմխիթ մարզի «Էթնիկ վրացի» բնակիչները «հայտնի իրավիճակներից ելնելով» ուրանում էին իրենց հավատքը և դառնում հայ առաքելական եկեղեցու հետևորդներ:

Այստեղ միանգամից մի քանի հարց է ծագում: Առաջին. այդ ինչպե՞ս էր հնարավոր, որ պետականություն (թագավոր, զորք, դիվանագիտական լծակներ և այլն) ունեցող մի երկրի բուն ազգաբնակչությունը զանգվածաբար դավանափոխ լինեն և ընդունեն պետականությունն արդեն վաղուց կորցրած և բիրտ կամ տանելի օտար տիրապետությունների ներքո ուժերի գերազույն լարումով մի կերպ իր գոյությունը պահպանող հարևան ազգի հավատքը, էլ առավել, երբ խոսքը վերաբերում է վրաց պետականության ներքո գտնվող Սոմխիթին:

Երկրորդ. ի՞նչը կարող էր գայթակղել Վրաստանի կազմում գտնվող Սոմխիթի ազգային փոքրամասնություն կազմող վրացագրի բնակչությանը⁶ հեռանալ ազգային պետականության սատարմամբ շատ ավելի ամուր հիմքերի վրա գտնվող հայրենի եկեղեցու դավանանքից և դառնալ նման հովանավորությունից զրկված և միայն համայնքային ուժերով կազմակերպվող և գոյությունը դժվարությամբ պահպանող հայ առաքելական եկեղեցու հետևորդ: Մի՞թե պարզ չէ, որ նման երևակայական շարժառիթ Քարթլիի թագավորության վրացագրի քաղաքացիների համար գոյություն ունենալ չէր կարող: Մինչդեռ, ճիշտ հակառակը, պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ վրաց պետությանը ծառայող ինչպես առանձին իշխաններ, այնպես էլ համայնքներ և մինչև իսկ ամբողջ գավառներ հավատափոխ են եղել և վերամկրտվել վրաց եկեղեցու ավագանում:

Էլ չենք խոսում շատ ավելի վաղ ժամանակներից ի վեր դավանաբանական տարբերությունների հիմքով վրաց հոգևորականության կողմից առ հայ առաքելական եկեղեցու հոգևորականությունն ու հավատացյալները ցուցաբերված անթաքույց ար-

համարհանքի մասին, որը փոխանցվում և սերմանվում էր նաև վրացագրի բնակչության ընդհանրապես: Այլ խոսքով, հայ առաքելական դավանանքն արհամարհող վրաց հոգևորականությունը նաև այս պատճառով չէր կարող հանդուրժել, որ սեփական հոտն իրենից հեռանար՝ իրենց կողմից մշտապես նվաստացված հայ առաքելական դավանանքն ընդունելու համար:

Եթե այս ամենին հավելենք նաև ԺԷ-ԺԸ դարերում առանձնապես Սոմխիթ մարզին բաժին հասած տակնուվրայությունները, երբ երկրամասի ողջ բնակչությունը գրեթե և այն էլ տևաբար հայտնվել էր փախստականի կարգավիճակում, երբ Շահ-Աբասի կազմակերպած բնիկների բռնագաղթից հետո երկրամաս էր թափանցել թյուրքական Բորչալու ցեղը, որին էլ ամբողջ ԺԸ դարի ընթացքում հաջորդել էին լեզգիների՝ մեկը մյուսին հետևած ավերիչ արշավանքները⁷, այլևս միանգամայն պարզ է դառնում, որ ճշյալ ժամանակաշրջանում Սոմխիթի

7 Ստորև ներկայացնում ենք միայն վրացական աղբյուրներից դուրս բերված դեպի Սոմխիթ լեզգիների կատարած ավերիչ արշավանքների ԺԸ դարի ժամանակագրությունը.

1732 թ. «Դեկտեմբերին ...լեզգիները ավերեցին Սոմխիթը...»

(Մելիքսեթ-Քեկ Լ., նշվ. աշխ., էջ 26):

1734 թ. «Լեզգիներն ավերում էին... Սոմխիթ-Սաբարաթիանուն...» (նշվ. աշխ., էջ 172):

1735 թ. «Թամազ-խանը հասավ Ղարսի երկիրը... Հուլիսի 10-ին լեզգիները ավերեցին Սոմխիթը...» (նշվ. աշխ., էջ 26):

1744 թ. «Լեզգիների զորքն եկավ և հարձակվեց Սոմխիթի վրա, մելիքից կալվածքը խլեցին...» (նշվ. աշխ., էջ 118):

1747-1748 թթ. «...Լեզգիները ...միշտ ավերում էին Սոմխիթը և նույնիսկ Դմանիսի ձորը և ավարը Սամշվիլոյն էին տանում» (նշվ. աշխ., էջ 125):

1747-1748 թթ. «Լեզգիների զորքը Սամշվիլոյն ելնում, ավերում է Սոմխիթի ձորը ու (ավար) բերում Սամշվիլոյն բերդը: Նեղվեց Սոմխիթի ձորը, (սոմխիթցիք) չկարացին ապրել իրենց տեղերում. Սոմխիթի մելիքն ևս տեղահան եղավ իր սուն ու տեղով և ճորտերով, նմանապես և Արդուբաշվիլիները, բովանդակ Սամահնի ձորը և Հաղբատի ձորը, իջան քաղաք (Տփղիս) և քաղաքից միասին գնացին Մուխրան, որ Մուխրանի տեղ Կոնստանտինեն նրանց տեղ տվեց ու իր հողում բնակեցրեց: Ամբողջ Սոմխիթում՝ Բոլնիսից և Սամծեվր(իս)ից գատ՝ ոչ մի տեղ այլևս շինություն չկար: Օրբելիանների երկիրը (հայրենիքը) ևս այնպես դատարկվեց, որ Դմանիսի և Փիթարեթից գատ ոչ մի տեղ այլևս շինություն չկար» (նշվ. աշխ., էջ 125-126):

1750-1752 թթ. «Սոմխիթում գտնվող լեզգիների զորքը մեծ ավարով գնաց...» (նշվ. աշխ., էջ 139):

1754 թ. «...լեզգիների զորքը մտավ Սոմխիթ... (լեզգիներն) անցան Սոմխիթով, հասան Հաղբատ, այնտեղից ելան Ղազախի լեռներն ու իջան Գյանջա...» (նշվ. աշխ., էջ 143):

1754 թ. «Սոմխիթ-Սաբարաթաշվիլոյն տեղերն ավերակ էին դարձած և բշնամի(ներ)ով լի...» (նշվ. աշխ., էջ 143):

1755 թ. «Լեզգիների զորքը Սոմխիթի և Սաբարաթաշվիլոյն անտառներն ու ժայռերը մտան ու այնտեղից սկսեցին ավերել քաղաք (Տփղիս) շրջակա գյուղերը...: Լեզգիները գիշերով ... սանդուխտներով բարձրացան Սոմխիթի Սամծեվրիսի բերդը...» (նշվ. աշխ., էջ 145):

1770 թ. «...Ավեր են Տաշիրը, Գուջարեթը և Սոմխիթը, որ մեծ և բազմա(մարդ) երկիր է(ր), ուր քառասունից մեկն է մնացել...» (նշվ. աշխ., էջ 157):

1789 թ. «Լեզգիները ... վնասում էին Քարթլին և Սոմխիթին...» (նշվ. աշխ., էջ 190):

6 Ըստ Վախտուշտի Բագրատիոն արքայազնի «Վրաստանի թագավորության նկարագրություն» («Վրաստանի աշխարհագրություն») աշխատության՝ «...Դեբեդից մինչ Բոլնիսի արևմուտքում (գտնվող) փոքր լեռը և Քջիի գետից մինչև Լավար-Լոքի սարը, այժմ կոչում են Սոմխիթ...: Այս տեղերի բնակիչները դավանությամբ հայեր են, փոքրամասնությունը Քարթլիի (եկեղեցու) դավանանքին (է հետևում)...» (Մելիքսեթ-Քեկ Լ., նշվ. աշխ., էջ 81):



Բոլնիս-Խաչեն գյուղի գերեզմանոցի Սբ. Կիրակի եկեղեցու և զանգակատան տեսքը հարավ-արևելքից

ազգային փոքրամասնություն կազմող «Էթնիկ վրացի»-ների՝ «հայտնի իրավիճակներից ելնելով» հայ առաքելական եկեղեցու ծոցում վերամկրտված լինելը մի անհիմն և պարզունակ հորինվածք է:

Նախաբանի երրորդ պարբերությունն արդեն բացահայտում է, որ պատմության կեղծարար հեղինակներն ու իրենց գաղափարակից պրոֆեսորներն ինչու էին խուսափել երկրամասի Մոմխիթ անվան շրջանառումից⁸ և բնակչությանն էլ համարել հայ առաքելական եկեղեցու հետևորդ դարձած «Էթնիկ վրացիներ»:

Պարզվում է, որ վերոնշյալ հորինվածքները գրքի հեղինակներին հարկավոր էին սոսկ հերթական կեղծիքը հիմնավորելու համար, այն է, թե իբր Հյուսիսարևելյան Գուգարքի գավառներում պահպանված հայկական հուշարձանները և մասնավորապես եկեղեցիները մեծագույն մասով կառուցել են ոչ թե հայերը, այլ հայադավան դարձած «Էթնիկ վրացիները», և որ վերջին հաշվով այդ եկեղեցիները ոչ թե հայ, այլ վրաց մշակույթի հուշարձաններ

են, ուստի և նշել են. «Վրաստանի մոնոֆիզիտ (միաբնակ) բնակչությունը և նրա մշակութային ժառանգությունը մույնացվում են հայերի մշակույթի հետ: Հայերի համար այս թեման կրում է առավել մուրբ բնույթ: Խնդրի ուսումնասիրությունը երկար պատմություն ունի, և այն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Գիտնականների շրջանում պատմամշակութային հուշարձանների հնության (ժամանակաշրջանի առումով) վերաբերյալ կողմնապահություն է արվում, նյութերը սխալ են մեկնաբանում, և այն հաճախ քաղաքական շահարկման առարկա է դառնում»⁹: Այս ամենից հեղինակները եզրահանգել են, որ «Վրաստաթղթային վկայություններ»¹⁰ չունեցող տարածաշրջանի բոլոր եկեղեցիներն այս կերպ հանիրավի հայկական են համարվել, ուստի իրենք իրենց պարտքն են համարել խնդրո առարկա աշխատությանը մեկ առ մեկ քննել «Ներքին Քարթլիի» հուշարձանները և վեր հանել պատմական իրողությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննվող աշխատության մեջ առանձին հուշարձաններին վերաբերող եզրահանգումները մույնպես պարունակում են աղադակող անճշտություններ (այդ

8 Տեղին է մտաբերել, որ մույնպիսի մտավախությանը համակրված բուրքերն էլ նվաճած Արևմտյան Հայաստանը, որը հենց օսմանյան բազմաթիվ քարտեզներում դարեր շարունակ մատնանշված է եղել «Էրմանիստան», այսօր արտաբերում են իրենց տեսանկյունից շատ ավելի «անվտանգ»՝ «Արևելյան Անատոլիա» անվամբ:

9 Գաբո՞ժից Գ., Քանճլա՞ծը Ե., նշվ. աշխ., էջ 5:
10 Նույն տեղում:

թվում Ժ-ԺԳ դարերի վիմագրերի վերծանման «անմեղ» սխալների արդյունքում դրանք ԺԷ-ԺԹ դարերին վերագրելը, բովանդակում կանխակալ և միտումնավոր, ըստ այդմ՝ հակագիտական եզրահանգումներ, ուստի ստիպված ենք ստորև հանգամանալից կերպով անդրադառնալ դրանց գոնե մի որոշ մասին¹¹:

Այսպես, Բոլնիսի շրջանի Բոլնիս-Խաչեն¹² գյուղի գերեզմանոցում է գտնվում Սբ. Կիրակի¹³ եկեղեցին (կից զանգակատնով), որի արևելյան ճակատից բացված լուսամտից վեր ագուցված սրբա-



տաշ քարին պահպանված շինարարական արձանագրությունը խնդրո առարկա գրքի հեղինակները հրատարակել են խիստ աղավաղումներով: Մասնավորապես սխալ են վերծանել թե՛ կառուցող ճարտարապետի անունը և թե՛ տարեթիվը. «Շինեցաւ ձեռամբրն Նասաղայ թ(ի)վ Ռ-Ճ (1651)»¹⁴:

11 Հարկ ենք համարում նշել, որ վիմագրերի վերծանությունների ճշգրտումները ստորև արվում են միայն խնդրո առարկա աշխատության մեջ ներկայացվածների մասով, քանի որ նպատակահարմար չենք գտնում սույն գրախոսության մեջ ներառել մեծաթիվ այն վիմագրերը, որոնք առկա են նշյալ տարածաշրջանի հնավայրերում:

12 Ինչպես երևում է, աշխատության հեղինակները տեղեկություն չունեն այն մասին, որ մելիք Աբովի գլխավորությամբ Արցախի Խաչեն զավառից հայերի մի մասի Բոլնիսում հաստատվելը տեղի է ունեցել միայն 1770-ական թթ. վերջերին, ուստի հարկ չկար կասկածելու 1700 թ. վավերագրի իսկությունն առ այն, թե «Փաստաբոլբոսն նշված է Բոլնիս, հավանաբար պետք է լիներ Բոլնիս Խաչեն» (նշվ. աշխ., էջ 27):

13 Ինչպես երևում է, աշխատության հեղինակներին հայտնի չէ եկեղեցու անունը (տե՛ս **Ջալալխանց Ս.**, Դամապարիտորություն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Տփղիս, 1858, էջ 87):

14 **ԳագոՄոյց Գ., Ինճեղաձե Ե.**, նշվ. աշխ., էջ 27:

Մինչդեռ իրականում արձանագրված է. *Շինեցաւ ձեռամբրն / Նասասարդայ*¹⁵, *թվ(ին) Ռ-ՃԳ (1655)*:

Նույն հնավայրից գրքում տեղ է գտել ևս մեկ արձանագրություն՝ տասպանագիր: Այստեղ էլ հեղինակները չեն կարողացել հատրաստել անձնանվան իսկությունը, որը ներկայացրել են իբրև՝ «ան Բահտորչանի, / թ(ի)վ Ռ-ՃԽ (1691)»¹⁶:



Մինչդեռ իրականում արձանագրված է. *(Այս է տասպ)ան Բահ(ա)տուր(ի), / ...անի, թվ(ին) Ռ-ՃԽ (1691)*:



Դարպաս գյուղի Սբ. Սարգիս եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից

15 Հարկ է նշել, որ ցարդ հայտնի են ծնունդով առիճցի կամ առնճեցի ճարտարապետ-քարահատ Նավասարդի ձեռքով կառուցված կամ նորոգված այլ հուշարձաններ ևս, այդ թվում՝ Հաղպատի Սբ. Նշան եկեղեցու հարավային կամարը 1656 թ. (Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Երևան, 2012, էջ 133), Տփղիսի ներկայիս Սբ. Նշան Սբ. Նիկողայոսի եկեղեցու տեղում 1662 թ. կառուցված նախկին շենքը և 1663 թ. Բնիձորի Մեծ վանքի գլխավոր եկեղեցին (այս մասին տե՛ս նաև «Թբիլիսիի Սբ. Նշան Սբ. Նիկողայոսի եկեղեցի», Երևան, 2012):

16 **ԳագոՄոյց Գ., Ինճեղաձե Ե.**, նշվ. աշխ., էջ 27:



Խնդրո առարկա աշխատության մեջ ներկայացված հաջորդ վիմագիրը Բոլնիսի շրջանի Դարպաս գյուղի Սք. Սարգիս եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորին 4 տողով փորագրված 1237 թ. շինարարական արձանագրությունն է, որը հեղինակների թեթև ձեռքով ԺԳ դարից հասել է ԺԹ դար և մատուցվել իբր 1857 թ. արձանագրություն¹⁷:

Ահա այն, ինչ կարողացել են «վերծանել» և հրատարակել իրականում դյուրընթեռնելի վիմագրից.

Ի ք(վ)ի(ն) ՈՉԶ¹⁸ (1306=1857) կամանն ա(ստուծո)յ եղբարքս Գրիգոր, Բարսեղ եւ Ծերիկ ի հայալ /

(...) մերոյ: Շինեցաք զեկեղեցիս յիշատակ մեզ եւ ծնողա(ց) եզակայ եւ (...) ժառանգութի(ւն)ս որք / վ պ ա ս ր ն ե ո ր ե ն ա ք հ ա ց ե ս զմեզ ի / ազ (...) ի հեների (...)

Երբ նվազագույնս գոնե հարկ էր իմանալ, որ հարյուրավորի կողքին ևս մեկ հարյուրավոր լինել չէր կարող և կամ գուցե այս «սխալի» հիմքում պարզապես իր գործն է արել միջնադարյան եկեղեցին ԺԹ դարի կես հասցնելու բուն ցանկությունը...: Իսկ այդ միտումը, որը կարմիր թելի մման ձգվում է ողջ շարադրանքում, ակներև է մաև հենց հաջորդ հուշարձանը ներկայացնող ստահող հետևյալ հայտարարության մեջ. «Եկեղեցին կառուցելու գաղափարը առաջացել է մոտավորապես Թեմուրլենկի ներխուժման ժամանակ, որն այդ տարածքը դատարկել էր վրացիներից և 15-րդ դարում անցավ հայերին: Ալեքսանդր I Մեծի (1412-1442) ժամանակաշրջանում Բվեմո Քարթլին վերաբնակեցվեց գաղթած հայերով (Չափայիշվիլի, 1982, էջ 259), ինչպես երևում է, հենց այս ժամանակաշրջանում է Դարբազի եկեղեցին պատկանել հայերին» (Չափայիշվիլի, 1982, էջ 259), ինչպես երևում է, հենց այս ժամանակաշրջանում է Դարբազի եկեղեցին պատկանել հայերին» (Չափայիշվիլի, 1982, էջ 259), ինչպես երևում է, հենց այս ժամանակաշրջանում է Դարբազի եկեղեցին պատկանել հայերին» (Չափայիշվիլի, 1982, էջ 259): Ահա թե ինչով են զբաղված գիտական կոչումներով պնդված մեր պրոֆեսորական խմբագրակազմ ունեցող հեղինակները. մախ 1237 թ. եկեղեցին ներկայացնել իբրև 1857 թ. կառույց, ապա հայտարարել, թե հայերն այստեղ հայտնվեցին Լենինքեմուրի արշավանքից հետո, որտեղ մինչ այդ իբր միայն վրացիներ էին բնակվում: Դե ինչ, մեզ մնում է թերևս միայն բացականել, խեղճ պատմագիտություն, եթե սրանք են քո սպասավորները...

17 Այստեղ արդեն ցավալիորեն ի հայտ է գալիս ինչպես գրքի համահեղինակ հայագետ Նաթիա Չանթլաձեի, որն այս աշխատության մեջ ներկայացված վիմագրերի վերծանությունների անմիջական պատասխանատուն է, այնպես էլ գրքի հայագետ պրոֆեսոր-խմբագիրների՝ հայերեն վիմագրեր վերծանելու ոլորտում ծայրահեղ ցածր մակարդակը, քանի որ «գիտնականների այս խմբին» վիմագրի գրչագրական առանձնահատկությունները ոչինչ չեն հուշել, և թույլ են տրվել տարրական սխալներ թվականի վերծանման խնդրում:

18 Չափայիշվիլի, 1982, էջ 28: Դժվար է հասկանալ, թե ինչպես կարող էր հայերեն վիմագրեր վերծանելու բնագավառում թեկուզ և փոքր-ինչ հմտություն ունեցող հայագետը ՈՉԶ (687+551=1237) տարեթիվը կարդալ ՈՉԶ,


Իրականում արձանագրված է հետևյալը.

Ի թի(ւն) ՈՉՁ (1237) կաման ա(ստուծոյ), էս-բարքս՝ Գրիգոր, Բարսեղ եւ Ծերիկ, ի հալալ | յնչից ի մերոց շինեցաք զեկեղեցիս յիշատակ մեզ եւ ծնողաց եւ զաւակաց | մերոց ժառանգութի(ւ)ն, որք սպասատրեն, յիշեսցեն զմեզ ի ձեռն ս(ուր)բ պատ(ար)ագ(ին եւ որք) յիշեն, եղիցին յիշել ի տ(եառ)նէ, ամէն:

Վիճագրական հաջորդ երկու հուշարձանները (1461 և 1643 թթ.), որոնք ներկայացված են քննության ենթակա աշխատության մեջ, Ամեպեսարի Սբ. Աստվածածնա անապատից են (Դարպաս գյուղից 1 կմ հարավ):

Առաջինն անապատի եկեղեցու նորոգության մասին է, որը 4 տողով փորագրված է հարավային որմի երեսապատի քարերից մեկին.

Կամաւ ամենակային ա(ստուծոյ) ես՝ Բարսեղ եպիսկ(ոս)ոս, որդի պար(ոն) Վասակին, նորոգեցի Ս(ուր)բ | Ամէպէսարի անայպատ Ս(ուր)բ Ա(ս-



տուա)ծածին, ով խաբանէ, իմ մեղացս տ(է)ր է առաջի ա(ստուծոյ), թվի(ն) ՁԺ (1461), դատի ի տ(եառ)նէ:

Իսկ թե ինչ են կարողացել հասկանալ մեր հեղինակներն այս արձանագրությունից (նշվ. աշխ., էջ 31), կարելի է տեսնել ստորև.

Կամաւ ամենա(յ)նի ա(ստուծոյ) ես Բարսեղ եպիսկոպոս | որդի պար(ոն) Վասակին նորոգեցի | ս(ր)բաւպէս ամիանայպար(տ) ս(ուր)բ Ա(ստուա)ծածին ովն խաբէ | մեղացս տ(է)ր է առաջի ա(ստուծոյ) թ(ի)վ ՁԺԴ (1465) ս(ուր)բ է ի տ(եառ)նէ:

Ինչպես տեսնում ենք, բացի մանր վրիպումներից, խնդրո առարկա աշխատության հեղինակները չեն կարողացել զատորոշել հոգևոր կենտրոնի անունը, որն իր տեսակով եղել է ոչ թե վանք, այլ անապատ, ու նաև դատի բառի առաջին դ տառն իբրև միավոր միացրել են թվականին և սխալվել տարերվի վերձանության մեջ: Ընդ որում, այստեղ խնդիր բնավ էլ այն չէ, որ սխալ վերձանության հետևանքով կառույցն ասենք մի չորս տարով նորացվել է (քանի որ սա ի՞նչ է նախորդ եկեղեցու համեմատ, երբ կառույցը նորացվել էր ուղիղ 620 տարով), այլ այն, որ հայերեն վիճագրերի վերձանությամբ զբաղվող մասնագետը նույնիսկ տեղյակ չէ, որ թվային համարժեք հանդիսացող տառերը մշտապես գրվում են առանձին-առանձին և հարևան բառերին ոչ մի դեպքում չեն կցագրվում¹⁹:

Հաջորդ արձանագրությունը նույն հնավայրից է: Այն անապատի շրջապարսպի մեջ դեռևս նախնական տեղում պահպանված գեղաքանդակ մի խաչքար է, որ կերտվել է 1643 թ. և ունի 4 տող արձանագրություն: Աշխատության հեղինակներն այն այսպես են վերձանել²⁰.

Ի թուին ՌՂԲ ես Սա... պոսն... ս(ուր)բ խաչս (կան)գնեց ի Դարպաս այգին եւ ... ս(ուր)բ Ա(ստուա)ծածին վախմ վասն փրկութե(ան) հոգոյ իմոյ | Սուրբ նշան տերունական | Գաբրիէլ...:

Իրականում արձանագրված է հետևյալը.

Ի թուի(ն) ՌՂԲ (1643), ես՝ Սարգիս եպիսկոպոս, կա(ն)գնեցի ս(ուր)բ խաչս եւ գնեցի Դարպասի այգին եւ Տաշտաձոր :Բ: (2) հող եւ ետու Սանահնու Ս(ուր)բ Ա(ստուա)ծածին վախմ վասն | փրկութե(ան) հոգոյ իմոյ: | Ս(ուր)բ նշան տերունական, | Գաբրիէլ, Միգայէլ, | կազմող Ս...:

19 Ցանկանում ենք ընդգծել, որ սրանով մենք բնավ էլ այն կարծիքին չենք, թե մասնագետը սխալվելու իրավունք չունի: Պարզապես խնդրո առարկա աշխատության մեջ, որում ստորև դեռ ավելի ենք համոզվելու, գոնե մեկ անթերի վերձանված արձանագրություն չկա, իսկ այդ անպատվաբեր վիճակից, այնուամենայնիվ, կարելի էր խուսափել, եթե հեղինակները ստանձնած աշխատանքն իրականացնեին բավարար պատասխանատվությամբ: Վերջիվերջո, եթե նույնիսկ վրաց հայագետների շրջանում հայերեն վիճագրեր վերձանելու բավարար փորձառություն ունեցող մասնագետ չի գտնվել, ապա անվերապահորեն և ամենայն պատրաստակամությամբ կազակցեին ոլորտի հայ մասնագետները: Ի դեպ, տարիներ առաջ, երբ հրատարակության էինք պատրաստում «Ջավախք» աշխատությունը, հակառակ գործին մասնակից Ալ. Քանանյանի՝ մասնագիտական միանգամայն բավարար կարողություններին, մենք, այնուամենայնիվ, որոշեցինք դիմել նաև վրացերեն վիճագրերը վերձանելու փորձառություն ունեցող վրացագրի վիճագրագետ Վալերի Միլոզավային, որը սիրահոծար խմբագրեց հրատարակության այդ բաժինը:

20 Գաբրիէլ Միգայէլ, հանձնաձեռ. Ե., նշվ. աշխ., էջ 32:




Հաջորդ արձանագրությունը (քառատող), որի սխալաշատ վերձանությունը նույնպես տեղ է գտել աշխատության²¹ մեջ, պատկանում է Բոլնիսի շրջանի Փոլադաուրի գյուղից հարավ-արևելք գտնվող Կիրակոսի գյուղատեղի (նաև՝ Փորփորթ)



Կիրակոսի գյուղատեղիի եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից

անվամբ հայտնի հնավայրի եկեղեցուն: Այն զետեղված է կառույցի արևմտյան ճակատից բացված միակ մուտքի բարավորին և ավանդում է, որ 1539 թ. ուն Սերոբ երեցն իրականացրել է հնամենի եկեղեցու հերթական (բնագրում՝ վերստին) նորոգությունը:



21 Նշվ. աշխ., էջ 49:

Մատնանշվող հրատարակության հեղինակները ոչ միայն չեն կարողացել ընթերցել հոգևորականի անունը, այլև անտեսելով միավորը՝ սխալվել են նաև տարեթվի խնդրում և 1539-ի փոխարեն ստացել են 1531: Ստորև ներկայացվում է արձանագրության իրական վերծանությունը.

Թվի(ն) ԶԶԸ, յանուն յա(ստուծոյ) ես՝ Մերոբ էրեց, վերստին / նոր(ոգ)եցի եկեղեցիս եւ / կանգնեցի զխաչս:

Հետաքրքիր է, թե վերոնշյալ տողերի հեղինակները, որոնք «վրացի մոնոֆիզիտ» պիտակված հայերի գոյությունն այս գյուղում մեծահոգաբար արտոնել են գոնե ԺԸ դարի համար, և որից առաջ ակնարկվում է գյուղի՝ իբր վրացաբնակ լինելը, ի՞նչնոր հեքիաթներ կհորինեին, եթե եկեղեցու որմերը մի փոքր ավելի ուշադիր զննելով՝ նկատեին նվիրատվական խաչաքանդակներին կից միմիայն հայերենով փորագրված բազմաթիվ արձանագրություն-



Մաշավերա (Գորնջուկ) գյուղի Սբ. Գևորգ եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից

Գմանիսի շրջանի՝ ցարդ գոտ հայաբնակ Մաշավերա (պատմ.՝ Գորնջուկ) գյուղի Սբ. Գևորգ եկեղեցու առթիվ էլ հեղինակները նշել են. «Սբ. Գիորգի եկեղեցու ներքին շերտը ենթադրաբար զարգացած միջնադարի ժամանակաշրջանին է պատկանում: 18-րդ դարում այստեղ բնակված վրացի մոնոֆիզիտները եկեղեցին վերանորոգել են, որի ընթացքում գործածվել են վրացական հին եկեղեցու քարերը»²²:

ները (թվակիրները՝ 1510, 1514, 1520, 1533), կամ էլ եթե չզլանային և մի փոքր ծանոթանային եկեղեցու հյուսիսարևմտյան կողմում տարածված գյուղի միջնադարյան գերեզմանոցին, որտեղ կարելի է հանդիպել ինչպես ԺԵ-Ի դարերի բազմաթիվ տապանաքարերի (մինչև 1920-ական թթ. տապանագրերը արձանագրված են միայն հայերենով. մեկը՝ 1659 թ.-ից է), այնպես էլ բազմաթիվ խաչքարերի պատվանդանների (խաչքարերի մի մասը թերևս գործածվել է եկեղեցու վերջին՝ հավանաբար ԺԸ դարի սկզբներին իրականացված վերակառուցման

22 Նշվ. աշխ., էջ 60:



Մաշավերա (Պորնջուկ) գյուղի Սբ. Չևորգ եկեղեցու բեմառաջին ագուցված խաչքարերն ու դրանց բեկորներն իրենց տեղում (լուս.՝ Ս. Դարչինյանի, 1976 թ.) և խորանը քանդել-հողին հավասարեցնելուց հետո՝ դուրս թափված (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2007 թ.)

Ժամանակ, որոնք 1999 թ.՝ եկեղեցու հայկականության էական հատկանիշներից մեկը՝ բարձր խորանը քանդելու ժամանակ, դուրս են թափվել):

Հաջորդ արտառոց «վերձանությունը», որը քննվող աշխատության հեղինակների կամոք Ժ դարից տեղափոխվել ու հասել է ԺԷ դար և էլ ավելի ստույգ՝ կնքվել իբր 1621 թ. հուշարձան²³, Սամշվիղեի (Շամշուղե) հայտնի խաչակոթողն է, որի համբավը՝ որպես սրբատեղի, այնքան մեծ է եղել, որ ԺԸ դարում նույնիսկ վրան Մք. Աստվածածնի անվամբ օծված մի փոքրիկ եկեղեցի է կառուցվել:

Հարկ է նշել, որ խաչակոթողի արձանագրության վերձանման ուղղությամբ, սկսած ԺԹ դարի կեսերից, բազմաթիվ փորձեր են արվել, սակայն հեղինակներից և ոչ մեկին (Մ. Բրոսսե, Ս. Ջալալխանց, Ա. Արարատյանց, Ս. Քամայանց, Լ. Մելիքսեթ-Բեկ)²⁴, այնուամենայնիվ, այդպես էլ չի հաջող-

վել ճշգրտիվ վերձանել այնքան ուշագրավ արձանագրությունը, բայց, դրանով հանդերձ, նրանցից յուրաքանչյուրը, ինչպես ցույց են տալիս հրապարակված նյութերը, ցուցաբերել է մասնագիտական որոշակի իմացություն և հմտություն: Նրանցից ոչ մեկը չի սխալվել այն չափով, որչափ քննվող աշխատության հեղինակային խումբն իրենց կոչումավոր խմբագիրներով հանդերձ: Ընդ որում, սխալանքի չափն այստեղ այնպիսի սահմաններ է հատում, որ սկամայից ստիպված ես ներկայացված «վերձանությունը» կրկին վերագրել ոչ այնքան ոլորտում գիտնականների փորձառության պակասին, որքան գիտության հետ որևէ առնչություն չունեցող առաջադրված քաղաքական խնդիրներին հագուրդ տալու ցանկությանը, այն է՝ ներկայիս Վրաստանի Հանրապետության կազմում գտնվող Պատմական Հայաստանի Գուգարք նահանգի գավառների տարածքում պահպանված միջնադարյան և էլ առավել



23 Նշվ. աշխ., էջ 74-75:

24 “Кавказ”, 1854, № 69, էջ 275: **Ջալալխանց Ս.**, Բ, էջ 79: «Մեղու Հայաստանի», 1874, № 22, էջ 3: «Արձագանք», 1884, № 41, էջ 601: **Ձեզոյսեղ-Նեցի լ.**, *მეგობრობის კულტურის საქართველოში, თბილისი, 1938*, էջ 91:

վաղմիջնադարյան հուշարձանները «գիտական» քողի ներքո տարբեր հնարանքներով ներկայացնել որպես ուշմիջնադարյան կամ էլ նույնիսկ իբրև ԺԹ դարում ստեղծված (օրինակ՝ Դարպասի Մք. Սարգիս եկեղեցու 1237 թ. շինարարական արձանա-

գրությունը, որը ներկայացվել է որպես 1857 թ. վիճակագրական մշակույթի արժեքներ, զուգահեռաբար անվերջ շեշտելի ավելի հին բոլոր հուշարձանների վրացական ծագումը, իսկ հայկականությունը հանդուրժելու մասնավոր դեպքերում գոնե վերագրել նորահնար «վրացի մոնոֆիզիտներին»:

Ինչ վերաբերում է խնդրո առարկա արձանագրությանը, ապա այն ներկայացվել է հետևյալ կերպ.

Թ(իվն) Ռ-Հ (1621) սուրբ խաչս / նճ (նուսճող?) / տր Յս Քս ան / մեր եւ յոժէ / զՎարդ զարարող խաչիս յիշեսջիք / եւ զ(ե)ղբայրն / ին զճառալին Ք(րիստոս)ի, խաչ Ք(րիստոս)ի է / փրկող սմբատայ իշխանաց / իշխանի:

Այստեղ ցանկանում ենք նշել, որ տվյալ պարագայում, ելնելով ինչպես խաչակրթողի ոճական-գեղարվեստական, այնպես էլ արձանագրության բացառիկ արժեքից, ստորև ճիշտ չենք գտնում բավարարվել՝ սոսկ ներկայացնելով արձանագրության վերծանության շտկված տարբերակը: Հարկ է խոստովանել, որ այն առանց հատուկ ճիգերի ճշգրտորեն կարող էր վերծանել հայ վիմագրության բնագավառում փոքրիշատե հմտություն ձեռք բերած ցանկացած մասնագետ, մասնավորապես որ վիմագիրը բովանդակում է դասական այն բոլոր օրինակափությունները, որոնք առանձնապես հատկանշական են Թ-ԺԱ դարերով թվագրվող վիմագրական բազմաթիվ հուշարձանների համար, և այս հանգամանքը հավելյալ դյուրություն է հաղորդում սույն վիմագրի վերծանությանը:

Եվ այսպես, Սամշվիլդեի խաչակրթողի արևմտահայաց երեսին 15 տողով արձանագրված է.

ՆԺ (961) թո(ւիմ) հ(այոց), ս(ուր)ք խաչս / տ(ե)ր Յ(խու)ս Ք(րիստո)ս աս(տու)ած / մեր եւ յո(յ)ս է / զՎարդ զարարող խաչիս յիշե(ս)ջիք / եւ զաղբայրն / ին զճառա / Ք(րիստոս)ի: Խաչ Ք(րիստոս)ի է / փրկող Ս(մ)բատայ իշխանաց / իշխանի:

Ինչպես տեսնում ենք, քննվող աշխատության մեջ վիմագրի առաջին երկու տառերի իմաստային նշանակությունը պարզապես արհամարհվել է²⁵, մինչդեռ դրանք հատուկ կետիկներով առանձնացված հենց թվային համարժեք տառերն են և մատնանշում են տարեթիվը (այստեղ հարկ է նշել, որ

25 Երևում է, այս երկու տառերի հարցը հեղինակները շատ հեշտ են լուծել, քանի որ նշել են. «Ինչ վերաբերում է արձանագրության երկրորդ տողի Նճ տառ-թվերին, ապա նրանց իմաստը հասկանալի չէ: Միայն կարող ենք ենթադրել, որ այն կրում է «նվաճող» բառի իմաստը, և ինչ-ինչ պատճառներով արձանագրությունը լիարժեք չէ» (նշվ. աշխ., էջ 76): Հարկ է նշել, որ երևակայական նճ տառերը փորագրված են ոչ թե 2-րդ, այլ հենց առաջին տողում: Բացի այդ՝ նուսճող բառը հապավելու դեպքում առաջադրված տարբերակով որևէ կերպ չէր կարող արձանագրվել, որպիսին էլ բնականաբար ցարդ հայտնի չէ հայ բանասիրությանը:

տասնավորը՝ Ժ-ն, մի փոքր թեքված դիրքով փորագրված լինելու պատճառով նախկին հետազոտողներից ոմանք մնացեցել են Ճ-ի և այդպիսով սխալմամբ վերծանել իբրև 100-ի թվային համարժեք):

Հաջորդ երկու տառերը՝ թո, որոնք, թե՛ վերևում կրճատման նշանով և թե՛ ավարտին զույգ կետով անջատված լինելով, շարադրանքի շարունակությունից պարզապես ներկայացնում են թուին բառի կրճատագիրը: Ի դեպ, նման հապավագիրը հաճախակի է հանդիպում առանձնապես հենց Ժ դարի հայերեն վիմագրերում: Այնուհետև հաջորդը դարձյալ կետով առանձնացված և, ըստ այդմ, նաև կրճատված մի բառ արտահայտող հ տառն է, որը հայոց բառի կրճատ ձևն է և սակավադեպ մուշնեցից չէ:

Եվ որեմն՝ «ՆԺ թո. հ.»-ն ոչ այլինչ է, եթե ոչ «961 (410+551=961) թուին հայոց», իսկ ամեն հայկականը նորացնելու մարմնաջով տառապող մեր հեղինակային խումբն այս ամենից ձևել է «Թ Ռ-Հ» և որից էլ դուրս բերել 1621 թ.:

Բայց վիմագիրը 660 տարով նորացնելը միակ զավեշտալի դրվագը չէ այս արձանագրության վերծանության ողիսականում: Բանն այն է, որ վերջնամասն էլ ավարտվում է Սմբատ իշխանաց իշխանի²⁶ անվան հիշատակումով: Գոնե սա պետք է սթափեցնեք հայկական հուշարձանների «ուսումնասիրության» գործին լծված մեր վրացի հետազոտողներին, որոնք բնավ չեն անդրադարձել պատմական այն իրողությանը, որ ԺԷ դարում մենք՝ հայերս, ամենաշատն ունեցել ենք գյուղի, քաղաքի կամ գավառի մեկիքներ, որոնց թերևս կարելի էր կոչել նաև իշխաններ, բայց իշխանաց իշխաններ արդեն ԺԳ դարից ի վեր չենք ունեցել:

Վերջում ցանկանում ենք նշել, որ այս խաչակրթողի վրա առկա խաչաքանդակի ոճական-գեղարվեստական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, առանձին վերցրած, ինքնին արդեն իսկ լիուլի հնարավորություն է ընձեռում բավականաչափ որոշակի թվագրելու այլուր իր զուգահեռներն ունեցող հուշարձանը, որն անելու համար էլ, անշուշտ, ինչպես և մնացած դեպքերում, բացի մասնագիտական բավարար հմտությունից ու փորձառությունից (որոնք, ի դեպ, ակնհայտորեն պակասում են մեր հեղինակներին), ոչ պակաս անհրաժեշտ է նաև գիտական բարեխղճություն, որի արտահայտությունը գոնե տվյալ պարագայում ցավալիորեն չի նշմարվում:


26 Արձանագրության տարեթիվը ցարդ ստուգապես վերծանված չլինելու պատճառը, հասկանալի է, մասնագետներին հնարավորություն չի տվել որոշելու, թե որ իշխանաց իշխան Սմբատի մասին է խոսքը, սակայն այժմ, երբ այդ հարցը լուծված է, կարծում ենք, կարելի է հիշատակությունը վերագրել Աշոտ Գ Ռդրմածի որդուն, որը 958 թ.-ից դարձել է հոր գահակիցը և մասնակցել երկրի կառավարմանը, իսկ արդեն 977 թ.-ից գահ բարձրացել որպես Սմբատ Բ Տիեզերակալ թագավոր:

Ի դեպ, Սամշվիլդե քաղաքատեղիում և մանավանդ նրա մերձակա հնավայրերում պահպանվել են միջնադարյան հայերեն բազմաթիվ արձանագրություններ ևս, սակայն պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք ներառված չեն խնդրո առարկա աշխատության մեջ, ուստի և այդ նյութը բողոմում ենք այլ առիթի²⁷:

Ներկայացված հաջորդ կարևոր հնավայրը Բնիձորի Մեծ վանքն է: Այստեղ հարկ է նշել, որ պահպանված վիմագրերն առաջին անգամ ոչ թե 1901 թ. Ե. Լալայանը²⁸, այլ 1884 թ. Ս. Քամալյանն²⁹ է հրատարակել (եթե, իհարկե, զանց առնենք Ս. Ջալալյանցի միայն մեկ արձանագրության թերի հրատարակությունը)³⁰: Ընդ որում, ինչպես ցույց է տալիս երկու հրատարակիչների վերծանությունների համեմատությունը, Ե. Լալայանն առանց սեփական քննության պարզապես վերահրատարակել է Ս. Քամալյանի ընթերցումները՝ այդ մասին պատշաճ մատնանշում չկատարելով:

Գառնալով մեր հեղինակների վերծանություններին՝ պետք է նշենք, որ ընդհանուր առմամբ, թերևս շնորհիվ նախկին հրատարակությունների առկայության, սխալներն այստեղ նկատելիորեն ավելի քիչ են, բայց և այնպես ցանկանում ենք նախ ուշադրություն հրավիրել վանքի գերեզմանոցում առկա երկու տապանագրերին, որոնցից առաջինն է.

Ես ի աս/զէն Ծովանշեցի/ անդին իմ՝ Թ՛լամագ կ/ռչի, որ | շինեց/ի ս(ուր)բ եկ/եղեցի/ս յիշ(ա)տակ ինձ եւ | ծնող/աց իմոց, իսկ երկրորդը՝ Այս է տապան Ասլամազի որդի Արթանդիին, | որ ի ազգէն Ծովանշեցի, որ փոխեցաւ առ ա(ստու)ծ, թվին Ռ՛ՃԼԵ (1686): Ինչպես տեսնում ենք, երկու տապանագրերում էլ շեշտված է հանգուցյալների՝ Ծովանշեցի ազգատոհմից լինելը, ընդ որում, հենց այս տոհմից է եղել նաև եկեղեցին կառուցողը (կամ գոնե կառուցողներից մեկը), մինչդեռ մեր հեղինակների մոտ ազգատոհմը վերափոխվել է գավառանվան. «Ես Ծովանշեցի գավառից եմ...»³¹:



Բնիձորի Մեծ վանքի գլխավոր եկեղեցու տեսքը 1900-ական թթ. (լուս.՝ Չայկ Աշտարակեցու) և գլխավոր հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1990 թ.)



27 Սամշվիլդեի հայերեն վիմագրերի ամբողջական հավաքածուին (ինչպես և բազում այլ հնավայրերի վիմագրական հուշարձաններին) կարող եք ծանոթանալ շուտով լույս ընծայվելիք «Վրաստանի հայերեն վիմագրերը» աշխատության մեջ:

28 Լալայան Ե., Բորչալուի գառառ, «Ազգագրական հանդես», գիրք VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 332:

29 Քամալյան Ս., Ճանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», 1884, № 42, էջ 613:

30 Ջալալյանց Ս., նշվ. աշխ., էջ 80:

31 Յաջո՞ժո՞ճ ջ., ԲՆՆՅՆՆՆՆՆՆ Ե., նշվ. աշխ., էջ 87: Հեղինակները, իհարկե, չգիտեն, որ նման գավառ գոյություն չունի, մինչդեռ գյուղատեղի, որը Բնիձորի Մեծ վանքից հազիվ 1 կմ հեռավորության վրա է գտնվում, վկայել է, օրինակ, բավահավաք Սարգիս Քամալյանը. «Դրանց մեջ մեծը, առաջնակարգը, հուժկու գորեղը Ծովանշը կամ Ծովաշենն էր, Խաչիալի կրծքի վրայ բազմած Սիպուսակ շենի և Չորաշենի մեջտեղ, անման դիրքով, փառաւոր նստածքով: Բոլոր գիտերն էլ իրար հետ հանգիստ ու խաղաղ ապրում էին: Ծովաշենի վանքը շինած էր հայոց 1112 թ. (1663 թ.)...»: Նաև՝ «Շով էր այդ ձորը. լիքն էր թե՛ բնակիչներով, թե՛ մրգերով, թե՛ հացահատիկ զանազան տեսակներով, առատ էր ամեն բան, այդ պատճառով էլ Ծովաշեն էր կոչւում» (ԳԱԹ, ց. 2, ք. VI, գ. 12, էջ 2-3):



Բնիճորի Սեճ վանքի գլխավոր եկեղեցու բարավորի և արևային ժամացույցի արձանագրությունները

Ինչ վերաբերում է եկեղեցու բարավորի շինարարական արձանագրության ներքո փորագրված չորս փակագրերին, ապա դրանցից մեկը թեականորեն, իսկ երեքը հաստատապես բացվում են հետևյալ կերպ.

- ա. Կարայայետս³²
- բ. Թամագւ³³
- գ. Նաւայսարթ³⁴
- դ. Թերևս՝ Հագարէ³⁵

Թրիլիսի փոխադրված Բրդաճորի հանրահայտ քառակող կոթողին անդրադարձած հեղինակներն իրենց՝ ըստ էության ոչինչ չասող համառոտ շարադրանքում չեն մոռացել, սակայն, շեշտել հուշարձանի «վրացական ծագումը»³⁶ (երևի սուսկ այն պատճառով, որ գտնվում է ոչ թե, օրինակ, Երևանի, այլ ասենք Թրիլիսիի թանգարաններից մեկում):

32 Վերձանությանը չեն անդրադարձել մասամբ վնասված լինելու պատճառով:
 33 ՅճԳՄՅժճ ճ. ՔճՆՃԼճճ ճ., նշվ. աշխ., էջ 85:
 34 Նշվ. աշխ., էջ 85: Ինչպես Բովմիս-Խաչենում, այստեղ ևս Նավասարդ (Նաւայսարթ) անունը սխալմամբ ներկայացվել է իբրև Նավարայ: Նման անձնանուն պարզապես գոյություն չունի: Մինչդեռ եկեղեցու հարավային ճակատին պահպանված արևային ժամացույցին կից փորագրված արձանագրությունից հայտնի է դառնում, որ այս Նավասարդը եկեղեցու ճարտարապետն է, ընդ որում, ինչպես արդեն նախորդիվ ցույց է տրվել, նաև Հաղպատում (Մք. Նշան, 1655 թ.), Բովմիս-Խաչենում (Մք. Կիրակի, 1656 թ.) և Տփղիսում (Մք. Նշան Մք. Նիկողայոսի, 1662 թ.) կառուցված կամ նորոգված եկեղեցիների հեղինակը:
 35 Այս փակագիրը վերձանել են իբրև Հագաւէտ (նշվ. աշխ., էջ 85): Այստեղ թեականորեն առաջարկում ենք Հագարէ տարբերակը և նշում, որ Հագաւէտ անձնանուն պարզապես չկա:
 36 Նշվ. աշխ., էջ 90-91:



Շահումյան (Մեծ Շուլավեր, պատմական Շղվեր) ավանում էլ գերեզմանոցի ԺԸ դարին պատկանող տապանագրերը չնկատելով՝ փորձել են ներկայացնել միայն մեկը (ԺԹ դարին վերաբերող), բայց նույնիսկ սա էլ չեն կարողացել անսխալ ընթերցել և 1864 թ. տապանատան արձանագրությունը հնացրել են 60 տարով (թերևս ԺԹ դարի մեջ հուշարձանի մման հնացումը թույլատրելի սահմանի մեջ է) և ազնվականի տիտղոսից գրկել մատուռն կառուցողին: Փոխանակ ընթերցելու՝ Այս մատուռն պատկանի կառն... պրասպորչիկ ազնիս Գրիգոր պեգ Քալանթարովին, 1864, յունվարի 10, ընթերցել են՝ Այս մատուռը պատ...նի կառ... ք ...պրասպորչիկ ... Գրիգոր պեգ Քալանթարովին, 1804, յունվարի 10³⁷:



Ավելացնենք նաև, որ սա, ի թիվս գերեզմանոցից հավաքված 44 միավոր արձանագրությունների, տարիներ առաջ արդեն հրապարակված է եղել³⁸, որին անտեղյակ մեր հեղինակները սխալներից խուսափել չեն կարողացել:

Ինչ վերաբերում է Գորել քաղաքատեղիի հայկական երկու եկեղեցիներից մեկի՝ արդեն 1990 թ. անհետացված շինարարական արձանագրությանը (1615 թ.), որը, ըստ մեր հեղինակների, գտնվելիս է եղել «վրացական եկեղեցում», ապա նրանում



Գորել քաղաքատեղիի եկեղեցիներից մեկի 1615 թ. շինարարական արձանագրությունը (ուս.՝ Ս. Դարչինյանի, 1976 թ.) և զրչանկարը

37 Նշվ. աշխ., էջ 95:

38 Ապանյան Ս., Կարապետյան Ս., Շուլավեր, Երևան, 2002, էջ 47:

նշված անձերի վերաբերյալ գրավոր այլ հիշատակություններ չգտնելու պատճառով վերջինս որակվել է իբրև կեղծ արձանագրություն. «Դ. Մոսխեղիշվիլու կարծիքով, արձանագրության մեջ հիշատակված հայ մեկիք Աթաբեկը հայտնի է Հովսեփ Թրիլելու «Գիղմուրավիտ»-ից, բայց անհասկանալի է մնում, թե ով է Միրիման Բաղդադ խանը, և առհասարակ նման ընտանիքի հետքը ոչ արձանագրության վայրում, ոչ էլ Հայաստանի տարածքում չի մնացել: Այս պատճառով էլ արձանագրությունը մեզ կեղծ է թվում, և անհասկանալի է, թե ով է այն ստեղծել և ինչպես է այն հայտնվել Գորուլիում»³⁹:

Ինչ վերաբերում է զուտ վերծանությանը, ապա այստեղ հեղինակներն աղավաղել են որոշ անձնանուններ, քանի որ իրականը հետևյալն է.

Թ(վին) Ռ-ԿԴ (1615). ես՝ պ(ա)ր(ոն) Մամքան/ս⁴⁰, շինեցի ս(ուր)ք եկ(ե)ղ(ե)ցիս | վ(ա)ս(ն) փրկութի(ն) հ(ո)գոյ իմոյ, | ունէի Ջ (6) որդի, մեծն՝ պ(ա)ր(ոն) Աթաբեկ⁴¹, որ երկրիս մեկիք էր, Միրիման՝ Բաղդատ խան էր, Ասլան զ/ազումն, պ(ա)ր(ոն) Մանթաշ⁴², Քանալզ⁴³:

Բնիձորի Փոքր վանքի գերեզմանոցից 1988 թ. Շահումյան (Մեծ Շուլավեր) ավանի Սր. Աստվածածին եկեղեցի փոխադրված գեղաքանդակ խաչքարի եռատող արձանագրությունից⁴⁴ էլ միայն ա-



Խաչքար, 1651 թ., Բնիձորի Փոքր վանքի գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

39 Նշվ. աշխ., էջ 97: Ի դեպ, այս անտրամաբանական «տրամաբանությամբ» ինչպես հայ, այնպես էլ վրաց վիճագրական ժառանգության մի նշանակալի մասը կարելի է կեղծ համարել, քանի որ պատմական շատ անցքերի կամ անձերի մասին դրանք մնում են որպես եզակի աղբյուր:

40 Զննվող հրատարակության մեջ սխալմամբ՝ Մավքասու (էջ 96): Ընդհանրապես Մամքան-ը հայտնի է որպես իգական անձնանուն: Տվյալ դեպքում մենք գործ ունենք կամ անձնանվան մաս արական սեռին տրված, կամ պարոն մեծարման արտահայտչամիջոցի՝ կնոջը տրված դեպքի հետ, որպիսիք, ի դեպ, լայնորեն տարածված են եղել Նոր Ջուղայի հայերի շրջանում:

41 Թերևս խոսքը վերաբերում է Դավրիժեցու նշած հայտնի Սոմխիթի իշխան Աթաբեկին, որի պարսից գերության մեջ գտնվող մի եղբայրը մահմեդականացել էր և անվանափոխվել Թահմազդուլի. «...եղբայր Աթաբեկ իշխանին Սոմխեթում որում անունն էր Թահմազդուլի» (Առաքել Գարիժեցի, Գիրք պատմութեանց, Երևան, 1990, էջ 61):

42 Պարոն Մանթաշը հիշվում է մաս մերձակա Ջարգյար գյուղատեղիի եկեղեցու 1657 թ. շինարարական արձանագրության մեջ:

43 Ամենայն հավանականությամբ, այս տոհմի շառավիղներից էր (հավանաբար թոռը) Վախուշտի Բագրատիոնի «Քարքլի պատմություն» աշխատության մեջ 1687 («...Սոմխիթի մեկիք (էր) Քյամար-բեկը») և 1719 («...Վախտանգ բագավորը կալանավորեց Սոմխիթի մեկիք Քյամար-բեկին, որին հրացանով զնդակահարեց») թթ. հիշատակված Սոմխիթի կառավարիչ Քյամար կամ Քյամար բեկը (Մեկիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., էջ 64-65): Ի դեպ, այս անձնանվան հստակ ընթերցվող սկզբի գոնե չորս տառերի փոխարեն քննվող աշխատության հեղինակները ձևել են անորոշ Զն տառերը:

44 Վիճագրի առաջին հրատարակությունը տես Ասրաբյան Ս., Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 56:

ուաջին տողն է ընթերցվել և նշվել, թե իբր «Խաչքարի վրա տարեթիվը նշված չէ...»⁴⁵:

Ստորև ներկայացնում ենք խաչքարի ամբողջական արձանագրությունը.

Ս(ուր)ք իս(ա)չս բարեխ(ա)ս է Բշենց Խ(ա)չ(ա)տր(ին) | եւ իր կ(ողակ)ցի(ն), | Թ(վին) Ռ-Ճ (1651):

45 Գագո՞ժոճե Գ., Ինճեռլաճե Ե., նշվ. աշխ., էջ 101:



Բնիճորի Փոքր վանքի գերեզմանոցից 1988 թ. Շահումյան (Մեծ Շուլավեր) ավանի Սբ. Աստվածածին եկեղեցի փոխադրված խաչքարը, 1651 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 և 2007 թթ.)

Չարգյար գյուղատեղիի Սբ. Աստվածածին եկեղեցու ինչպես հիմնադրման, այնպես էլ կառույցի ավարտն ազդարարող զույգ արձանագրությունները խնդրո առարկա աշխատության մեջ ներկայացրել են հետևյալ կերպ.

Թվ(ին) Ռ-ճԵ, ես տ(է)ր ...սէնան ... ըսկս(եցի) եկեղեցու⁴⁶:

Իրականում մուտքի կամարածև ճակատին (միատող) և դռան կամարի մեջ (երկտող) արձանագրված է.

46 Նշվ. աշխ., էջ 104:




Ես՝ տ(է)ր Ըս(տ)էփանու⁴⁷, ըսկս(եցի) եկեղեցոյս (շինութիւնը), | թվ(ին) Ռ-ճԵ (1656):

47 Ի դեպ, Չարգյար գյուղատեղիի գերեզմանոցում պահպանվել է տեր Ստեփանոսի կողակցի՝ Թամամի տապանագիրը. Այս է տա/կան Թա/մամին, կող(ա)կ(ց)ին տ(է)ր [տր] Ըստէփանոսին, թվ(ին) Ռ-ճԵ (1671):



Զարգյար գյուղատեղիի Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2012 թ.)



Ի դեպ, ՌՃԵ (1656) թվականը փորագրված է նաև եկեղեցու՝ նույն ճակատից բացված լուսամուտի գլխաքարին, իսկ 6 տողանոց հիմնական արձանագրությունը, որն արդեն ազդարարում է շինության ավարտի տարեթիվը (1657 թ.) և փոխանցում կառուցման բովանդակ պատմությունը, զետեղված է լուսամուտից վեր ագուցված քարին:

Ի թվին ՌՃԶ (1657), ի թագաորութիւն պարսից / Շահապագին, իշխանութիւն Բաք(ր)ատու(ն)(ե)աց Ռոյրստամին, ի հայրապ(ե)տութե(ան)⁴⁸ տ(եառ)ն Յակոբին, առ(ա)ջն(ո)ր(դու)թի(ան) Սարգիս արհեպ(իս)կ(ոսպո)սին, մեք աս է՝ շալեցի Ման-

թա/շրս⁴⁹, Ուլխանըս⁵⁰, Սարգ(ի)ս, Հաթերց, միաբանութ | շինեցինք Ս(ուր)բ Ա(ստուա)ծածինս, յիշատակ ծնողաց եւ որդոց մեր:

Խնդրո առարկա աշխատության մեջ ներկայացված հաջորդ խաչքարի համար էլ շփոթել են հուշարձանի գտնվելու վայրը, քանի որ այն մի քանի այլ խաչքարերի հետ գտնվում է ոչ թե մատանցված եկեղեցում⁵¹, այլ նրանից մոտ 300 մ հեռու՝ մերձարձակներից Աղբենդ կոչված տեղամասում՝ լեռնագագաթին գտնվող մեկ այլ եկեղեցում:

Հաջորդ հնավայրը, որը ՀՀ Լոռու մարզում գտնվելու պատճառով արդեն իսկ չէր կարող «Վրաստանի մոնոֆիզիտ հուշարձանները» վերնագիրը կրող աշխատության մեջ ընդգրկված լինել⁵², գտնվում է Ջիլիզ գյուղի տեղամասերից մեկում՝ Խնձորեքս գյուղատեղիում: Այստեղ կիսավեր

49-50 Շալուկի որդիներ Մանթաշը և Ուլխանն ամփոփված են Զարգյար գյուղատեղիի գերեզմանոցում: Նրանց շիրմաքարերն ունեն հետևյալ տապանագրերը.

Այս է տապան Շալուկի որդի պարոն Մանթաշ(ին)...: Այս է տապան Շալուկի որդի պարոն Ուլխան(ին), թվ(ին) ՌՃԻԹ (1680):

51 Նշվ. աշխ., էջ 107:

52 Կամ գոնե գրքի վերնագիրն այլ ձևակերպում պետք է ունենար:

48 Ի հայրապետության նույնն է, թե՛ ի կաթողիկոսության, ուստի սխալ են թարգմանել «պատրիարքության» (նշվ. աշխ., էջ 103):



Աղքենո գյուղատեղիի միանավ եկեղեցին հարավ-արևելքից և խնդրո առարկա խաչքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1992 թ.)

դրությամբ պահպանվել է միմյանց կից գույգ եկեղեցիներից և օժանդակ կառույցների մնացորդներից բաղկացած Շիկերո Սբ. Սարգիս վանքը:

Բնավող աշխատության հեղինակներն այստեղ անտես են արել եկեղեցու շինարարական արձանագրությունից ավելի վաղ թվագրված նվիրատվական կարևոր մի արձանագրություն ևս (թեև փաստել են նրա գոյությունը)⁵³, որը 6 տողով փորագրված է 44 x 38 սմ չափի երեսապատի՝ վայր ընկած սրբատաշ քարին:


Կամաւ բարերարին. ես՝ / Բախտատրս, միաբան (նե)ցա ս(ուր)ք ուխտիս եւ ետուն ինձ ժամ զՆոր Կիրակէն, ով խափ(ան)է, նզ(ովեալ եղիցի), ՈԾԷ (1208):

Ինչ վերաբերում է վանքի Սբ. Սարգիս եկեղեցու բարավորին (քարի չափերը՝ 200 x 75 սմ) 9 տողով փորագրված և բովանդակությամբ երկու մասի բաժանվող արձանագրությանը, ապա գրեթե անսխալ վերծանելով հանդերձ՝ չի ընկալվել վանքի անունը, որի հետևանքով էլ նյութն անտեղի ծանրաբեռնել են «գիտականաման» մտորումներով:

րոյս ընձախք առաջնորդու/թ(եամ)ք Սարկաւագ վարդապետի եւ այլ եղբարցս եւ ետուն ինձ ժամ / զեկեղեցիքս Համբարձման, արդ ով խափանէ, նզոված է:

Ինչ վերաբերում է Խոժոռնու Սբ. Նշան եկեղեցուն, ապա այստեղ ևս ողջ «ուսումնասիրությունը», ըստ էության, արվել է աշխատության բազմաթիվ էջերում կրկնված, բայց ավելի ճիշտ արդեն մի լավ ծեծված եզրակացության համար, այն է. «...ինչպես Խոժոռնին, այնպես էլ նրա շրջակայքը խիտ բնակեցված են եղել վրացիներով»⁵⁴:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ ենք համարում շեշտել, որ նույնիսկ այս հպանցիկ քննությանը խնդրո առարկա աշխատության մեջ փաստորեն ի հայտ բերվեց գիտական աշխատություններին պարզապես անհարիր սխալների և վրիպումների աներևակայելի քանակություն: Սակայն էլ առավել ցավալի է, որ կատարված աշխատանքի արժեքն ուղղակիորեն նսեմացնում են հեղինակների սահմանափակ և կանխակալ միտումներին գերի դատողություններն ու եզրակացությունները, որոնց



Ի թվի(ն) ՈԿԲ(1213) յանուն ա(ստուծո)յ որդիքս Քարթելին՝ Գրիգոր ու Սարգիս, / միաբանեցաք ս(ուր)ք ուխտիս Սուրբ Սարգսի, սպարապետութե(ա)ն/ հա(յ)ոց Շահնշահի որդո Ջաքարե(ի), առաջնորդութե(ամ)ք Սարկաւագ վարդապետի շինեցաք զեկեղեցիս եւ ետուն մեզ ժամ սուրբ Խաչատու(տու)ր(ի), / զեկեղեցիքս :Բ:(2)՝ ինձ՝ Սարգսի, :Բ:(2)՝ Գրիգորո, :Բ:(2)՝ աղբե(ոց...):

Յանուն ա(ստուծո)յ ես՝ Դեդո Քառաշանց, որդի Հադսանայ, միաբանեցա ս(ուր)ք ուխտիս Շիկե-

հիմքում կարևորվել է ոչ թե գիտական նորմերի համեմատ նյութական մշակույթի հուշարձանների համակողմանի ուսումնասիրությունը, այլ որդեգրվել է որոշակի տարածաշրջանի «բաղձալի վրացականությունը» իբր «գիտական ուսումնասիրություններով» մի կերպ փաստելու ցավալիորեն արդեն նորույթ չպարունակող և չզարմացնող հակագիտական անպտուղ գործելաոճը:

53 Նշվ. աշխ., էջ 122:

54 Նշվ. աշխ., էջ 130:


ՀՃՈՒ ՆՈՐ ՆԱԽԱԳԹԵՐ

2015 թ. Մեծ եղեռնի ոգեկոչման 100 տարին բոլորելու կապակցությամբ հիմնադրամը նախատեսում է ամբողջացնել տասնամյակների ընթացքում իրականացված տարաբնույթ ուսումնասիրական աշխատանքները և Արևմտյան Հայաստանի շուրջ 70 գավառները ներկայացնել 36 հատորներով: Մատենաշար, որ կխորհրդանշի մեր հարգանքի տուրքն ու խոնարհումն անմեղ զոհերի հիշատակին:




Ընթացքի մեջ են նաև Արցախի բնակավայրերի պատմությունը և նյութական մշակույթի հուշարձանները ներկայացնող բազմահատորյակի նախահրատարակչական աշխատանքները:

ԵՂԵՐԱՆՔԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՆԱԽԻՉԵՎԱՆ
ՔԱՐԿՆԵՉՍԳԻՐՔ



ՎԱԿԵՆՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅ

ԹԵՐԻՆՍԻ
ՄԲ. ՆՇԱՆ
ՄԲ. ՆԻԿՈՂԱՅՈՍԻ
ԵԿԵՂԵՇԻ

ՀՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Բոստոնի Հայ մշակութային հիմնարկության տնօրեն պ. Արա Ղազարյանին՝ հիմնադրամի գրադարանին հայագիտական հարուստ գրականություն նվիրելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում պ. Հովան Սիմոնյանին՝ հիմնադրամի գործունեությանն աջակցելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում պ. Զավեն Սարգսյանին՝ Իրինա Գայուկի "Иллюстрированная энциклопедия Армянской культуры в Украине" ստվարածավալ հատորը հիմնադրամի գրադարանին նվիրելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում «Արամազդ», «Պատմաբանասիրական» և «Անիվ» հանդեսների խմբագրություններին՝ յուրաքանչյուր նոր հրատարակված համարներից ՀՃՈՒ գրադարանին նվիրելու համար:



Հովատսպուր
ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԿԱԿԱՆ
ԵՆՐՏԱՐԱԹՅՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ
ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON
ARMENIAN
ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2012

